ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(80-րդ տարի) Թիվ-3 (1709) Մարտ 2026

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Պետությունը դուրս բերել անվտանգության ու զարգացման հանգրվան (էջ 1-2)

2 - Աշխարհաքաղաքական

Վահե Դավթյան
Իրանի շուրջ էսկալացիայի գեոտնտեսական չափումը և Հայաստանի ռազմավարական ռիսկերը (էջ 3-9)

3 - Տարածաշրջանային

Նարե Գևորգյան
Իրան-ԱՄՆ-Իսրայել պատերազմը և Հարավային Կովկասի ապագան (էջ 10-12)

Լիանա Պետրոսյան
Իրանի դինաստիական բեկումը. Ալի Խամենեիի սպանությունը և Մոջթաբա Խամենեիի «երկաթե» սերնդի ռազմավարական հայտը (էջ 13-15)

4 - Իրավաքաղաքական

Անի Մելքոնյան
Նոր Սահմանադրությունը սպառնալիք պետականությանը (էջ 16-20)

5 - Հասարակություն

Անժելա Հարությունյան
Գիտակրթական էլիտայի լռեցումը «co-optation of elites» (էջ 21-23)

6 - Հայ Դատ

Մարի Հովհաննիսյան
Շուշիի 1920 թվականի մարտյան եղեռնը (էջ 24-30)

7 - Գաղափարական

Արամ Շահնազարյան
«Ամբոխային տրամաբանության» մոլորությունը և պայքարի անխուսափելիությունը (էջ 31-33)

8 - Դաշնակցական բեմ

Սուսաննա Ադամյան
Աղվան Պապյան
ՀՅԴ պատմության թանգարան հիմնադրամի հավաքածուն (էջ 34-37)

9 - Դեմքեր և դեպքեր

Համաստեղ
Հաւատավորը՝ Վահան Նաւասարդեան (էջ 38-39)

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Յանձնառու հայ քաղաքացին (էջ 40-43)

10 - Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Միշտ հաւատարիմ մնալ (էջ 44)

Պետությունը դուրս բերել անվտանգության ու զարգացման հանգրվան

2026 թ. մարտի 16-ին Երևանում, պաշտոնական միջոցառմամբ ազդարարվեց նոր նախընտրական դաշինքի ձևավորման մասին՝ ի դեմս Հայ Յեղափոխական Դաշնակցություն և Առաջ կուսակցությունների: Միաժամանակ Դաշինքն առաջիկա խորհրդարանական ընտրություններում վարչապետի թեկնածու ներկայացրեց Ռոբերտ Քոչարյանին: Առաջ կուսակցությունը քաղաքական դաշտում իր կարևոր քննությունը հանձնեց 2025 թվականին Վաղարշապատում տեղի ունեցած Ավագանու ընտրություններում: Երիտասարդ և ազգային դիմագիծ ունեցող այս կուսակցությունը տվյալ ընտրությունների ժամանակ Վաղարշապատ քաղաքում հաղթեց ՔՊ-ից առաջադրված հիմնական թեկնածուին, սակայն ընտրատարածքի մասշտաբով պարտվեց իշխանական թիմի կողմից ընտրատարածքի վերաձևման և այլ բնույթի նախընտրական ձեռնածություններին: Այսօր արդեն այս կուսակցությունը Հանրապետության մասշտաբով քաղաքական կյանքում գործոն դառնալու հայտ է ներկայացնում:

Ինչ վերաբերում է Հայ Յեղափոխական Դաշնակցությանը, ապա տվյալ դաշինքին մաս կազմելու համար տրամաբանական հիմք է ՀՅԴ-ի և Ռոբերտ Քոչարյանի ու նրա թիմի հաջող համագործակցությունը եզրափակմանը մոտեցող Ազգային ժողովի գումարման շրջանակում: Եթե ավելի ետ գնանք հիշելով 2003-2008 թվականներին նախագահ Քոչարյանի և ՀՅ Դաշնակցության կոալիցիոն համագործակցությունը, կարող ենք վստահաբար ասել, որ առկա է արդյունավետ և փորձություն անցած գործակցության փաստը:

Դատելով մարտի 16-ի միջոցառման ժամանակ ներկայացված մոտեցումներից, ինչպես և ծրագրային բանաձևումներից՝ հաղթանակի դեպքում այս Դաշինքի գործունեությունն ունենալու է ազգային և սոցիալ-տնտեսական հիմնական ուղղվածություն: Կարծես հայության մեծամասնության համար ըմբռնելի է դառնում, որ առաջիկա հունիսի 6-ին նշանակված քաղաքական միջոցառումը շատ հեռու է իշխանության պարզ ընտրության նպատակից և ունի բախտորոշ նշանակություն՝ ստեղծել հնարավորություն դուրս բերելու պետությունը գահավիժման ընթացքից դեպի զարգացման ու հզորացման մայրուղի կամ թույլ տալ, որ խորանա պետական ինքնիշխանության կորուստն ու թուրք-արևմտյան գաղութացման գործընթացը:

Պետք է հուսալ, որ նախորդող 8-ամյա դաժան դասից հետո ժողովրդի բացարձակ մեծամասնությունը զերծ կմնա 2021 թ. ընտրությունների վրա իշխած կրավորականության, վախի, պատրանքների ու բարդույթների ազդեցությունից և ընտրություն կկատարի առկա ճգնաժամի հաղթահարմանն ուղղված ծրագրային նպատակների, դրանք իրականացնելու ունակ կադրային հնարավորությունների միջև: Մեծ հաշվով

խնդիրն ապազգային ուժին իշխանությունից հեռացնելը և այն իրապես ազգային ու կարող ուժին վստահելն է՝ համապատասխան անձի առաջնորդությամբ: Համապատասխան առաջնորդող անձի առումով, թերևս, յուրաքանչյուր ընտրող պետք է կողմնորոշվի ըստ հետևյալ սկզբունքների՝ ո՞վ է այն գործիչը, որը, ժառանգելով ազգային ու պետական կյանքի այսօրվա ծանր բեռը, կարող է երկիրն անդունդից դուրս բերել՝ քաղաքական - դիվանագիտական, կառավարչական և տնտեսական փորձառության ու կարողությունների շնորհիվ: Ո՞վ է այն մարդը որը կնստի Ալիևի ու Էրդողանի, Պուտինի ու Թրամպի, Իրանի, Եվրամիության ու այլ երկրների առաջնորդների դիմաց և կկարողանա պաշտպանել հայության շահերը՝ ունակ լինելով անհրաժեշտության դեպքում ոչ ասելու և առաջադրելու ազգի ու պետության շահերից բխող առաջարկներ:

Յուրաքանչյուր մարդու համար այլևս ակնհայտ է, որ ժամանակակից աշխարհում անհնար է մատնացույց անել մի անկյուն, որի համար երաշխավորված է մշտական ու կայուն խաղաղությունը: Քաղաքագետ լինել անհրաժեշտ չէ հասկանալու համար, որ եթե հանկարծ հարևան ու բարեկամ Իրանում կայունությունը խաթարվի, պատերազմի հրդեհը կտարածվի տարածաշրջանով մեկ: Իհարկե դրանից անմիջապես կօգտվեն Ադրբեջանն ու Թուրքիան, որոնք կփորձեն ոտքի հանել Իրանի ադրբեջանցիներին, թուլացած Իրանի և դիմադրությունից հրաժարված Հայաստանի հաշվին լուծել տարածքային ու աշխարհատարածքային կարևորագույն խնդիրներ:

Հավերժական խաղաղության մասին Հայաստանի այսօրվա իշխանության դատարկ հավաստիացումներին կանդրադառնանք այլ առիթով, իսկ այժմ ցանկանում ենք արձանագրել, որ մոտ ապագայում Հայաստանը պետք է ունենա այնպիսի ղեկավարություն, որն ունակ կլինի կարճ ժամանակում վերականգնելու հայկական փլուզված բանակը: Ստեղծելու այնպիսի բանակ, որն առանց պատերազմական փոթորիկների մեջ մտնելու իր գոյությամբ կզսպի թշնամիների ագրեսիվ մտադրությունները: Իհարկե, անհրաժեշտ կլինի նաև, որպեսզի փորձառության և

կապերի շնորհիվ նոր ղեկավարությունը կարողանա Հայաստանը ներառել ռազմաքաղաքական իրական և հզոր դաշինքների մեջ: Բազմակողմանի այդպիսի միջոցառումների շնորհիվ միայն Հայաստանը կկարողանա ձեռք բերել կայունության ներուժ ունեցող, երաշխավորված ու արժանապատիվ խաղաղություն:

Գաղտնիք չէ նաև, որ Հայաստանն այսօր միջազգային հարաբերություններում ընկալվում է ոչ թե որպես սուբյեկտ, այլ օբյեկտ, որի հաշվին կարելի է լուծել մասնավոր ու աշխարհաքաղաքական հարցեր: Իր հերթին Հայաստանի ղեկավարությունն այս մեծ առևտրի մեջ ծախում է Հայաստանի շահերը՝ դիմացն ակնկալելով երաշխիքներ սոսկ սեփական իշխանությունը պահպանելու համար: Ճիշտ այս մասին է վկայում նաև Եվրոմիության առաջնորդների ակնարկը Հայաստանում Մոլդովական սցենարը կիրարկելու մասին: Իրենց «ապրանքի» գինը բարձրացնելու համար Հայաստանի իշխանությունները «էստի համեցեք» են ասում եվրոպացիներին, ամերիկացիներին, թուրքերին, ադրբեջանցիներին և ուրիշների:

Հայաստանը ներկայացնելով որպես մրցակցության ու բախման ասպարեզ (ըստ իրենց՝ հիբրիդային պատերազմի ռազմադաշտ) թվարկված երկրների, ինչպես նաև Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի միջև՝ երկրի արկածախնդիր ղեկավարությունը կտրուկ մեծացնում է Հայաստանը մշտական առճակատումների և անկայունության գոտու վերածելու ռիսկը:

Հայաստանում ամենաուշը առաջիկա ընտրություններով պետք է իշխանության գա քաղաքական փորձառությամբ առաջնորդվող այնպիսի թիմ, որը մեր երկրի շուրջ փոխհարաբերությունները հակադրությունների ասպարեզից կտեղափոխի համագործակցության դաշտ, երբ, օրինակ, Եվրամիությունը Հայաստանը չի դիտարկի որպես գործիք Ռուսաստանի դեմ, ԱՄՆ-ն իր TRIPP-ով՝ Չինաստանի դեմ, Հայաստանը կդադարի լինել շահերի պարզաբանման առարկայի Ռուսաստանի ու հարևան թուրքական պետությունների միջև, Իրանը չի դիտի Հայաստանը որպես պոտենցիալ հակահրանական հենակետ: Փորձառու քաղաքական գործիչները կկարողանան վերականգնել Հայաստանի փոխլրացնող քաղաքականությունը՝ մեզ հետ շահեր ունեցող պետությունների հետ:

Այսօրվա իշխանությունը հնարավորինս պառակտել ու մասնատել է հայությանը, Սփյուռքն օտարվել է Հայաստանից, իսկ նոր Սահմանադրության ընդունումից հետո Հայաստան-Սփյուռք զատումը կամրապնդվի իրավական հիմքերով: Գալիք իշխանությունը պետք է ունակ լինի քաղաքական լայն կոալիցիաների, ազգային-հասարակական գործերում հասարակության ամենատարբեր շերտերին ընդգրկելով, Սփյուռքի հետ հարաբերությունների փորձառությամբ միավորել ողջ ազգն ու պետությունը և այդ միասնականությունը վերածելու անվտանգության ու առաջընթացի գլխավոր գործոնի: Հայաստանը պետք է ղեկավարի հայ մարդը, վաղը և այսուհետ պետք է բացառվի հասարակական, քաղաքական դաշտերում այնպիսի «գործիչների» «ծլարձակումը», որոնք ներկան կզատեն անցյալից, ազգային արժեքներն ու սրբությունները կստորադասեն վերազգային գաղափարներին, կվերածվեն օտարի կամակատարների: Հայաստանի ղեկավարը 2026-ի հունիսի 6-ից հետո պետք է դառնա հայ մարդ, ով ունի Հայոց Մայր եկեղեցու հետ գործակցության փորձառություն, ում համար թանկ են Արցախը, Արարատը, Վանն ու Մուշը, ազգային հիշողությունն ու ազգային արժանապատվությունը:

Առաջիկա շաբաթներին ականատես ենք լինելու նոր ուժերի և միավորումների մուտք գործելուն նախընտրական մրցասպարեզ: Առողջ քաղաքական մրցակցությունն իհարկե ժողովրդավարական համակարգի կայացման գրավականն է, և հուսանք, որ իշխանության մոտ հասունացող պարտության գիտակցությունը չի ստիպի նրան հարամելու ամեն բան և կանխելու պատմական օրինաչափ շրջադարձը: Կարծում ենք, որ ընդդիմադիրի դիմակ հագնող նիկոլական փոքրաթիվ արբանյակներին բացառելով, քաղաքական ասպարեզ իջնող հին ու նոր սերունդը պետք է հնարավորություն ունենա դրսևորվելու և իր ջանքը ներդնելու հայրենի պետականության ամրապնդման ու զարգացման գործում, և դա այսօր իրական է թվում, եթե իսկապես առաջնորդության իրավունքը կրկին ստանձնեն իրապես ազգային ուժերը, իրական առաջնորդի գլխավորությամբ: Միայն համապատասխան կարողությունների տիրապետող գործիչը կկարողանա վերը նկարագրված մարտահրավերները հաղթահարելով պետությունը սահուն կերպով դուրս բերել անվտանգության ու առաջանցիկ զարգացման ապահով հանգրվան:

Իրանի շուրջ էսկալացիայի գեոտնտեսական չափումը և Հայաստանի ռազմավարական ռիսկերը

Վահե Դավթյան
Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

2026 թ. փետրվարի 28-ի առավոտյան Իսրայելը և Ամերիկայի Միացյալ Նահանգները սկսեցին լայնածավալ ռազմական գործողություն Իրանի դեմ: Հարվածներ հասցվեցին Իսլամական Հանրապետության տարածքում գտնվող տասնյակ օբյեկտների, սպանվեց Իրանի ռահբարը (գերագույն առաջնորդը)՝ Ալի Խամենեին: Ի պատասխան՝ Իրանը հրթիռակոծեց Իսրայելի տարածքը և Մերձավոր Արևելքում գտնվող ամերիկյան ռազմաբազաները, պայթյուններ տեղի ունեցան Դուբայի զբոսաշրջային թաղամասերում: Թեհրանը հայտարարեց ջիհադ (սրբազան պատերազմ) ԱՄՆ-ի և Իսրայելի դեմ: Ռազմական գործողությանը նախորդել էր երեք ամիս տևած բանակցային գործընթացը: Իրանի և ԱՄՆ-ի միջև երկխոսությունը վերսկսվել էր 2026 թ. փետրվարի 6-ին՝ Օմանի միջնորդությամբ: Խորհրդակցությունների երրորդ փուլը կայացել էր Ժնևում՝ փետրվարի 26-ին: 2025 թ. տեղի ունեցած նախորդ բանակցային փուլը նույնպես տապալվել էր հունիսի 13-ին՝ Իրանի միջուկային օբյեկտների դեմ Իսրայելի հարվածներից հետո:

Իրանի շուրջ ծավալվող էսկալացիան ունի մի քանի չափում, որոնց թվում առանցքայիններից է գեոտնտեսականը: Փորձենք անդրադառնալ այդ չափմանն առավել հանգամանորեն:

«Այաքս» օպերացիան ու Ռուզվելտի թոռը

Վաշինգտոնը չի թաքցնում՝ պատերազմի առանցքային նպատակներից մեկն իրանական նավթի տնօրինումն է: ԱՄՆ էներգետիկ դոմինանտության ազգային խորհրդի ղեկավար Ջարոդ Ագենի խոսքերով՝ «*Վաշինգտոնը փորձում է ազատել իրանական նավթն ահաբեկիչների ձեռքերից՝ հետագայում անհապաղ մատակարարումներ իրականացնելու համար, այդ թվում՝ նվազեցնելով ռիսկերը Հորմուզի նեղուցում*».[1]

Իրականում Նահանգները միշտ էլ գերզգայուն են եղել իրանական նավթի նկատմամբ: Եվ հենց այդ գերզգայությունը ստիպեց նրանց 1953 թ. Իրանում իրականացնել «Այաքս» օպերացիան՝ ուղղված երկրի վարչապետ Մոհամմադ Մոսադեղին պաշտոնից հեռացնելուն: Վերջինս իրականացնում էր իրանական նավթային ռեսուրսների ազգայնացման քաղաքականություն, ինչն ուղիղ ռիսկ էր անգլոսաքսոնական կապիտալի, մասնավորապես «Անգլո-իրանական նավթային ընկերության» համար, որը տնօրինում էր Իրանի ողջ նավթային ոլորտը 20-րդ դարի սկզբից: Մոսադեղի քաղաքականության արդյունքում 1951 թ. խզվեցին դիվանագիտական հարաբերությունները Մեծ Բրիտանիայի ու Իրանի միջև:

«Այաքս» օպերացայի ղեկավարներն էին Քերմիթ Ռուզվելտը՝ նախագահ Թեոդոր Ռուզվելտի թոռը և ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության Մերձավոր Արևելքի բաժնի ղեկավարը:

Իրականացված օպերացիան իր գործիքակազմով ու մեթոդներով ամբողջությամբ համընկնում է ժամանակակից «գունավոր հեղափոխությունների» իրականացման տեխնոլոգիաների հետ: Արդյունքում Մոսադեղը ձերբակալվեց և ռազմական դատարանի կողմից դատապարտվեց երեք տարվա ազատազրկման: Եվ ամենակարևորը. արևմտյան կապիտալը ստացավ իրանական նավթային համալիրը՝ ամբողջությամբ: Մանավորապես, 1954 թ. կնքվեց միջազգային կոնսորցիումի ստեղծման մասին համաձայնագիր՝ Իրանի նավթի արդյունահանման ու արտահանման նպատակով: Կոնսորցիումի մաժորիտար սեփականատերերն էին «Անգլո-իրանական նավթային ընկերությունը» (որը նույն 1954-ին վերանվանվեց British Petroleum-ի)՝ 40% բաժնեմասով և ամերիկյան ընկերությունների հնգյակը (Gulf Oil, Socal, Esso, Socony, Texaco)՝ ևս 40%: 14%-ն անցավ Shell-ին, 6%-ը՝ ֆրանսիական Total-ին:

Այսպիսի դասավորվածությունը պահպանվեց մինչև 1979 թ. իսլամական հեղեփոխություն:

Հաշվի առնելով Իրանում 200 մլրդ բարելը գերազանցող նավթի ապացուցված պաշարները (3-րդ տեղն աշխարհում), ու մյուս կողմից՝ Վաշինգտոնի



«Թուրքական հոսք» և «Երկնագույն հոսք» գազամուղները

էներգետիկ էքսպանսիայի ընդլայնվող քաղաքականությունը, պատերազմն ունի շատ հստակ «նավթային» բնույթ ու տեղավորվում է 20-րդ դարի ռեսուրսային հակամարտությունների ծիրի մեջ:

Գեոէներգետիկ հարթություն

Իրանի նկատմամբ իսրայելա-ամերիկյան ագրեսիայի գեոտնտեսական չափման մեջ գլխավոր հարցն էներգետիկ հոսքերի վերահսկումն է և դրանց միջոցով գլոբալ ազդեցության վերաձևավորումը:

Առաջին առանցքը Հորմուզի նեղուցն է: Այստեղով անցնում է համաշխարհային նավթի մատակարարումների մոտ 20–25%-ը և հեղուկացված բնական գազի մինչև 30%-ը: Սա գլոբալ էներգետիկ շուկայի «սեղմման կետն» է: Իրանը բազմիցս սպառնացել է դրա հնարավոր բլոկավորմամբ: Եթե Վաշինգտոնը հասնի Իրանի քաղաքական ռեժիմի փոփոխության՝ ապահովելով 1982 թ. ՄԱԿ-ի ծովային կոնվենցիայի վավերացումը, ապա իրավական հարթությունում կսահմանափակվի Թեհրանի կարողությունը խոչընդոտելու նավարկությանը: Սա ամբողջությամբ տեղավորվում է ԱՄՆ նավթային ռազմավարության մեջ:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև Վենեսուելայի ուղղությունը: Վաշինգտոնի ակտիվությունը Կարակասի շուրջ փաստացի նպատակ ունի վերահսկելի դարձնել Վենեսուելայի հսկայական նավթային պաշարները և ամրապնդել ԱՄՆ դիրքերը որպես առանցքային արտահանող և շուկայի կարգավորող: Հորմուզի վերահսկումն ու Վենեսուելայի ռեսուրսների տնօրինումը միասին ձևավորում են գլոբալ մատակարարման կառավարման նոր կոնֆիգուրացիա:

Երկրորդ առանցքը Կասպից ավազանն է: Իրանում նոր քաղաքական իրականության ձևավորման պարագայում Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիայի վավերացումը կարող է ստեղծել նոր իրավաքաղաքական հիմքեր՝ ԱՄՆ ռեգիոնալ շահերի առաջխաղացման համար: Այս հաշվարկներում կարևոր տեղ է զբաղեցնում TRIPP-ը, որը պետք է դիտարկել որպես ավելի լայն գեոռազմավարության մաս: Եթե վավերացման արդյունքում հանվեն Անդրկասպյան գազամուղի կառուցման սահմանափակումները, ապա ԱՄՆ-ը հնարավորություն կստանա ուժեղացնել ազդեցությունը Կենտրոնական Ասիայում, զսպել Ռուսաստանին և ազդել դեպի ԵՄ ածխաջրածինների արտահանման դիվերսիֆիկացիոն ռազմավարության վրա՝ TRIPP-ի միջոցով: Վերջինիս նախատեսվող 500 մ լայնությունը արդեն իսկ վկայում է, որ նախագիծը շատ ավելի լայն կոնֆիգուրացիայի մաս է կազմում:

Երրորդ առանցքը Չինաստանն է: Իրանը Չինաստանի առանցքային նավթամատակարարներից է: Ու այս առումով Իրանի նկատմամբ ճնշումը տեղավորվում է ԱՄՆ-Չինաստան գեոտնտեսական պատերազմի տրամաբանության մեջ: Նավթային հոսքերի վերահսկումը նշանակում է ազդեցություն Պեկինի արդյունաբերական և ֆինանսական կայունության վրա: Սա գեոքաղաքական ճնշման գործիք է, ահա թե ինչու, չնայած ծավալվող հակամարտությանը, նախատեսվում է Թրամփի այցը Պեկին:

Վերջապես՝ **դոլարի հարցը**: Նավթային շուկաների վերահսկումը ԱՄՆ-ի գլխավոր գեոքաղաքական գործիքի՝ դոլարի ամրապնդման առանցքային մեխանիզմներից է: Վերջին հինգ տարում միջազգային գործարքներում դոլարի կշիռը նվազել է՝ 61%-ից հասնելով 41%-ի: Նավթի շուկաներում ԱՄՆ դիրքավորման ուժեղացումը կարող է կանգնեցնել կամ նույնիսկ հետ շրջել այս միտումը: Էներգետիկ հոսքերի դոլարայնացումը նշանակում է ֆինանսական լծակների վերականգնում:

Իսրայելի հարվածների ֆոնին նավթի գինը հակամարտության 6-րդ օրը գերազանցեց 120 ԱՄՆ դոլարը, այնուհետև, անկում ապրելով մինչև 95-100 ԱՄՆ դոլարը, ավելի ուշ՝ մարտի 18-ին բարձրացավ մինչև 112 ԱՄՆ դոլար: Ակնհայտ է, որ գործ ունենք ճգնաժամային ցուցանիշների հետ, որոնք ռիսկային են համաշխարհային տնտեսության համար:

Սակայն հարցը ոչ թե կարճաժամկետ գնային տատանումներն են, այլ այն, թե ով է վերահսկելու հումքային միջանցքները և դրանից բխող ֆինանսական հոսքերը: Իհարկե, առկա են նաև որոշակի զսպող մեխանիզմներ: Խոսքը, նախ և առաջ, 1974 թ. Փարիզի կոնֆերանսում հիմնադրված Միջազգային էներգետիկ գործակալության (ՄԷԳ) մասին է, որը վերջին տասնամյակների ընթացքում ձևավորել է ռազմավարական պահուստային գործիքակազմ: Այդ պահուստներն ակտիվացվում են տարբեր աշխարհաքաղաքական ցնցումների և հակամարտությունների պայմաններում՝ ուղղվելով համաշխարհային նավթային շուկայի բալանսավորմանը, ինչպես, օրինակ, Պարսից ծոցի պատերազմի, Լիբիայում քաղաքացիական պատերազմի կամ Մեքսիկական ծոցում տեղի ունեցած բնական աղետների ժամանակ:

Գործակալությունը հայտարարել է, որ նախատեսում է պահուստներից ազատել 400 մլն բարել նավթ՝ Մերձավոր Արևելքում շարունակվող հակամարտության ֆոնին համաշխարհային շուկան կայունացնելու նպատակով:[2] ՄԷԳ անդամներից իրենց ներդրումը մինչ այժմ հստակորեն նշել են միայն ԱՄՆ-ն և Ճապոնիան: Վաշինգտոնը կազատի 172 մլն բարել, Հռոմը՝ մոտ 10 մլն բարել, իսկ Տոկիոն՝ 80 մլն բարել:[3]

Կրկին անդրադառնանք վենեսուելական գործոնին: Վերջին շրջանում ակնհայտորեն աճել են Վենեսուելայից նավթի արտահանման ծավալները, որոնք ներկայումս կազմում են մոտ 750 հազար բարել օրական: Սա արտահանման էական՝ գրեթե կրկնակի աճ է՝ համեմատած ընդամենը 1-1.5 ամիս առաջ արձանագրված ցուցանիշների հետ: Այս համատեքստում կարելի է ենթադրել, որ վենեսուելական գործոնն արդեն բավական ակտիվ կերպով ներգրավվում է միջազգային նավթային շուկաների կայունացման գործընթացում:

Այս ամենին զուգընթաց, էական վնասներ է կրում նաև իրանական նավթագազային համալիրը: Մարտի 14-ին ԱՄՆ Կենտրոնական հրամանատարությունն իրականացրել է «Մերձավոր Արևելքի պատմության ամենահզոր ռմբակոծություններից մեկը» և «ամբողջությամբ ոչնչացրել է բոլոր ռազմական թիրախները» Իրանի Խարգ կղզում, որտեղ գտնվում է երկրի խոշորագույն նավթային տերմինալը: Այդ մասին հայտնել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը: Ամերիկացի առաջնորդի խոսքով՝ «պարկեշտության նկատառումներից ելնելով» նա որոշել է չոչնչացնել նավթային ենթակառուցվածքը «Իրանի մարգարիտի» վրա: «Սակայն եթե Իրանը կամ որևէ այլ ուժ ձեռնարկի քայլեր, որոնք կխոչընդոտեն Հորմուզի նեղուցով նավերի ազատ և անվտանգ անցմանը, ես անմիջապես կվերանայեմ այս որոշումը», - գրել է Թրամփը:[4]

Հյուսիս-Հարավ միջազգային միջանցքը

Տվյալ միտումների շարունակության պարագայում համաշխարհային տնտեսությունը կարող է հայտնվել նախառեցեսիոն վիճակում:

Ինչո՞ւ է ԱՄՆ շահերից բխում Հորմուզի նեղուցի փակումը

Համաշխարհային էներգետիկ համակարգը կառուցված է ծայրահեղ խոցելի աշխարհագրական հանգույցների վրա: Հորմուզը դրանցից առանցքայինն է:

Իրավաքաղաքական առումով Հորմուզի նեղուցը բաժանված է Իրանի և Օմանի միջև (1975 թ. համաձայնագիր). այստեղ առանձին «միջազգային ջրեր» գրեթե չկան: Միևնույն ժամանակ, 1982 թ. ՄԱԿ-ի Ծովային կոնվենցիան ամրագրում է տրանզիտային անցման իրավունք, որը չի կարող կամայականորեն կասեցվել: Սակայն Իրանը կոնվենցիան չի վավերացրել: Արդյունքում ձևավորվում է երկակիություն՝ դե յուրե միջազգային անցում, դե ֆակտո՝ վերահսկվող տարածքային միջանցք:

Հորմուզի գլոբալ նշանակությունը պայմանավորված է ոչ միայն աշխարհագրությամբ, այլև ծավալներով: Աշխարհում օրական սպառվող նավթի 20-25%-ը և հեղուկացված գազի շուրջ մեկ երրորդն անցնում են հենց այստեղով (վերջինիս հիմնական մատակարարը Կատարն է): Միաժամանակ, Պարսից ծոցի ավազանը պարունակում է աշխարհի փաստված նավթի գրեթե կեսը և գազի մոտ 40%-ը: Տարեկան արժեքը՝ էներգետիկ համարժեքով մոտ 500 մլրդ ԱՄՆ դոլար: Սա զարկերակ է, որի խափանումն անմիջապես ծնում է գնային շոկ:

Հատկանշական է, որ հիմնական հարվածը հասցվում է ոչ թե Արևմուտքին, այլ Ասիային. նավթի հոսքերի ավելի քան 80%-ն ուղղվում է Չինաստան, Հնդկաստան, Ճապոնիա և Հարավային Կորեա: Նեղուցից որոշ երկրների կախվածությունը հասնում

Հորմուզի նեղուցը

է 60-75%-ի: Այսինքն՝ Հորմուզի գործոնը նույնքան ասիական անվտանգության հարց է, որքան մերձավորարևելյան:

Տարածաշրջանում առկա են շրջանցիկ խողովակաշարեր, սակայն դրանց թողունակությունը բավարար չէ ամբողջ ծավալը փոխարինելու համար: Որոնք են այդ երթուղիները:

- Սաուդյան Արաբիայի «Արևելք-Արևմուտք» խողովակաշարը կարող է օրական ընդամենը 5 մլն բարել հասցնել Կարմիր ծով:
- ԱՄԷ-ի Հաբշան-Ֆուջեյրա խողովակաշարն ապահովում է մոտ 1,5 մլն բարել օրական:
- Իրաքի հյուսիսային Կիրկուկ-Ջեյհան երթուղին չի սպասարկում հարավային հսկա հանքավայրերը, որոնք կախված են Բասրայի նավահանգստից և Հորմուզից:

Այս ամենի հետևանքով, եթե նեղուցը երկարաժամկետ պարալիզացվի, համաշխարհային տնտեսությունում գոյանում է էներգետիկ ու հեղուկացված գազի պակասորդ: Ավելին, ՕՊԵԿ պահուստային հզորությունների մոտ 70%-ը գտնվում է հենց Պարսից ծոցի երկրներում, որոնք նույնպես կախված են Հորմուզից:

Այս կոնֆիգուրացիան առավել քան բխում է ԱՄՆ գեոտնտեսական շահերից՝ Ասիայի տնտեսական աճի զսպում, ԵՄ-ի՝ ամերիկյան հեղուկացված գազի մատակարարումներից կախվածության կտրուկ ավելացում: Դրա հետ մեկտեղ Վաշինգտոնը լավ հնարավորություն է ստանում զսպելու նաև իր գլխավոր նավթային մրցակցին՝ ՕՊԵԿ-ին:

Ամերիկյան էներգետիկ կապիտալը՝ ռազմական թիրախ

Թեհրանն անցել է նոր՝ առավել կոշտ մարտավարության: Տարածաշրջանում գործող ամերիկյան ընկերությունների տնտեսական և ենթակառուցվածքային ներկայությունը ներառվել է պատասխան գործողությունների շրջանակում:

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի դիտակետում են հայտնվել ԱՄՆ-ի էներգետիկ ներկայության առանցքային հենակետերը.

- Chevron՝ Իրաքում իրականացվող լայնածավալ արդյունահանման և ներդրումային ծրագրերով,
- ExxonMobil՝ Պարսից ծոցի մի շարք խոշոր նախագծերում բաժնեմասնակցությամբ,
- KBR և SLB՝ Քուվեյթում կրիտիկական ենթակառուցվածքների սպասարկմամբ,
- Jafurah գազային հսկայական հանքավայրը, որը Սաուդյան Արաբիայի ռազմավարական առաջնահերթություններից է և որի դեմ հարվածը կունենա ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական ծանր հետևանքներ:

Սպառնալիքների իրագործումը կնշանակի ամերիկյան կորպորատիվ հատվածի համար բազմամիլիարդ կորուստներ: Սակայն ավելի խորքային է ռազմավարական հարթությունը. կխաթարվի ԱՄՆ-ի՝ որպես տարածաշրջանային անվտանգության երաշխավորի իմիջը: Բացի այդ, հնարավոր վնասներ կրած արաբական պետությունները, ըստ ռազմավարական սցենարի, ստիպված կլինեն ճնշում գործադրել Վաշինգտոնի վրա՝ պահանջելով դադարեցնել կոնֆլիկտը: Կկիրառվի՞ արդյոք այս սցենարը՝ ցույց կտա ժամանակը:

Այս համատեքստում ամերիկյան բիզնեսի նկատմամբ ուղղված սպառնալիքն Իրանի համար վերածվում է ոչ միայն պատժիչ մեխանիզմի, այլև զսպման գործիքի՝ ուղղված ուժային հավասարակշռության վերաձևավորմանը տարածաշրջանում:

Միաժամանակ, Իսրայելը փորձում է ներքաշել Պարսից ծոցի երկներին պատերազմի մեջ: Ըստ միջազգային մամուլի՝ Իսրայելը դիվանագիտական խողովակներով ԱՄԷ-ին առաջարկել է օգտվել ստեղծված իրավիճակից՝ գրավելով երեք վիճելի կղզիները՝ Աբու-Մուսան, Մեծ և Փոքր Թունբը:

1971 թվականից ի վեր նշված կղզիները Իրանի ու ԱՄԷ-ի միջև տարածքային վեճի առարկա են: Կղզիների ռազմավարական նշանակությունն այն է, որ դրանք գտնվում են Հորմուզի նեղուցի մուտքի մոտ և, հետևաբար, հնարավորություն են ընձեռում վերահսկելու նավահանգիստներն ու Պարսից ծոց-Օմանի ծոց երթևեկության ուղիները: Այս դիրքը թույլ է տալիս ոչ միայն հետևել և կառավարել լցանավերի ընթացքը, այլև անհրաժեշտության դեպքում գործարկել ճնշման ու ռազմավարական ազդեցության լծակներ տարածաշրջանային ուժերի վրա: Ու դա Իրանի զինանոցի առանցքային տարրերից է՝ Մերձավոր Արևելքում ամենամասշտաբային հրթիռային համակարգի հետ մեկտեղ:

Գազի շուկաներ

Մարտի 2-ին հեղուկացված բնական գազի (LNG) խոշորագույն արտադրողն ու արտահանողը՝ Կատարը (զիջելով միայն ԱՄՆ-ին), դադարեցրեց բնական գազի արդյունահանումը՝ Ռաս-Լաֆֆանի ու Մեսաի-

դի էներգետիկ օբյեկտներին Իրանի հասցված հարվածներից հետո:

Կատարի կշիռը համաշխարհային հեղուկացված գազի շուկայում կազմում է 20%: Եվ արտադրական օբյեկտների հրթիռակոծումը, և՛ Հորմուզի նեղուցի պարալիզացումը, որով անցնում է աշխարհում սպառվող հեղուկացված գազի 30%-ը, արդեն իսկ հանգեցրել են գազի շուկաներում ճգնաժամային միտումների առաջացման: Օրինակ, Նիդերլանդների TTF հաբում բնական գազի ապրիլյան ֆյուչերսների արժեքը միանգամից աճեց՝ գերազանցելով 700 ԱՄՆ դոլարը՝ 1000 խմ-ի դիմաց:

Ո՞վ է շահում այս ամենից: Մեծ հաշվով՝ ամերիկյան գազային ընկերությունները, որոնք պետական արտոնությունների ներքո ակտիվորեն գրավում են եվրոպական շուկան:

Սակայն Վաշինգտոնն այս հարցում ունի իր «աքիլլեսյան գարշապարը»: Մերձավոր Արևելքի լոգիստիկ ու արդյունաբերական խաթարման հետևանքով առաջացած հեղուկացված գազի պակասորդը լրացնելու համար Նահանգներին անհրաժեշտ է ընդլայնված լցանավային նավատորմ: Նման նավերի սեփական արտադրություն նրանք չունեն: Հետևաբար, ի հայտ է գալիս խնդիր՝ կախվածություն Չինաստանից, որն այս ոլորտում աշխարհի բացարձակ առաջատարն է:

Հատկանշական է, որ Մերձավոր Արևելքում էսկալացիայի ֆոնին Մոսկվան Անկարային տեղեկացրել է «Թուրքական հոսք» ու «Երկնագույն հոսք» գազամուղներին սպառնացող վտանգների մասին:

Նշված գազամուղները ստեղծված կոնֆլիկտային ձևաչափերում կարող են առանցքային դեր խաղալ Եվրոպայի էներգետիկ անվտանգության ապահովման գործում: Կատարում հեղուկացված գազի արտադրության դադարեցումն ու Հորմուզի նեղուցի փակումը գազի լուրջ պակասորդ են ստեղծում եվրոպական շուկայում, ինչը լավ հնարավորություն է ստեղծում Թուրքիայի համար՝ հանդես գալու որպես «երկնագույն վառելիքի» առանցքային մատակարար, ինչը հնարավոր է ապահովել հենց վերոնշյալ «Թուրքական» ու «Երկնագույն» հոսքերով՝ համապատասխանաբար 31.5 մլրդ խմ ու 16 մլրդ խմ թողունակությամբ: Երկու գազամուղներն էլ ռուսական նախագծեր են, որոնք ապահովում են Ռուսաստանից գազի մատակարարում Թուրքիա՝ Սև ծովի հատակով:

Նման գազային սցենարը, բնականաբար, հակասում է նախևառաջ Վաշինգտոնի շահերին, որը փորձում է Կատարից մատակարարումների դադարեցման պայմաններում արագորեն գրավել եվրոպական շուկան:

Տրանսպորտային չափում

Մերձավոր Արևելքում ռազմական էսկալացիան արդեն սկսում է ազդել միջազգային լոգիստիկ նախագծերի վրա: Այդ ազդեցությունը նկատելի է նաև «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի վրա, որը վերջին տարիներին դիտարկվում է որպես եվրասիական լոգիստիկայի կարևորագույն ուղղություններից մեկը:

2025 թ. միջանցքի ցուցանիշները բավական բարձր էին: Կոնտեյներային փոխադրումներն աճել էին շուրջ 60%-ով՝ հասնելով 11,5 հազ. TEU-ի (20-ֆուտանոց էկվիվալենտ), իսկ երկաթուղային բեռնափոխադրումների ընդհանուր ծավալը կազմել էր 9,9 մլն տոննա: Միջանցքի նկատմամբ հետաքրքրությունը հատկապես մեծացել էր այն արտահանողների շրջանում, որոնք կենտրոնացած են Իրանի, Հնդկաստանի և Պարսից ծոցի երկրների շուկաների վրա:

Սակայն նախագծի կառուցվածքային խոցելիությունը շարունակում է պահպանվել: Ամենակարևոր խնդիրներից մեկը Ռեշտ-Աստարա երկաթուղային հատվածի բացակայությունն է, որի պատճառով բեռների մի մասը ստիպված տեղափոխվում է ավտոմոբիլային ճանապարհով: Նախատեսվում էր, որ 162 կմ երկարությամբ այդ հատվածի կառուցումը կսկսվի 2026 թ. ապրիլից, իսկ ծրագրի արժեքը գնահատվում է մոտ 1.6 մլրդ եվրո: Ակնհայտ է, որ ստեղծված իրավիճակում, հաշվի առնելով նաև իրանա-ադրբեջանական հարաբերություններում լարվածության կտրուկ աճը, նախագծի իրականացման աշխատանքներն առաջիկայում դժվար թե սկսվեն:

Միևնույն ժամանակ, «Հյուսիս-Հարավ»-ի առանձնահատկությունն այն է, որ նրա բոլոր հիմնական ճյուղերն անցնում են Իրանի տարածքով: Սա նախագծին հաղորդում է ռազմավարական նշանակություն, սակայն նաև այն դարձնում է զգայուն՝ տարածաշրջանային քաղաքական և ռազմական գործընթացների նկատմամբ:

ԱՄՆ-Իսրայել ռազմական գործողությունները Իրանի դեմ արդեն ստեղծել են մի շարք գործնական խնդիրներ, մասնավորապես՝ բարդացել է բեռների ապահովագրությունը, գրեթե դադարեցվել է նավագնացությունը Հորմուզի նեղուցում, իսկ Իրանի տարածքով անցնող լոգիստիկան դարձել է ավելի անկայուն: Կասպից ծովում փոխադրումները չեն դադարել, սակայն ընդհանուր համակարգի կայունությունը կտրուկ նվազել է:

Ռուսաստանյան մասնագիտացված գործակալությունների համաձայն՝ եթե մինչև հակամարտությունը սպասվում էր, որ 2026 թ. միջանցքով բեռնաշրջանառությունը կաճի 15-25%-ով, ապա այժմ նույնիսկ ռազմական գործողությունների արագ ավարտի դեպքում կանխատեսվում է մինչև 25% նվազում: Երկարատև հակամարտության դեպքում հետևանքները կարող են լինել ավելի խորքային: Դրան հատկապես կարող են նպաստել «Հյուսիս-Հարավ»-ի առանցքային հանգույցների՝ Բանդար Աբբաս և Չաբահար նավահանգիստներին պարբերաբար հասցվող հրթիռային հարվածները:

Այսպիսով, «Հյուսիս-Հարավ» միջանցքը, որը դեռ վերջերս դիտարկվում էր որպես դինամիկ աճի փուլում գտնվող լոգիստիկ նախագիծ, այժմ մտնում է բարձր անորոշության փուլ, որտեղ դրա արդյունա-



Մերձավոր Արևելքի և Կասպյան ավազանի նավթագազային հանքավայրերը

վետությունը մեծապես կախված կլինի Իրանի շուրջ ռազմաքաղաքական զարգացումներից:

Ռիսկեր Հայաստանի համար

Այս լայն գեոռազմավարական համատեքստում Հայաստանին սպառնացող առանցքային ռիսկն արդի փուլում շարունակում է մնալ TRIPP նախագիծը, որի իրականացման դեպքում Հայաստանը վերածվում է միաժամանակ երեք աշխարհաքաղաքական կենտրոնների՝ Ռուսաստանի, Չինաստանի ու Իրանի դեմ ուղղված գործիքի:

Վստահաբար, սա կներկայացվի որպես ինքնիշխանության մեծ առաջընթաց: Սակայն գործնականում TRIPP-ը վերածելու է Հայաստանը անկայունության եռման կետի: Իսկ որոշ սցենարների դեպքում՝ նաև լեգիտիմ թիրախի:

Դեռևս հակամարտությունից շաբաթներ առաջ Հայաստանում Իրանի դեսպան Խալիլ Շիրոոլամիի հայտարարությունը հենց դրա մասին էր. «Թեհրանում այնպիսի պատկերացում է ձևավորվում, թե Հայաստանը դառնում է Իրանի դեմ թշնամաբար տրամադրված ուժերի գործունեության կենտրոն»: Առանցքային բառն այստեղ «կենտրոնն» է:

Լոկալ կտրվածքով TRIPP-ը հանգեցնելու է Սյունիքի ապամիլիտարիզացմանն ու այդտեղ ազատ տնտեսական գոտու ձևավորմանը: Դա, իր հերթին, նպաստելու է թուրք-ադրբեջանական տնտեսական, այնուհետև մշակութային ու աշխարհաքաղաքական տարածքային էքսպանսիայի իրականացմանը:

Մակրոռեգիոնալ կտրվածքով TRIPP-ը նպաստելու է Իրանի նկատմամբ «Անակոնդայի մեթոդի» կիրառմանը, ինչը «Բեն Գուրիոնի ջրանցք» ու «Դավթի միջանցք» նախագծերի հետ մեկտեղ լիովին տեղավորվում է Իսրայելի հակաիրանական ռազմավարության մեջ:

Բաքուն չի թաքցնում, որ TRIPP-ի իրականացումն իր համար փաստացի նշանակում է «Զանգեզուրյան միջանցքի» կյանքի կոչում: Ու խոսքը ոչ միայն հայտարարությունների մասին է, այլև իրական բիզնես գործընթացների: Այսպես, Վենսի այցից մոտ մեկ շաբաթ առաջ Հայաստան էին ժամանել ամերիկյան AECOM ճարտարագիտա-խորհրդատվական ընկերության ներկայացուցիչները (Տեխաս, Դալլաս)՝ TRIPP-ի տեղանքի հետազոտման աշխատանքները սկսելու նպատակով:

Դրանից օրեր անց ամերիկյան ամենախոշոր ներդրումային ընկերությունը՝ Black Rock-ը, ձեռք բերեց Թուրքիայում ադրբեջանական SOCAR-ին պատկանող կոնտեյներային տերմինալի բաժնետոմսերը: Պայմանագրի համաձայն՝ սահմանվում է տերմի-

նալի համատեղ տնօրինում SOCAR Turkey Enerji A.Ş. և Black Rocsk-ի «դուստր» Terminal Investment Switzerland Sàrl (TISS) ընկերությունների կողմից: Խոսքը Էգեյան ծովի ափին գտնվող տերմինալի մասին է, որն իր ծավալներով երրորդն է Թուրքիայում ու, ամենակարևորը, ապահովում է կայուն ելք դեպի Միջերկրական ծով:

Այժմ կրկին անդրադառնանք Հայաստան ժամանած AECOM ընկերությանը: NASDAQ ֆոնդային բորսայի կայքում որոնման արդյունքները ցույց են տալիս, որ 2023 թ. փետրվարին այդ ընկերության ինստիտուցիոնալ բաժնետեր է դարձել վերոնշյալ Black Rock-ը (12%): Ըստ ամերիկյան որոշ բաց աղբյուրների՝ Black Rock-ը ներկայացված է AECOM-ում նաև անուղղակիորեն՝ մի շարք դուստր ընկերությունների տեսքով:

Ի՞նչ է սա նշանակում:

Black Rock-ը պարզապես բիզնես-սուբյեկտ չէ, այլ ԱՄՆ կառավարության ու, մեծ հաշվով, «խորքային պետության» հետ ուղիղ աֆիլացված ակտոր: Թեև համարվում է պասիվ ներդրող, այն ունի քվեարկելու իրավունք բաժնետերերի ընդհանուր ժողովներում և մասնակցում է ընկերությունների բարձրագույն ղեկավարության նշանակմանը: Black Rock-ը 3900 ամերիկյան հրապարակային ընկերություններից մոտ կեսում տնօրինում է անվանական բաժնետոմսերի փաթեթների ավելի քան 5%-ը: Այն նաև մրցակից ընկերությունների՝ ԱՄՆ «մեծ քառյակի» բանկերի խոշոր բաժնետերերից է:

Փաստացի Վաշինգտոնը TRIPP-ի միջոցով ձգտում է դիրքավորվել Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային երթուղում՝ ստանձնելով եվրասիական կարևոր խաղացողի դերը: Ձևավորվում է նոր լոգիստիկ մեգածրագիր, որի նպատակն է դիվերսիֆիկացնել Կենտրոնական Ասիայի ու Եվրոպայի միջև կապը, սակայն բացառապես ամերիկյան կապիտալի վերահսկողության ներքո: TRIPP-ն ու Թուրքիայում ձեռքբերված տերմինալն այդ լոգիստիկայի կարևոր հանգույցներից են, Հայաստանը՝ այս մեգառազմավարության սպասարկող կողմ, այլ ոչ սուբյեկտ:

Այս ամենի հետ մեկտեղ Հայաստանը կարող է բախվել նաև էներգետիկ անվտանգության որոշակի ռիսկերի հետ: Մասնավորապես՝

1. հաշվի առնելով Իրանի նավթագազային համալիրին հասցվող վնասը՝ մեծ է հավանականությունը, որ վերջինս էապես կկարճատի կամ ժամանակավորապես կդադարեցնի գազի արտահանումը, այդ թվում՝ Իրան-Հայաստան գազամուղով: Դա, իր հերթին, չի նշանակում որ Հայաստանը կարող է հայտնվել գազի պակասորդի պայմաններում, քանի որ նշված երթուղով մենք տարեկան ներկրում ենք լավագույն դեպքում 300-350 մլն խմ գազ՝ տարեկան մոտ 2.3 մլրդ սպառման պայմաններում: Միաժամանակ, քանի որ իրանական գազի ներկրումը տեղի է ունենում «գազ էլեկտրաէներգիայի դիմաց» բարտերի շրջանակներում, կարող է էապես նվազել Հայաստանից Իրան էլեկտրաէներգիայի արտահանումը (տարեկան մինչև 1 մլրդ կվտ.ժ),

2. հարցականի տակ է հայտնվում «Հյուսիս-Հարավ» էլեկտրաէներգետիկ միջանցքի նախագիծը (Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան), քանի որ խարխլված էներգետիկ համակարգի պայմաններում Իրանն ի վիճակի չի լինի ինտեգրվելու միջազգային էլեկտրաէներգետիկ համակարգին՝ հավուր պատշաճի ապահովելով փոխադարձ հոսքեր: Եվ դա կարող է հիմք ծառայել Հայաստանի գործող իշխանությունների համար առաջ մղելու Արևելք-Արևմուտք էներգետիկ միջանցքը, ինչը փաստացի նշանակում է Ադրբեջանի էլեկտրաէներգետիկ համակարգին միացում (թեև համակարգերի սինխրոնիզացումը չափազանց բարդ խնդիր է):

Միաժամանակ, գազի գնի կտրուկ աճը չի անդրադառնա Հայաստանի վրա, քանի որ Ռուսաստանից ներկրվող «կապույտ վառելիքի» համար սահմանված է շուկայականից ցածր՝ 165 դոլար երկարաժամկետ պայմանագրային գինը: Ներկայիս բարդ իրավիճակում (որն ավելի է բարդանալու առաջիկայում) դա շատ կարևոր «անվտանգության բարձիկ» է Հայաստանի համար, ինչը պետք է շատ սթափ գնահատել:

Եզրակացություն

Այսպիսով, Իրանի շուրջ էսկալացիան ունի համակարգային բնույթ և արտահայտվում է նաև գեոէներգետիկ ռիսկերի ու սպառնալիքների տեսքով. պայքարը ծավալվում է էներգետիկ հոսքերի, լոգիստիկ միջանցքների և ֆինանսական ազդեցության վերահսկման շուրջ: Նավթի և գազի շուկաների տատանումները, ինչպես նաև Հորմուզի նեղուցի գործոնը վկայում են գլոբալ մատակարարումների վերաձևավորման և ռեցեսիոն ռիսկերի աճի մասին:

Հայաստանի համար ձևավորվում է բարձր ռիսկային միջավայր. արտաքին նախագծերը, մասնավորապես TRIPP-ը, կարող են սահմանափակել սուբյեկտայնությունը և երկիրը ներքաշել մրցակցող աշխարհաքաղաքական ռազմավարությունների դաշտ, մինչդեռ առկա «անվտանգության բարձիկները» կրում են խիստ ժամանակավոր բնույթ:

Հղումներ

1 https://www.newsweek.com/white-house-official-suggests-irans-oil-alleviate-supply-crisis-11639544

2 https://www.reuters.com/business/energy/iea-proposes-largest-ever-oil-release-strategic-reserves-wsj-reports-2026-03-11/?utm_source=chatgpt.com

3 https://www.reuters.com/business/energy/us-release-172-million-barrels-oil-strategic-petroleum-reserve-2026-03-11/?utm_source=chatgpt.com

4 https://www.reuters.com/world/middle-east/both-sides-dig-iran-war-approaches-two-week-mark-2026-03-13/

Իրան-ԱՄՆ-Իսրայել պատերազմը և Հարավային Կովկասի ապագան

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

2026 թվականի փետրվարի 28-ին Միացյալ Նահանգները և Իսրայելը ռազմական համատեղ գործողություններ սկսեցին Իրանի Իսլամական Հանրապետության դեմ՝ պահանջելով անվերապահ կապիտուլյացիա: Սկզբնական հարվածների խմբաքանակն առաջին 12 ժամում, ընդհանուր առմամբ, հասել է գրեթե 900-ի: Թիրախավորվել են Իրանի ռազմական ենթակառուցվածքները, օդային պաշտպանության համակարգերը, բալիստիկ հրթիռների կայանները և առաջնորդության կառույցները:[1] Այդ հարվածների հետևանքով զոհվել են Իրանի գերագույն առաջնորդ Ալի Խամենեին, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի բարձրաստիճան հրամանատարներ և մի շարք այլ պաշտոնյաներ:

Ի պատասխան՝ Իրանը գործարկել է «Ճշմարիտ խոստում-4» օպերացիան՝ իրականացնելով բալիստիկ հրթիռների և դրոնների բազմակի գործարկումներ (մարտի 20-ի դրությամբ՝ ավելի քան 60 խմբաքանակ) Իսրայելի, ԱՄՆ-ի տարածաշրջանային բազաների (ներառյալ՝ Բահրեյնում, Կատարում և ԱՄԷ-ում) և Ծոցի երկրների էներգետիկ օբյեկտների դեմ:

Այժմ հակամարտությունը մուտք է գործում 5-րդ շաբաթ. Իսրայելը շարունակում է խորացնել հարվածները Իրանի ներքին տարածքում (ներառյալ՝ Հարավային Պարսի գազի դաշտը, Կասպից ծովի նավատորմը և Խարգ կղզին), իսկ Իրանը կիրառում է կլաստերային զինամթերք և շարունակում է հրթիռակոծումները՝ առաջացնելով Հորմուզի նեղուցի խիստ սահմանափակում և գլոբալ էներգետիկ շոկ: Հարավային Կովկասը, չնայած աշխարհագրական հեռավորությանը, հայտնվում է հակամարտության անուղղակի ազդեցության գոտում՝ որպես սպառնալիքների տարածման հնարավոր գոտի: Ռազմավարական հնարավորությունների՝ սահմանային անվտանգության, տրանզիտային միջանցքների, էներգետիկ անվտանգության և միգրացիոն հոսքերի տեսանկյունից տարածաշրջանը բախվում է բարդ երկբևեռ իրավիճակի:

Հորմուզի նեղուցը, որով անցնում է համաշխարհային նավթի և հեղուկացված գազի առևտրի մոտ 20%-ը, փակվել է կամ գործում է խիստ սահմանափակ ռեժիմով՝ առաջացնելով նավթի գների կտրուկ աճ (Բրենթի հում նավթի գինը 2026 թվականի մարտի կեսերին հասել է բարելի դիմաց 100–120 դոլարի սահմանին) և գազի շուկայի անկայունություն: Այս շոկն ուղղակիորեն ազդում է Հարավային Կովկասի տնտեսությունների վրա՝ ներմուծման ծախսերի բարձրացման, ինֆլյացիոն ճնշման և լոգիստիկ շղթաների խափանման տեսքով:

Հայաստանի համար հիմնական ռիսկն Իրանի հետ առևտրային և էներգետիկ կախվածությանն է առնչվում: 2025 թվականի տվյալներով՝ Իրանական ուղղությունը կազմում է Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության մոտ 3.6%-ը (մոտ 768 մլն դոլար), սակայն ավելի քան 20% առևտուրը (հիմնականում Չինաստանից ներմուծում և Մերձավոր Արևելք արտահանում) անցնում է Իրանի տարածքով: Հայաստանը կախված է Իրանից նաև որոշ ապրանքների ներմուծման հարցով, որոնց այլընտրանքային աղբյուրներն ավելի թանկ են: Երկարաժամկետ խափանումները կարող են հանգեցնել ինֆլյացիայի բարձրացման և գների աճի: Բացի այդ, «գազ՝ էլեկտրականության դիմաց» համաձայնագրի շրջանակներում Իրանից ստացվող գազի խափանումը կարող է ազդել Հայաստանի ջերմային էլեկտրակայանների աշխատանքի վրա՝ բարձրացնելով էլեկտրաէներգիայի գները: Այլընտրանքային երթուղիները (Վրաստանով կամ Թուրքիայով) ավելի թանկ են և պահանջում են լրացուցիչ լոգիստիկ ծախսեր:

Վրաստանի տնտեսության վնասը կապվում է հիմնականում տուրիզմի և ավիացիոն հատվածի հետ: Տուրիզմը կազմում է ՀՆԱ-ի 7–8%-ը, և օդային ուղիների փակումը (Եվրոպա–Ասիա թռիչքների վերահսկողություն) հանգեցրել է զգալի կորուստների: Բացի այդ, Հորմուզի նեղուցի խափանումը բարձրացնում է նավթամթերքի գները, ինչն ազդում է տրանսպորտի և արտադրության ծախսերի վրա:

Ադրբեջանը, որպես նավթ և գազ արտադրող երկիր, կարճաժամկետ շահում է էներգետիկ շոկից: Ադրբե-

ջանի նավթի գինը հասել է բարելի դիմաց 119-ը դոլարի (2026 թվականի բյուջեն հաշվարկված էր բարելի դիմաց 65 դոլար), ինչը կարող է բյուջեի եկամուտները մեծացնել մոտ 400 մլն դոլարով յուրաքանչյուր 10 դոլար աճի դեպքում:[2] Այնուամենայնիվ, Իրանի տարածքով տարանցիկ ծավալները (10%-ից պակաս) խափանվել են, և երկարաժամկետ անկայունությունը կարող է ազդել տարածաշրջանային միջանցքների վրա: Լոգիստիկ առումով՝ հակամարտությունը խափանել է Տրանս-կասպյան միջազգային տրանսպորտային ուղին և «Թրամփի ուղի» նախագծերը: Իրանի թուլացումը կարող է երկարաժամկետ հեռանկարում ամրապնդել Միջին միջանցքը որպես Իրանից անկախ տրանզիտային ուղի, սակայն կարճաժամկետ խափանումները մեծացնում են տրանսպորտային ծախսերը և նվազեցնում տարանցիկ եկամուտները:

Ադրբեջանն իր նավթի մեծ մասն արտահանում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարով և, քանի որ Իսրայելը գնում է ադրբեջանական և ղազախական նավթ, որը տեղափոխվում է հենց այս խողովակաշարով, վերլուծաբանները նշում են, որ կան մտավախություններ, որ Իրանը կարող է թիրախավորել խողովակաշարը, եթե հակամարտությունը սրվի: Խողովակաշարի մեծ մասն անցնում է գետնի տակով, ինչը սահմանափակում է անօդաչու թռչող սարքերի կամ հրթիռային հարձակումների խոցելիությունը, չնայած Կասպից ծովում գտնվող ծովային նավթի և գազի հարթակները ու Սանգաչալի տերմինալը մնում են բաց:

Մտավախություններն ավելի մեծացան, երբ մարտի 5-ին չորս անօդաչու թռչող սարքեր հարվածեցին Ադրբեջանի արևմտյան էքսկլավ Նախիջևանին, որի հետևանքով 4 մարդ վիրավորվեց: Նախագահ Իլհամ Ալիևը նույն օրը կտրուկ հայտարարությամբ հարձակման համար անմիջապես մեղադրեց Իրանին: Ալիևն ամբողջությամբ փակեց Իրանի հետ սահմանը, բանակը դրեց մարտական պատրաստվածության ամենաբարձր մակարդակի վրա և խոստացավ հակահարված տալ: Նա նաև պահանջեց, որ Իրանը ներողություն խնդրի հարձակման համար և պատժի պատասխանատուներին: Ադրբեջանը նույնիսկ որոշեց փակել իր դեսպանատունը Թեհրանում և հյուպատոսությունը հյուսիսարևմտյան Թավրիզ քաղաքում՝ տարհանելով ամբողջ անձնակազմին:[3]

Լարվածությունը, կարծես, մեղմացավ, երբ երկու օր անց Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը զանգահարեց Ալիևին՝ հերքելով հարձակման պատասխանատվությունը, բայց խոստանալով հետաքննել այն: Հեռախոսազրույցից հետո Ադրբեջանը վերաբացեց սահմանն ապրանքների փոխադրման համար և մարդասիրական օգնություն ուղարկեց Իրան:

Կան նաև մտավախություններ, որ Իրան-ԱՄՆ-Իսրայել հակամարտության ընթացքում Հարավային Կովկասի ցամաքային միջանցքները կարող են դառնալ երկրորդական լոգիստիկ ուղիներ՝ հատկապես եթե Հորմուզի նեղուցը և Իրանի ափամերձ գոտիները երկար ժամանակ մնան խափանված կամ անվտանգության առումով անհուսալի: Այդուհանդերձ, Արցախի (Լաչինի) միջանցքը և Նախիջևանի ուղղությունը մնում են բարձր ռիսկային, քաղաքականորեն բեռնված և գործնականում անհասանելի ռազմական նպատակներով օգտագործման համար՝ հիմնվելով 2026 թվականի մարտի դրությամբ առկա իրավիճակի վրա:

2023 թվականի սեպտեմբերից հետո Ադրբեջանը վերահսկում է Լաչինի միջանցքի ողջ երկարությունը (Լաչին–Քաշաթաղ–Ստեփանակերտ ուղղությամբ), և այն մնում է ոչ գործունակ որպես տրանզիտային կամ ռազմական ուղի: Չնայած որոշ վերլուծաբաններ նշում են, որ Իրանի դեմ պատերազմը կարող է խթանել Հայաստան–Ադրբեջան համագործակցությունը

(օրինակ՝ հումանիտար օգնության կամ փախստականների տեղաշարժի համար), ռազմական մատակարարման նպատակով գործակցությունն անհավանական է:

Ո՛չ Արցախի (Լաչինի), ո՛չ էլ Նախիջևանի գոյություն ունեցող կամ պլանավորված ճանապարհները չեն կարող համարվել հուսալի ցամաքային ռազմական ուղիներ հակամարտության ընթացքում: Դրանք կամ փակ են, այսինքն՝ վերահսկվում են Ադրբեջանի կողմից առանց Հայաստանի մուտքի, կամ կախված են Իրանից, կամ պահանջում են Հայաստան–Ադրբեջան համագործակցություն, որը դեռևս բացակայում է՝ անվստահության և սահմանային լարվածության պատճառով:

Մյուս կողմից էլ, Իրան-ԱՄՆ-Իսրայել հակամարտության սկսվելուց ի վեր, այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը» դարձել է Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական վերադասավորման կենտրոնական տարրերից մեկը՝ միաժամանակ ենթադրելով ինչպես ռիսկերի խորացում, այնպես էլ ռազմավարական հնարավորությունների ընդլայնում:

Հակամարտության սկզբից ի վեր TRIPP-ի իրականացումը բախվում է կարճաժամկետ ռիսկերի հետ՝ կապված անվտանգության սպառնալիքների և ներդրումների հետաձգման հետ: Իրանը դիտարկում է նախագիծը որպես սպառնալիք իր տրանզիտային դերի (Հյուսիս-Հարավ միջանցք) և Հայաստանի հետ սահմանի համար՝ հաշվի առնելով ԱՄՆ-ի գերակշռող դերը: Պատերազմը մեծացրել է հիբրիդային գործողությունների հավանականությունը Սյունիքում (դրոններ, պրոքսի խմբեր), ինչը հետաձգում է շինարարությունը և բարձրացնում ապահովագրական ծախսերը: Այդուհանդերձ, Իրանի թուլացումը կամ իշխանության փոփոխությունը կարող է երկարաժամկետ հեռանկարում արագացնել TRIPP-ի իրականացումը՝ որպես Իրանից և Ռուսաստանից անկախ տրանզիտային ուղի Միջին միջանցքի շրջանակներում:

Այսպիսով, Իրան-ԱՄՆ-Իսրայել հակամարտությունը Հարավային Կովկասի համար ստեղծել է երկակի իրավիճակ՝ մի կողմից սպառնալիքների ու անկայունության աճ, մյուս կողմից՝ երկարաժամկետ հնարավորություններ: Անվտանգային ռիսկերը, տնտեսական ճնշումները, հումանիտար ճգնաժամի հավանականությունը և տրանզիտային միջանցքների հետաձգումը պահանջում են արագ և համակարգված արձագանք՝ տարածաշրջանային երկրների կողմից:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Իրան-ԱՄՆ-Իսրայել հակամարտությունը Հայաստանի համար առաջացրել է հիմնականում բացասական և ռիսկային հետևանքներ, որոնք զգալիորեն գերազանցում են հնարավոր օգուտները: Անվտանգային ճնշումները Սյունիքում, էներգետիկ ծախսերի աճը, առևտրային կապերի խափանումը Իրանի հետ և հումանիտար ռիսկերը (հնարավոր փախստականների հոսք) ստեղծում են ծանրաբեռնված իրավիճակ, որտեղ Հայաստանը հայտնվում է երկրորդական ճակատի մեջ՝ առանց իրական վերահսկողության կամ երաշխիքների: Այսպես կոչված՝ «Զանգեզուրի միջանցքը» (TRIPP) այս համատեքստում առավել խնդրահարույց է թվում: Այն ոչ միայն չի կառուցվել, և շինարարությունը հետաձգվում է անվտանգության ռիսկերի պատճառով, այլև Հայաստանի համար դառնում է սուվերենության սահմանափակման և արտաքին կախվածության աղբյուր: ԱՄՆ-ի գերակշռող դերն ընկերության կառավարման մեջ (74% բաժնեմաս), երկարաժամկետ կոնցեսիոն իրավունքները և հնարավոր ռազմական ներկայության սպառնալիքը Սյունիքում ստեղծում են իրավիճակ, երբ Հայաստանը ստանում է նվազագույն տնտեսական շահ՝ ի փոխարեն տարածքային ամբողջականության և անվտանգության հարցում լուրջ զիջումների: Ավելին՝ Իրանի թուլացումն իրականում կարող է մեծացնել Ադրբեջանի և Թուրքիայի ճնշումը Սյունիքի վրա՝ առանց Հայաստանի համար բավարար երաշխիքների:

Հղումներ

1 https://www.timesofisrael.com/liveblog_entry/trump-official-us-carried-out-900-strikes-during-first-12-hours-of-operation-epic-fury-against-iran/

2 https://oc-media.org/azerbaijan-eyes-oil-windfall-as-iran-war-rattles-energy-markets/

3 https://www.reuters.com/world/asia-pacific/missiles-drones-coming-iran-fell-airport-azerbaijan-source-says-2026-03-05/

Իրանի դինաստիական բեկումը. Ալի Խամենեիի սպանությունը և Մոջթաբա Խամենեիի «երկաթե» սերնդի ռազմավարական հայտը

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս

Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադրումից ի վեր ամենաազդեցիկ և հզոր առաջնորդի՝ Ալի Խամենեիի մահը ցնցեց ոչ միայն տարածաշրջանը, այլև ողջ աշխարհաքաղաքական համակարգը՝ վերածվելով մի դարաշրջանի ավարտի և նոր, ավելի անկանխատեսելի ու ագրեսիվ փուլի մեկնարկի: Այս իրադարձության ամենազավեշտալի և միևնույն ժամանակ հանելուկային կողմն այն է, թե ինչպես ստացվեց, որ երկրի ամենապաշտպանված մարդը, ում անվտանգությունը ապահովում էին բազմաշերտ ու բարձրակարգ համակարգերը, դարձավ խոցելի: Իրականում, Ալի Խամենեիի անվտանգության համակարգի ձախողումը վկայում է ոչ թե պարզ տեխնիկական թերության, այլ համակարգային խորքային ճաքերի և «ներսի դավաճանների» գործոնի մասին: Նման մակարդակի առաջնորդի սպանությունը գրեթե անհնար է առանց բարձրաստիճան անձի դավաճանության հենց անվտանգության համակարգի միջուկից, ինչը նշանակում է, որ իսրայելական Մոսադն ու ամերիկյան հատուկ ծառայությունները տարիների ընթացքում կարողացել էին ներթափանցել Թեհրանի ամենափակ օղակները:

Տպավորություն է, որ տարիներ շարունակ ԱՄՆ-ը և Իսրայելը մշակել էին ներքին հեղաշրջման և համակարգը ներսից պայթեցնելու սցենարներ՝ փորձելով օգտագործել սոցիալական դժգոհությունն ու էլիտաների միջև առկա հակասությունները: Սակայն այդ փորձերը ձախողվեցին, քանի որ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) կարողացավ երկաթե բռունցքով պահել ներքին կայունությունը և չեզոքացնել ցանկացած ընդվզում դեռևս սաղմնային վիճակում: Երբ Արևմուտքի համար պարզ դարձավ, որ դասական հեղաշրջումը հնարավոր չէ իրականացնել փողոցի կամ քաղաքական խմբավորումների միջոցով, հարվածն ուղղվեց դեպի համակարգի «գլուխը»՝ հույս ունենալով առաջացնել ուժային քաոս և կազմալուծել պետությունը: Սակայն արդյունքը եղավ ճիշտ հակառակը. իշխանության անցումը Մոջթաբա Խամենեիին տեղի ունեցավ կայծակնային արագությամբ՝ կանխելով ուժային վակուումը: Մ. Խամենեիի նշանակումը ոչ միայն հոր կտակն էր, այլև ԻՀՊԿ-ի վերջնական հաղթանակը քաղաքական դիվանագիտության նկատմամբ: Սա Իրանի պատասխանն էր ձախողված հեղաշրջման փորձերին. Արևմուտքն ակնկալվող թուլացման փոխարեն ստացավ մի առաջնորդի, ով զուրկ է հոր կրոնական սահմանափակումներից և առաջնորդվում է բացառապես ռազմական պրագմատիզմով:

Այս նոր փուլի ամենաէական առանձնահատկությունը Մ. Խամենեիի շուրջ համախմբված նոր էլիտան է: Իշխանության է գալիս ավելի երիտասարդ, տեխնոկրատ, բայց միևնույն ժամանակ ծայրահեղ ռադիկալ մի սերունդ, որը դաստիարակվել է պատժամիջոցների և մշտական դիմակայության պայմաններում: Այս «նոր գվարդիան» չի հիշում 1979 թ. հեղափոխության սկզբնական ռոմանտիզմը կամ Արևմուտքի հետ երբեմնի գոյակցությունը. նրանք տեխնոլոգիապես զարգացած են, գաղափարապես անզիջում և պատրաստ են ամենակոշտ գործողությունների՝ առանց երկար մտածելու աշխարհի արձագանքի մասին: Նրանց համար Արևմուտքը ոչ թե բանակցային կողմ է, այլ էկզիստենցիալ թշնամի, որի հետ հարաբերությունները կարող են կառուցվել միայն «զրոյական գումարով խաղի» սկզբունքով:

Մ. Խամենեին իր առաջին իսկ հայտարարություններով, մասնավորապես «կեղծ դրոշի» մարտավարության մասին թեզով, ցույց տվեց, որ որդեգրելու է ակտիվ պաշտպանության ուղին: Նա հասկացրեց, որ ցանկացած ներքին կամ տարածաշրջանային սաբոտաժ դիտարկվելու է որպես «սիոնիստական» սադրանք, ինչը թույլ է տալիս նոր ռադիկալ էլիտային

էլ ավելի խստացնել ներքին վերահսկողությունը և լեգիտիմացնել ռազմական պատասխանները: Կանխատեսվում է, որ Մ. Խամենեիի առաջին ռազմական քայլերը լինելու են շատ ավելի վճռական. հնարավոր է տեսնենք հեռահար հրթիռների և անօդաչու թռչող սարքերի նոր սերնդի կիրառում տարածաշրջանային թիրախների նկատմամբ, ինչպես նաև Իրանի միջուկային ծրագրի գործարկման կտրուկ արագացում՝ որպես վերջնական զսպման միջոց: Նոր ղեկավարությունը կարող է փորձել վերականգնել Իրանի հեղինակությունը՝ իրականացնելով «ցուցադրական պատժիչ» գործողություններ այն կետերում, որտեղ Արևմուտքը համարում էր իրեն անխոցելի:

Այսպիսով, ԱՄՆ-ի և Իսրայելի ծրագրած ներքին փլուզումը վերածվեց Իրանի նոր, ավելի կոշտ դինաստիական կառավարման հիմնադրմանը: Ա. Խամենեիի սպանությունը դարձավ այն վերջին կաթիլը, որը վերջնականապես թաղեց Իրանի հետ «փափուկ» երկխոսության հույսերը՝ երկիրը վերածելով մի հսկայական ռազմական ճամբարի, որտեղ երիտասարդ ու ռադիկալ առաջնորդները այլևս ստիպված չեն հաշվի նստելու հին գվարդիայի կրոնական վերապահումների հետ: Իրանը դուրս եկավ այս ճգնաժամից որպես ռազմականացված միապետություն, ինչը նշանակում է, որ տարածաշրջանում մեծ պատերազմի կամ լայնածավալ գործարքի հավանականությունը հասել է իր գագաթնակետին: Մ. Խամենեիի դարաշրջանը լինելու է ոչ թե գոյատևման, այլ ակտիվ էքսպանսիայի ժամանակաշրջան, որտեղ Թեհրանը պատրաստ է «վա բանկ» գնալ՝ սեփական շահերը պաշտպանելու համար:

Ըստ էության, Իրանի նոր ռադիկալ էլիտայի իշխանության գալը և Մ. Խամենեիի հաստատումը որպես առաջնորդ, ուղղակի և ճակատագրական ազդեցություն կունենա Հարավային Կովկասի, մասնավորապես՝ Հայաստանի և Ադրբեջանի շուրջ ստեղծված իրավիճակի վրա: Եթե Ա. Խամենեիի ժամանակ Թեհրանը խոսում էր «կարմիր գծերի» մասին, ապա Մ. Խամենեիի «նոր գվարդիան» պատրաստ կլինի այդ գծերը պաշտպանել զենքով:

Փաստացի, Մ. Խամենեիի շուրջ համախմբված ռադիկալ սպայակազմի համար Սյունիքով անցնող ցանկացած «էքստերիտորիալ միջանցք» (այսպես կոչված՝ «Զանգեզուրի միջանցք») դիտարկվելու է որպես ՆԱՏՕ-ի և Թուրքիայի ներխուժում Իրանի կենսական շահերի գոտի: Ի տարբերություն հին սերնդի, որը սահմանափակվում էր հայտարարություններով, նոր էլիտան հակված է ռազմական ներկայության ուժեղացմանը: Կանխատեսվում է, որ Իրանը կարող է պաշտոնական առաջարկ ներկայացնել Հայաստանին՝ Սյունիքում իրանական ռազմաբազա կամ համատեղ անվտանգության կենտրոն ստեղծելու վերաբերյալ:

Ավելին, նոր ռադիկալ էլիտան Բաքվին դիտարկում է ոչ թե որպես հարևան, այլ որպես Իսրայելի «ավիակիր» տարածաշրջանում: Ա. Խամենեիի սպանության մեջ Մոսադի հնարավոր մասնակցությունը նոր ղեկավարության աչքում լեգիտիմացնում է ցանկացած գործողություն Ադրբեջանի դեմ: Մ. Խամենեիի թիմը կարող է անցնել «հիբրիդային պատերազմի» մակարդակի՝ աջակցելով Ադրբեջանի ներսում կրոնական ընդդիմությանը և իրականացնելով թիրախային կիբերհարձակումներ էներգետիկ ենթակառուցվածքների վրա:

Քանի որ Մ. Խամենեիի էլիտան սերտ կապված է Մոսկվայի հետ, նրանք փորձելու են Հայաստանին պահել իրենց ազդեցության գոտում՝ միաժամանակ ձգտելով թույլ չտալ արևմտյան ուժերի (ԱՄՆ, ԵՄ) ներկայության ընդլայնումը: Նրանց մեսիջը Երևանին լինելու է հետևյալը. «Մենք ձեր անվտանգության միակ երաշխավորն ենք, բայց միայն այն դեպքում, եթե դուք չդառնաք հարթակ Արևմուտքի համար»:

Այս նոր սերնդի ռազմական տրամաբանությունը ենթադրում է, որ եթե Ադրբեջանը փորձի ուժով բացել միջանցքը, Իրանը չի սպասի միջազգային հանրության արձագանքին: Հնարավոր է՝ տեսնենք իրանական զորքերի ուղղակի մուտք ՀՀ տարածք՝ «տարածաշրջանային կայունության պահպանման» պատրվակով: Սա կլինի Մ. Խամենեիի «անակնկալներից» մեկը, որի մասին նա ակնարկում էր իր ելույթներում:

Բացի այդ, Իրանի նոր ղեկավարությունը կփորձի ամեն գնով կտրել Իսրայելի «մատակարարման ուղիները» Կովկասում: Սա նշանակում է ճնշում Վրաստանի վրա և լայնածավալ հետախուզական աշխատանք Ադրբեջանի սահմանամերձ գոտիներում:

Փաստացի, Մ. Խամենեիի և իր ռադիկալ թիմի համար Հայաստանի հարավը ոչ թե պարզապես հարևան երկրի տարածք է, այլ իրենց գոյաբանական անվտանգության վերջին պատնեշը: Նրանք պատրաստ կլինեն գնալու ամենածայրահեղ քայլերի՝ կանխելու համար աշխարհաքաղաքական շրջափակումը: Հայաստանի համար սա նշանակում է և՛ հզոր թիկունքի հնարավորություն, և՛ վտանգ՝ հայտնվելու երկու ռազմականացված հսկաների բախման էպիկենտրոնում: Կարող ենք արձանագրել, որ Իրանի ներքաղաքական տեկտոնիկ տեղաշարժերը և Մ. Խամենեիի առաջնորդությամբ ռադիկալ էլիտայի վերելքը ստեղծել են մի իրավիճակ, որտեղ համաշխարհային ուժային կենտրոնները ստիպված են վերանայել իրենց տասնամյակների ռազմավարությունը: Այս նոր իրողությունները տարբեր կերպ են ընկալվում համաշխարհային մակարդակում՝ խորացնելով գոյություն ունեցող աշխարհաքաղաքական ճեղքերը:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, օրինակ, հայտնվել է հերթական կառուցվածքային փակուղում: Մինչ Արևմուտքը փորձում է մշակել և սահմանել նոր, առավել խիստ պատժամիջոցների փաթեթներ «դինաստիական բռնապետության» դեմ, Ռուսաստանն ու Չինաստանը հետևողականորեն օգտագործում են իրենց վետոյի իրավունքը: Մոսկվայի և Պեկինի համար Մ. Խամենեիի Իրանը ոչ թե պարզապես գործընկեր է, այլև առանցքային դաշնակից՝ ընդդեմ արևմտյան էքսպանսիայի: Սա նշանակում է, որ միջազգային իրավունքի գործիքակազմը դժվար թե ի զորու լինի զսպելու Թեհրանի նկրտումները, քանի որ վերջինս ստացել է հզոր աշխարհաքաղաքական «թիկունք»:

Բրյուսելում և եվրոպական մայրաքաղաքներում տիրում է ընդգծված խուճապային տրամադրություն: Եվրոպացի առաջնորդները գիտակցում են, որ Իրանի ռազմականացված նոր ղեկավարության հետ լեզու գտնելը չափազանց դժվար է: Եվրոպայի համար սա նշանակում է էներգետիկ շուկաների վերջնական փլուզման սպառնալիք և Մերձավոր Արևելքից փախստականների նոր, անկառավարելի ալիքի վտանգ: Չնայած ԵՄ փորձերին՝ հանդես գալու որպես միջնորդ, Մ. Խամենեիի ռադիկալ թիմը առայժմ կտրականապես հրաժարվում է երկխոսությունից՝ եվրոպացիներին պիտակավորելով որպես ԱՄՆ-ի կամակատարներ, ինչը փակում է դիվանագիտական պատուհանը:

ԱՄՆ-ում Թրամփի վարչակազմը ևս կանգնել է դաժան իրականության առջև. նրանց «Գործարքների արվեստի» և առավելագույն ճնշման քաղաքականությունը ոչ միայն չթուլացրեց Իրանը, այլև հող նախապատրաստեց ամենառադիկալ տարրերի իշխանության գալու համար: Ուժային ճնշումը միայն ամրապնդեց վարչակազմի ներքին համախմբումը: Իսրայելը, իր հերթին, սթափ գնահատելով իրավիճակը, պատրաստվում է ուղիղ ռազմական բախման: Իսրայելական հետախուզական համայնքում տիրում է այն համոզմունքը, որ Մ. Խամենեիի Իրանն այլևս չի սահմանափակվի պրոքսի ուժերի միջոցով գործելով, այլ պատրաստ է ուղղակի և ճակատային հակամարտության:

Այսպիսով, Արևմուտքի փորձը՝ թուլացնելու կամ կազմալուծելու Իրանը բարձրաստիճան այրի սպանության և ներքին հեղաշրջման սցենարների միջոցով, հանգեցրեց տրամագծորեն հակառակ հետևանքի: Իրանը դուրս եկավ այս գոյաբանական ճգնաժամից որպես առավել միասնական, ռազմականացված և ռադիկալ տերություն: Նոր ղեկավարությունը պատրաստ է գնալու «վա բանկ»՝ տարածաշրջանային գերիշխանության հասնելու և սեփական շահերը պաշտպանելու համար: Հայաստանի համար այս նոր աշխարհակարգը ստեղծում է անվտանգային լուրջ հնարավորություններ՝ ի դեմս հզորացող և վճռական հարևանի, սակայն, միևնույն ժամանակ կտրուկ մեծացնում է համաշխարհային բախման էպիկենտրոնում հայտնվելու և աշխարհաքաղաքական հորձանուտի մեջ կորչելու ռիսկերը: ■

Նոր Սահմանադրությունը սպառնալիք պետականությանը

Անի Մելքոնյան
Պատմաբան

2025 թ. հունիսի 6-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց, որ այսպես կոչված «խաղաղության համաձայնագրի» կնքման համար, Հայաստանը պետք է փոխի իր Սահմանադրությունը,[1] որտեղ իբր «Ադրբեջանի նկատմամբ տարածքային նկրտումներ կան»:[2]

Իլհամ Ալիևն առաջին անգամ ՀՀ Սահմանադրությունը փոխելու պահանջի մասին հայտարարել էր 2021 թ. ապրիլի 10-13-ը Բաքվում տեղի ունեցած "New vision for South Caucasus: Post-conflict development and cooperation" միջազգային կոնֆերանսի ժամանակ. «Ի՞նչ պետք է առաջին հերթին անի Հայաստանը. պետք է հրաժարվի Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից, նոր սահմանադրություն գրի: Նրանց անհրաժեշտ է նոր սահմանադրություն ընդունել: ...Կարող եմ՝ նրանց լավ խորհուրդ տալ՝ թող իրենց Սահմանադրությունից բացառեն Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջները: Ես չգիտեմ՝ ո՞ր երկրի սահմանադրության մեջ կան այլ երկրի նկատմամբ տարածքային նկրտումներ: Համարում եմ, որ սա բացառիկ դեպք է, և յուրաքանչյուրը պետք է հասկանա, որ պատմության ընթացքում շատ պատերազմներ են եղել, և Ցեղասպանության հետ կապված նրանց կեղծ պատմությունն իրականության հետ որևէ կապ չունի»,- ասել է Ալիևը:[3]

Մինչև 2022 թ. Ալիևի պահանջը կատարելով, Փաշինյանի հրամանով կազմավորվեց այսպես կոչված «Սահմանադրական հանձնաժողովն» ու խորհուրդը, որոնք ««ճգնում են» Սահմանադրությունը «բարեփոխելու» ուղղությամբ, Նիկոլ Փաշինյանը նոր Սահմանադրություն գրելու որոշում կայացրեց փաստացի տուրք տալով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հերթական պարտադրանքին»:[4]

2025 թ. մայիսի 24-ին Նիկոլ Փաշինյանը որոշում ստորագրեց Նոր Սահմանդրության հայեցակարգ մշակելու մասին.

«Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունվարի 27-ի «Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ ձևավորելու, խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի փետրվարի 12-ի N 181-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 111-Ա որոշման՝ 1) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Խորհրդին՝

1) մինչև 2026 թվականի հունիսի 30-ը հաստատել հանձնաժողովի կողմից մշակված նոր Սահմանադրության հայեցակարգի նախագիծը և ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ.



2) մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատել հանձնաժողովի կողմից մշակված նոր Սահմանադրության նախագիծը և ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ».

3) N 2 հավելվածի՝ ա. ամբողջ տեքստում «Սահմանադրության փոփոխությունների» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «նոր Սահմանադրության» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով, իսկ «սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը՝ «նոր Սահմանադրության հայեցակարգ» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

բ. 37-րդ կետի 3-րդ ենթակետում «սահմանադրական բարեփոխումների նախագծի» բառերը փոխարինել «նոր Սահմանադրության հայեցակարգի նախագծի»:[5]

Օրեր առաջ հրապարակվեց նոր սահմանադրության նախագիծը, որտեղից իսպառ ջնջված է Հայաստանի Անկախության Հռչակագիրը, այլ կերպ ասած, Ալիևի պահանջով Հայաստանի իշխանությունը հրաժարվում է՝

1. Արցախի և Հայաստանի միավորման գաղափարից:
2. 1918 թ. Հայաստանի Հանրապետության ժառանգությունից՝ այլ կերպ ասած՝ տարածքից (որի զգալի մասն օկուպացված է Թուրքիայի կողմից), հիմնից, զինանշանից (որոնց փոփոխության մասին անդադար քարոզվում է), հավանական է, նաև դրոշից:
3. Արտերկրի հայության՝ Հայաստանի քաղաքացիության իրավունքից:
4. Հայերենի, որպես պետական լեզվի գործառնության ապահովումից:

5. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից:

Փոխարենը՝ նախաբանը ձևակերպված է.

«Հայաստանի Հանրապետության ժողովուրդը, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության անկախության, ինքնիշխանության և պետականության շարունակականության պահպանման, մարդու իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու, ժողովրդավարական և իրավական պետությունն ամրապնդելու, ժողովրդի անվտանգությունն ապահովելու և ընդհանուր բարեկեցությունը խթանելու նպատակներով, ինչպես նաև ապագա սերունդներին խաղաղ, անվտանգ և բարեկեցիկ հայրենիք ժառանգելու հանձնառությամբ, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»[6] - այլ կերպ ասած՝ Հայաստանի Հանրապետությունը դառնում է պատմություն, ազգային հիշողություն և համազգային նպատակներ չունեցող, կեղծ ժողովրդավարության քողի տակ թաքնված մի անատամ միավոր, որը պետական դիմագծից ու նպատակներից զրկված է:

Հետաքրքիր է, որ ժողովրդավարության մասին անդադար ճառող կառավարության Սահմանադրությունից հանված է՝ գործող Սահմանադրության 30-րդ հոդվածը, որտեղ սահմանվում է, որ

Կանայք և տղամարդիկ իրավահավասար են»:[7]

Ի՞նչ է սա նշանակում, Հայաստանի «ժողովրդավար» իշխանության համար կանայք և տղամարդիկ իրավահավասար չե՞ն թե՞ Հայաստանի Հանրապետությունը հրաժարվում է, ***կին*** և ***տղամարդ*** եզրույթների օգտագործումից և անցում կատարում եվրոպական «ընտրովի սեռ» հասկացությանը:

Գործող սահմանադրության 35-րդ հոդվածի երկրորդ կետը սահմանում է.

2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդն ունեն հավասար իրավունքներ:[8]

Նոր Սահմանադրության նախագծում[9] այս կետը ևս հանված է, կարո՞ղ ենք ենթադրել, որ կինը ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս՝ տղամարդուն հավասար իրավունքներ չունի, ինչպես մահմեդական (օրինակ՝ ադրբեջանական) հասարակության մեջ, այսինքն՝ Ալիևը Փաշինյանի միջոցով հայ ժողովրդին պարտադրում է ադրբեջանական նիստ ու կա՞ց, թե՞ պարզապես նոր Սահմանադրությունն ընդունվում է առաջիկա տարիներին (փաշինյանական իշխանության վերարտադրվելու դեպքում, մինչև 2026 թ. դեկտեմբեր-2027 թ. հունվար) Հայաստանում հաստատվող մոտ 500.000 ադրբեջանցիների համար:

Հանվել է նաև գործող Սահմանադրության 36-րդ հոդվածի՝

3. «Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների մասին»[10] պահանջը:

Այլ կերպ ասած, չափահաս երեխաներն այլևս պարտավոր չե՞ն հոգ տանել իրենց ծնողների մասին....

Գործող Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին կետում ասվում է.

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք:[11] Այսպես կոչված ժողովրդավար իշխանությանը պարտադրված Սահմանադրությամբ, այս կետը փոխված է՝ Յուրաքանչյուր ոք ունի կարծիքի ազատության իրավունք,[12] այլ կերպ ասած, դու կարող ես ունենալ ազատ կարծիք, բայց այն ազատորեն արտահայտելու իրավունք չունես, որովհետև այն կարող է դուր չգալ, ասենք պաշտոնական Բաքվին կամ պաշտոնական Անկարային: Նույն կետից հանվել է նաև. «Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝

տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»[13]- այսինքն՝ եթե Հայաստանի իշխանությունը կամ որևէ մարզի մարզպետարան կամ որևէ քաղաքի քաղաքապետարան համաձայն չէ, ապա ՀՀ ցանկացած մարզում, քաղաքում կամ գյուղում բնակվող ՀՀ քաղաքացի չի կարող որևէ տեղեկություն իմանալ՝ առավել ևս ասենք՝ ֆեյսբուքյան հարթակում տարածել՝ օրինակ Մեծ Հայքի Արցախ նահանգի, հայոց ցեղասպանության, քրիստոնեության, Ամարասի դպրոցի և ցանկացած այլ տեղեկություն:

Ա՛յ քեզ, «ժողովրդավար» ու «եվրոպացի», բայց մահմեդական օրենքներով առաջնորդվող իշխանություն:

Ինչևէ, անցնենք առաջ, առավել հակահայկական և հակամարդկային «բարեփոխումներին» ծանոթանալու համար:

Այսպես, ՀՀ գործող Սահմանադրության 47-րդ հոդվածը սահմանում է ՀՀ քաղաքացիության իրավունքը.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:
2. Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:
3. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:
4. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք են բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով:[14]

Այս չորս կետերից վերջին 3-ը հանվել են, այլ կերպ ասած՝ հայ երեխան, որի ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ ոչ, ՀՀ քաղաքացիության իրավունք ձեռք չի բերում, ինչ է սա, եթե ոչ հակապետական ու հակաազգային որոշում, նույն կերպ, եթե մարդը ծնվել է, ենթադրենք Կանադայում՝ և 1915 թ. հայոց ցեղասպանության հետևանքով հայրենազրկված հայի ժառանգ է ու ցանկանում է ՀՀ քաղաքացի դառնալ, անիմաստ ու երկարատև քաշքշուկների մեջ պետք է ընկնի, որովհետև այլևս պարզեցված կարգով չի կարող ՀՀ քաղաքացիություն ստանալ:

Ինչ է սա, եթե ոչ Սփյուռքահայերին Հայաստանից վանելու, հայրենադարձվածներին արտագաղթի մղելու և ադրբեջանցի «փախստականների վերադարձի» համար հող նախապատրաստելուն միտված քայլ:

Իրեն «ժողովրդի իշխանություն» հռչակած փաշինյանական վարչակազմը, հանել է նաև գործող սահմանադրության Հոդված 58. Գործադուլի իրավունքը.

1. Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք: Գործադուլի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:
2. Գործադուլի իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:[15]

Այսինքն, ՀՀ-ում աշխատողները փաստացի զրկվում են իրենց շահերը գործադուլի միջոցով պաշտպանելու՝ միջազգային պրակտիկայում ամենատարածված իրավունքից՝ ժողովրդավարական և սոցիալական պետությունից, սահուն անցում, դեպի միջնադարյան ճորտատիրական հասարակարգ, ինչի մասին է վկայում նաև նիկոլյան սահմանադրության նախագիծը: Գործող Սահմանադրությունից հանվել են ևս երկու հոդվածներ՝

82-րդ Աշխատանքային պայմանները.

Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք[16] և 84-րդ՝ «Արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը».

1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:[17] Փաստորեն կարո՞ղ ենք ենթադրել, որ ՀՀ-ում աշխատողը զրկվում է առողջ, անվտանգ ու արժանապատիվ աշխատանքային պայմանների, հանգստի և վճարովի արձակուրդի իրավունքից, իսկ հասարակության ամենախոցելի խավի՝ տարեցների և կարիքավորների արժանապատիվ գոյության իրավունքը, Սահմանադրությունից հեռացնելը՝ միանգամայն բխում է Նիկոլ Փաշինյանի կարիքավորներին ուղղված «Աղքատը աղքատ է՝ իր խնդիրն է, ով է ասել, որ պատասխանատուն մենք ենք»[18] հայտարարության տրամաբանությունից, այսինքն՝ կարիքավոր ժողովրդի քվեներով իշխանության հասած և աջ ու ձախ նույն ժողովրդին սրտիկներ ուղարկող վարչապետը, պարզ ու բացահայտ ասում է, որ ժողովուրդն իրեն միայն ձայն տալու համար է պետք, իսկ նրա կյանքի որակի համար պետությունն ու իշխանությունը պատասխանատվություն չեն կրում: Ահա

թե ինչու է ամբողջապես հեռացվել գործող Սահմանադրության 86-րդ հոդվածը.

«Պետության քաղաքականության հիմնական նպատակները: Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.
2) բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը.
3) բնակարանային շինարարության խթանումը.
4) կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը.
5) ծնելիության և բազմազավակության խթանումը.
6) երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը.
7) բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.
8) հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը.
9) սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը.
10) տարածքային համաչափ զարգացումը.
11) ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը.
12) քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը.
13) անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության ստացումը.
14) հիմնարար և կիրառական գիտության զարգացումը.
15) ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը.
16) բարեգործության խթանումը՝ մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով»[19] - փաստացի կառավարությունը հրաժարվում է իր պարտականությունները կատարելուց, և իր գոյության միակ իմաստը՝ ամենայն հավանականությամբ, համարում է՝ շրջագայելը, կարկանդակ ու եգիպտացորեն ուտելը, երգելն ու պարելը, և, իհարկե, Ալիևի բոլոր հրամանները գերազանցիկ աշակերտի ճշտապահությամբ կատարելը:

Միապետական հակումներ ունեցող ու ադրբեջանական բռնապետության ճանապարհով ընթացող իշխանությունը իհարկե չէր կարող գործող Սահմանադրությունից չհեռացնել 113-րդ՝ «Հարցապնդումները» հոդվածը, ըստ որի՝



1. Ազգային ժողովի խմբակցություններն ունեն Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունք: Կառավարության անդամները հարցապնդմանը պատասխանում են այն ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում:

2. Հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում: Խմբակցության առաջարկությամբ հարցապնդման պատասխանը քննարկվում է: Եթե քննարկման արդյունքով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից ներկայացվում է վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ, ապա կիրառվում են Սահմանադրության 115-րդ հոդվածի դրույթները: Հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը:[20]

Այս հոդվածը հեռացնելով, փաստորեն ՀՀ քաղաքացու կողմից ներկայացուցչական մանդատ ստացած պատգամավորները զրկվում են այդ նույն քաղաքացու շահերը ոտնահարող կառավարության անդամից կամ վարչապետից գրավոր պատասխան պահանջելու իրավունքից, այլ կերպ ասած՝ «իշխանություն եմ ձեռք գցել, ինչ ուզեմ կանեմ, թող ոչ ոք չհարցնի՝ թե ինչ ու ինչու եմ անում» - շատ «ժողովրդավարական» մոտեցում, այսպես կոչված գործող իշխանության կողմից:

Սահմանադրությունից հեռացվել է նաև 120-րդ «Արտակարգ դրությունը» հոդվածի. «4. Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»[21] – կետը: Այսինքն՝ իրավունք ունենք ենթադրելու, որ արտակարգ դրության ռեժիմը կարող է մտցնել կառավարությունը, անկախ ԱԺ կարծիքից և ցանկացած պահի, երբ օրինակ ժողովուրդը դուրս կգա փողոց կառավարության հրաժարականը պահանջելու. «ժողովրդավարության բաստիոնի» միահեծան բռնապետության ցայտուն օրինակ:

Գործող Սահմանադրության 123-րդ Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները հոդվածի 3-րդ կետով.

Հանրապետության նախագահն իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է, և առաջնորդվում է բացառապես ***համապետական*** և ***համազգային շահերով***[22] հասկացությունները փոխվել են **պետական շահ** հասկացությամբ: ***Համապետական*** և ***համազգային շահերով*** հասկացությունը՝ պետական շահ հասկացությամբ է փոխվել նաև Սահմանադրության 127-րդ հոդվածում՝ Նախագահի երդման տեքստում:[23]

Այս փոփոխություններն իհարկե զարմանալի չեն, հաշվի առնելով Փաշինյանի և նրա վարչակազմի ***ազգ*** և ***ազգային*** բառերի նկատմամբ ունեցած վախն ու խորշանքը, բայց հարց է առաջանում, եթե ***ազգային*** և ***համազգային*** բառերից հրաժարվում եք, այդ դեպքում ո՞ւմ պետությունն է ՀՀ-ն, եթե ոչ հայ ազգի, մի գուցե Ալիևի ասած «Արևմտյան Ադրբեջանի փախստականների» և ու՞մ պետական շահի մասին է խոսքը, եթե ոչ համայն աշխարհի հայերի միակ ազգային պետության....

Մեկ այլ շատ կարևոր դրույթ է գործող Սահմանադրության 205-րդ հոդվածը, որի 1-ին կետով սահմանված է՝ *Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են հանրաքվեների միջոցով:* [24] Այս կետի փոփոխության համար, որպես անցումային դրույթ, սահմանվել է. **Վերպետական միջազգային կազմակերպության անդամակցության կասեցման կամ չեղյալ հայտարարելու հարցը լուծվում է Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի կասեցման կամ չեղյալ հայտարարելու կանոններով այն դեպքում, երբ տվյալ վերպետական կազմակերպությանը Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է մինչև 2015 փոփոխություններով Սահմանադրության 205-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը՝ Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացմամբ:**[25]

Այլ կերպ ասած, հայ ժողովուրդը զրկվում է ՀԱՊԿ-ում, ԱՊՀ-ում մնալ-չմնալու, 102-րդ ռազմաբազան դուրս բերել-չբերելու հարցերը որոշելու իրավունքից, և այդ իրավունքը վերապահվում է ԱԺ-ին, որի իշխող մեծամասնությունը, գոնե այս պահին, առաջնորդվում է բացառապես թուրք-ադրբեջանական շահերով:

Այս Նիկոլյան սահմանադրության նախագիծը ոչ այլ ինչ է, եթե ոչ Հայաստանի Հանրապետության «Մահվան վկայականը», և եթե հայ ժողովուրդը այս տարվա հունիսի 6-ին թույլ տա Նիկոլ Փաշինյանին վերարտադրվել, դա կնշանակի, որ իր ստորագրությունն է դնում ՀՀ «Մահվան վկայականի» տակ և համաձայնում ՀՀ-ի լուծարման ու Հայաստանի հայաթափման ՔՊ-ա-թուրքական ծրագրին:

Ընտրությունը հայ ժողովրդինն է...

Ծանոթագրություններ

1. https://www.trtrussian.com/article/18170603
2. https://168.am/2024/06/20/2062762.html
3. Նույնը
4. Նույնը
5. https://www.e-gov.am/decrees/item/26999/?fbclid=IwZXh0bgNhZW0CMTAAAR1z2S_stJnkVi2GcEaYZ8IniilCYDR68ahnOMUc8Szl2OsPKJEan-M_lcc_aem_ZmFrZWR1bW15MTZieXRlcw
6. file:///C:/Users/DM/Downloads/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf
7. https://www.arlis.am/hy/acts/143723 և, file:///C:/Users/DM/Downloads/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf
8. https://www.arlis.am/hy/acts/143723
9. file:///C:/Users/DM/Downloads/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf
10. Նույնը
11. https://www.arlis.am/hy/acts/143723
12. file:///C:/Users/DM/Downloads/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf
13. https://www.arlis.am/hy/acts/143723
14. Նույնը
15. Նույնը
16. Նույնը
17. Նույնը
18. https://www.youtube.com/shorts/CqQkgWy-jIE
19. https://www.arlis.am/hy/acts/143723, և file:///C:/Users/DM/Downloads/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf
20. Նույնը
21. Նույնը
22. Նույնը
23. Նույնը
24. Նույնը
25. Նույնը

Գիտակրթական էլիտայի լռեցումը «co-optation of elites»

Անժելա Հարությունյան
Բանասեր, մանկավարժ



Կրթական ոլորտի մանիպուլյացիա կամ էլիտաների «գրավում», «կոոպտացիա» ‘co-optation of elites’

Գիտեք, թե ինչ է «**co-optation of elites»՝ էլիտաների «գրավում», «կոոպտացիա»** կամ «**էլիտաների մեղսակցություն**» հասկացությունը:

Ժամանակների խաչմերուկում, երբ ազգերը կանգնում են օրհասական հարցերի՝ իրենց ապագայի, պետականության, ինքնության ու ազգային արժեքների պահպանման խնդրի առջև, առաջիններից մեկը, ում ժողովուրդը նայում է հույսով, ուսուցիչն է, մանկավարժը, գիտնականը, մի խոսքով՝ *գիտակրթական էլիտան*: Նրանք ոչ միայն լուսավորող, ուղեկցող, ազգային մտածողություն ու պատասխանատվություն կրող, օրինակ հանդիսացող ու առաջնորդող ուժ են, այլև այդ ամենը նոր սերունդների մեջ սերմանող:

Բայց ինչ է տեղի ունենում, երբ հենց այդ ուսուցչին, մանկավարժին, գիտնականին իշխանությունը սկսում է օգտագործել՝ լռեցնելու համար:

Երբ երկրի ապազգային կամ կործանարար իշխանությունը սկսում է «դիմել» ուսուցիչներին՝ ոչ թե աջակցելու նրանց ազնիվ առաքելությանը, այլ շեղելու, սա այլևս սովորական կրթական գործընթաց չէ: Սա դառնում է մանիպուլյացիա, քողարկված լռեցում:

Դասագրքեր, մշակումներ, հրապարակումներ, «խորքային բովանդակությամբ» շղարշված կրթական գրանտներ, վերապատրաստումներ, հաճելի գիտաժողովներ, գործուղումներ: Իսկ նպատակը մեկն է՝ նրանց ներառել գործընթացների մեջ, որոնք թեև ունեն կրթական և մշակութային շղարշ, իրականում համակարգված ձևով լռեցնում են ուսուցչին, մանկավարժին, գիտնականին՝ զբաղեցնելով նրանց ժամանակը, միտքը:

Երբեմն ուսուցիչներն ու գիտնականները նույնիսկ չեն էլ գիտակցում՝ ինչ գործիքի են վերածվել, չեն էլ հասկանում, որ պարզապես դարձել են իշխանության ցուցադրական նախագծերի մի մասը, իշխանությունների քաղաքական շահի սպասարկուն:

Սա մտավորականության քաղաքական մանիպուլյացիայի դասական օրինակ է, երբ գիտակրթական էլիտան դառնում է ոչ թե հասարակության բարոյական խիղճը, առաջ մղող ուժը, այլ իշխանության քարոզչական ծրագրերի ԶԲԱՂՎԱԾ մասնակիցը: Այդպիսի էլիտայի ներկայացուցիչը՝ լինի գիտնական, դոցենտ, մանկավարժ, թե ուսուցիչ, չի բողոքում՝ նա «ներառված» է, բայց հենց այդ ներգրավվածությամբ էլ նա մեղսակից է:

Հենց սա է **co-optation of elites»՝ էլիտաների «գրավում», «կոոպտացիա»** «էլիտայի մեղսակցություն» հասկացությունը, այլ կերպ ասած՝ բռնատիրական ռեժիմին հանցակից լինելը: Այս հասկացությունը ի հայտ է եկել դեռևս սոցիոլոգիայի և քաղաքական գիտությունների վաղ փուլերում՝ բացատրելու, թե ինչպես է իշխող խումբը երկար ժամանակ պահպանում իր իշխանությունը առանց հեղափոխությունների կամ բռնի մեթոդների, այսինքն՝

- **մրցակից ուժերի չեզոքացմամբ,**
- **հնարավոր առաջնորդների և հակառակորդների ներգրավմամբ իշխող համակարգի մեջ,**
- **հասարակական ազդեցիկ մարդկանց «գնելու» կամ շահագրգռելու միջոցով**:

Սա գործում է մեկ հիմնական նպատակով՝ **կանխել հնարավոր սպառնալիքները գործող իշխանության հանդեպ**՝ պոտենցիալ ընդդիմադիր ուժերին «համակարգի» մեջ ներառելով: Այսպիսով՝ իշխողները ոչ միայն ճնշում են մրցակիցներին, այլև **նրանց դարձնում են իրենց համակարգի մաս, «հանցակից»**:

Հարց 1. Իսկ ինչու են հատկապես գիտակրթական էլիտաները ներգրավվում կոոպտացիայի գործընթացում

1. Քանի որ գիտնականները, մտավորականները, ուսուցիչները հասարակության աչքում ունեն բարձր վստահություն: Իշխող խմբերը փորձում են նրանց ներգրավելով՝ ստեղծել տպավորություն, որ պետությունը/ռեժիմը «բարձր մտածող» մարդկանց աջակցության կարիքն ունի:
2. Քանի որ գիտակրթական էլիտան կարող է վտանգավոր լինել՝ որպես քննադատական հզոր ուժ, որն ազդեցություն ունի հասարակության վրա: Այսինքն՝

եթե նրանք մնան դուրս համակարգից, կարող են դառնալ հակասության մեջ գտնվող ուժ, այսինքն՝ վտանգ իշխող էլիտայի կայունության համար:

Այս պատճառներից էլ ելնելով՝ իշխողները նախընտրում են «փաղաքշել» գիտակրթական էլիտային՝ վերջինիս առաջարկելով պաշտոններ, ակադեմիական վարկանիշ, ֆինանսավորում, գործուղումներ, պետական հանձնաժողովներում կամ խորհրդատվական մարմիններում տեղ և աստիճան և այլն:

Սա կոչվում է «neutralizing potential dissent» – հնարավոր ընդդիմության կանխարգելում ներգրավման միջոցով:

Հարց 2. Ինչո՞ւ գիտակրթական էլիտան, որն ունի քննադատական միտք, գաղափար, ազգային և համամարդկային բարձր արժեհամակարգ ու դրանով նաև սերունդ է կրթում ու ձևավորում, իր գաղափարական ու վերլուծական ներուժով չի կարողանում դիմակայել կոոպտացիային և աստիճանաբար դառնում է «լռեցված, կույր գործիք» իշխանության ձեռքին:

Շատ պարզ պատճառով, քանի որ նրանց ներգրավումն ընթանում է՝

- **պատվելով,**
- **շնորհակալությամբ,**
- **հարգանքի տեսքով,**
- **տիտղոսներով,**
- **մասնագիտական ինքնահաստատմամբ:**

Այսպիսով, գործընթացը չի ընկալվում որպես հպատակեցում, այլ՝ որպես *գնահատում*:

Վտանգը հենց այստեղ է. մարդը չի զգում, որ կորցնում է անկախությունը:

1. Գիտնականները հաճախ կարծում են, թե պետական հանձնախմբում, խորհրդատվական մարմնում կամ համալսարանական բարձր պաշտոնում լինելով՝ **ավելի մեծ ազդեցություն կունենան, կկարողանան իրական փոփոխություններ անել, կօգնեն հասարակությանը**: Այսինքն՝ նրանք փորձում են *օգտագործել* իշխանությանը՝ չնկատելով, որ իշխանությունն է օգտագործում իրենց:

2. Մտավորականները հաճախ ասում են. «Եթե ես չլինեմ ներսում, ավելի վատ կլինի: Լավ է, որ ես որոշումների կայացմանը մասնակցեմ»: Այս ինքնարդարացումն էլ հենց բերում է աստիճանական փոխզիջումների:

3. Երբ մարդը մտնում է համակարգ, նա.

- սկսում է պատասխանատվություն կրել համակարգի պահպանման համար,
- ենթարկվում է ներքին լոյալության ճնշումներին,
- զգում է, որ իր անվտանգությունն ու կարիերան կախված են համակարգից,
- աստիճանաբար կորցնում է քննադատելու ազատությունը, որովհետև «շատ բան գիտի ներսից»,
- նաև մտածում է, որ ինքը ներսում է, իսկ եթե շատ քննադատի, կկորցնի իր ունեցած քիչ թե շատ ազդեցությունը:

4. Շատ մտավորականներ սկսում են մեծ արժեքներով, բայց դառնում են պրագմատիկ: Այն, ինչ սկզբում թվում էր անհնարին փոխզիջում, դառնում է «խելամիտ փոխզիջում»: Սա կոչվում է **“erosion of ideals”** – իդեալների մաշում:

Համակարգը մարդուն ներքաշում է դեպի «կառավարվող» վարք: Եթե բոլորը լուռ են, ինքը նույնպես լռում է: Եթե բոլորը համաձայնում են, ինքը մտածում է, որ սխալ է հենց ինքը:

5. Բարձր ինտելեկտով մարդիկ հաճախ ունեն այն պատրանքը, թե իրենց չեն կարող հեշտությամբ մանիպուլացնել: Եվ հենց սա նրանց դարձնում է առավել խոցելի: Իշխանությունը միշտ ներգրավում է ոչ թե պարզ մարդկանց, այլ՝ *վստահող, բարոյական, պատասխանատու, բարձր գաղափարներով օժտված մարդկանց:*

Որովհետև նրանք լավագույն գործիքներն են:

6. «Լռեցված» լինելը միշտ չէ, որ գիտակցված է: Գիտնականը կարող է իրեն համարել օբյեկտիվ, բայց իրականում պարզապես չեզոքացրել է իր սեփական քննադատական ուժը՝ առանց գիտակցելու:

7. Չլինելու վախը՝ «Եթե ես գնամ, ուրիշը կգա, ով ավելի վատը կլինի»: Շատ մտավորականների մոտ սա ուժեղ ներքին արդարացում է:

Այնուամենայնիվ, սա մարդկային, հոգեբանական պաշտպանական մեխանիզմ է, որը թույլ է տալիս մարդուն *չտեսնել*, որ ինքն արդեն դարձել է համակարգի կույր գործիքը: Ահա սա է հմտորեն մշակված լռեցման ռազմավարությունը, ավելի տակտիկական մոտեցում է իշխանության կողմից՝ ուսուցիչների, մտավորականների հանդեպ, երբ վերջիններիս կարծես շնորհվում է «մասնագիտական կարևորություն», մինչդեռ այդ ընթացքում իրական և լրջագույն խնդիրների մասին չեն խոսում. կամ ժամանակ չունեն քննադատական ձայն բարձրացնելու, կամ վախենում են կորցնել արդեն ընձեռված հնարավորությունը: Այս երևույթը նոր չէ: Այսպես էին Սովետական տարիներին որոշ գրողներ ու մանկավարժներ դարձել պաշտոնապես սիրված ու «պատվարժան»: Նույն երևույթը իր դրսևորումն ուներ Նացիստական Գերմանիայում:

Քննական-վերլուծական մտածողության ձևավորում

Վերը նշված մթնոլորտում վճռորոշ նշանակություն ունի քննական մտածողությունը հենց ուսուցչի համար՝ հասկանալու, թե իրականում ինչին են ծառայում իրեն առաջարկվող այդ գեղեցիկ նախաձեռնությունները:

Որովհետև ուսուցիչը ոչ միայն գիտելիք փոխանցող է, այլ նաև քննական մտածողությամբ իրավագիտակից քաղաքացի ձևավորող: Իսկ քաղաքացի ձևավորելն առանց օրինակելիության ու ազնվության՝ կեղծ է:

Երբ ուսուցիչը խոսում է ազատության, քաղաքացիական պատասխանատվության ու արդարության մասին, բայց ճակատագրական պահին և ազգի առջև ծառացած օրհասական աղետի ժամանակ չի դրսևորում վճռականություն՝ կանգնելու իր ժողովրդի, ճշմարտության, ոտնահարվող ազգային արժեքների կողքին, նա փոխանցում է բացասական ուղերձ: Չէ՞ որ երեխան չի սովորում միայն խոսքով, նա սովորում է օրինակով:

Երբ ուսուցիչը պայքարի առաջին շարքում չի կանգնում, երբ նա լռում է կամ զբաղված է գեղեցիկ գաղափարներ, մտքեր ու նյութեր փաթեթավորելով ու սրբագրելով, ապա աշակերտը այդպես էլ չի իմանում, որ այդ շարքում կանգնելը **ԱՌՀԱՍԱՐԱԿ ՀՆԱՐԱՎՈՐ ԷՐ:**

Իսկ իրականում դա հենց այն է, ինչին լռեցնող համակարգը ցանկանում է հասնել:

Քաղաքացիական պատասխանատվություն, ուսուցիչը որպես քաղաքացի

Ուսուցիչը, մանկավարժը ոչ միայն գաղափար փոխանցող է, այլև դրա կրողն ու կատարողը: Ուսուցիչը չի կարող իր աշակերտից պահանջել իրավագիտակցություն, հանրային պայքար, ճշմարտության ձգտում, լինել պատասխանատու քաղաքացի, եթե անհրաժեշտ պահերին ինքն իրեն որպես պատասխանատու քաղաքացի չի դրսևորում: Դու չես կարող ձևավորել կարողունակ սերունդ, եթե դու ինքդ կարողունակ չես:

Այսինքն՝ ունենք հստակ պատկեր, որ գործում է գիտակրթական էլիտայի կոոպտացիա: Ինչու, քանի որ բացի վերը նշվածից՝ գիտակրթական էլիտան կրում է ուղիղ ռիսկեր՝

- աշխատանքը կորցնելու վախ,
- պաշտոնի կամ աստիճանի կորուստ,
- տարիների ընթացքում ձևավորված հեղինակության և վաստակի կորստի վտանգ:

Թվում է, թե բարձր արժեքներից և վեհ գաղափարներից խոսողները և դրանք ուսուցանողներն իրավունք անգամ չունեն արդարանալու վախի կամ մեկ այլ պատճառաբանությամբ: Չէ՞ որ գիտակրթական էլիտան բարձր գիտելիք ու մտավոր հեղինակություն ունեցող մարդկանց համայնքն է, որի դերը հասարակության մտածողության ձևավորումն ու ազգային արժեքների պաշտպանությունն է: Նրա առաքելությունն է վտանգի պահին ասել ճշմարտությունը, զգուշացնել և առաջնորդել հանրային գիտակցությունը: Եթե պետականությունն ու ազգային ինքնությունը վտանգված են, իսկ այդ «էլիտան» հայտարարում է, թե քաջություն ու վճռականություն չունի, չի կրում ազգային, բարոյական և մասնագիտական պատասխանատվություն, ապա դա գիտակրթական էլիտա չէ: Եվ իրենց մոտեցումն իրավիճակին ոչ այլ ինչ է, քան բարոյական ու մտավոր հրաժարում սեփական պատասխանատվությունից, իսկ ամեն պարտություն սկսվում է մտավոր պարտությունից:

Այսօր, ցավոք, Հայաստանում չկա գիտակրթական էլիտա: Կան անհատներ՝ ազգային ինքնության պահպանման, ազգակործան ցանկացած դրսևորման դեմ պայքարող, բայց, ցավոք, վերջիններս քիչ են:

Հնարավոր լուծումներ

Պարզ քննադատությունն ու բարոյական կոչերը քիչ արդյունավետ են, քանի որ լռող գիտակրթական էլիտայի մի մասն արդեն ընդունել է պարտությունը: Փոխարենը անհրաժեշտ է ստեղծել համակարգեր, որոնք կապահովեն գիտակրթական էլիտայի ինստիտուցիոնալ անկախությունը: Դա հնարավոր է միայն անկախ, իրավականորեն պաշտպանված syndicat-ների կամ կազմակերպությունների միջոցով: Այս կառույցները պետք է ապահովեն անանուն բողոքների ներկայացումը և իրավական պաշտպանությունը՝ առանց անձնական հետևանքների համար վախի:

Եվրոպական ժողովրդավարական երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեդիայում, Նիդերլանդներում, Դանիայում, ինչպես նաև Հյուսիսային Ամերիկայում՝ Կանադայում և ԱՄՆ-ում, նման համակարգերն արդյունավետ են, քանի որ ունեն սահմանադրական պաշտպանություն, ֆինանսական անկախություն և դատարան դիմելու իրական մեխանիզմներ: Այդ երկրներում գիտնականները կարող են բացահայտորեն քննադատել պետական քաղաքականությունը՝ չվախենալով աշխատանքը կորցնելուց, ինչն ապահովում է քննադատական ու վերլուծական մտածողություն: Արդյունավետության հիմքում դրված է օրենքի գերակայությունը և ինստիտուտների անկախությունն իշխանությունից՝ ժողովրդավարական համակարգերում:

Ի հակադրություն, ավտորիտար կամ կիսավտորիտար երկրների, ինչպիսիք են՝ Ռուսաստանը, Չինաստանը, Սաուդյան Արաբիան, ինչպես նաև որոշ Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի երկրներ, նման կառույցները ձևական են կամ չեն գործում: Այդ երկրներում դրանք կախված են իշխանությունից և չունեն իրավական ազդեցություն, ինչի պատճառով քննադատող գիտակրթական էլիտան ենթարկվում է ճնշման, պաշտոնանկության կամ լռեցման:

Այսպիսով՝ կրթության համակարգային բարելավման իրական ճանապարհներից մեկն անկախ ու պաշտպանված նման ինստիտուտների ստեղծումն է: Ուստի, երբ շարունակաբար բոլոր հարթակներից հնչում է զուտ քննադատություն կամ էլ խոսվում է կրթության որակի բարելավման այս կամ այն ծրագրի մասին, համակարգային փոփոխության, կարողունակ գործուն ինստիտուտներ ունենալու ցանկության մասին, մտածողության փոփոխությունից ու զարգացման տանող ուղիների որոնումներից, ապա վերջիններիս իրագործման պարզ ձևերից մեկն էլ սա է: Իսկ ինչ ճանապարհով՝ իհարկե կարող, պատասխանատու, մտահոգ ու բարձր արժեհամակարգ ու գաղափարներ ունեցող անհատների, միությունների համատեղ աշխատանքով, իսկ այդպիսիք կան: ■

Շուշիի 1920 թվականի մարտյան եղեռնը

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

Հայության կոտորածները և քաղաքի հայաբնակ թաղամասի ավերումը

Շուշիի 1920 թվականի մարտյան ողբերգությունը հայոց նորագույն պատմության ամենաաղետալի և բեկումնային էջերից մեկն է, որը տասնամյակների համար կանխորոշեց ոչ միայն Արցախի, այլև ողջ Անդրկովկասի աշխարհաքաղաքական դեմքը: Այս իրադարձությունների հետևանքով ոչնչացվեց Կովկասի մշակութային և տնտեսական խոշորագույն կենտրոններից մեկը, որն իր մշակութային վերելքի համար ստացել էր «փոքրիկ հայկական Փարիզ»[1] պատվանունը և համարվում էր «Անդրկովկասի մարգարիտը»:[2] Շուշիի անկումը պարզապես քաղաքի կորուստ չէր, այլև հայկական քաղաքակրթական գործոնի չեզոքացում մի տարածաշրջանում, որտեղ դարեր շարունակ ձևավորվել էր հայոց պետականության և մշակույթի առանցքը:[3]

Քաղաքի ռազմավարական և խորհրդանշական դերը դժվար է գերագնահատել: Ինչպես նշում են պատմաբանները, դժվար է գտնել մի ուրիշ բնակավայր, որն իրեն ստեղծած ժողովրդի կյանքում խաղացած լինի այնքան հակասական և ճակատագրական դեր, որքան Շուշին:[4] 1920 թվականի մարտի 22-ից 26-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած հայ բնակչության համակարգված կոտորածը և քաղաքի հայկական թաղամասի հրդեհումը 1915 թվականի Հայոց Ցեղասպանության անմիջական շարունակությունն են՝ իրականացված նույն գործելաոճով և նույն նպատակադրմամբ՝ բնիկ ժողովրդի ֆիզիկական բնաջնջմամբ և բռնի տեղահանմամբ հասնելու տարածքային վերջնական տիրապետության:[5]

Շուշիի պատմամշակութային և սոցիալ-տնտեսական դիմագիծը նախաեղեռնյան շրջանում

Շուշին 19-րդ դարի կեսերից սկսած վերելք ապրեց՝ դառնալով Անդրկովկասի կարևորագույն մտավոր և տնտեսական կենտրոններից մեկը: Չնայած քաղաքի հայ և մուսուլմանական (թաթարական) համայնքների միջև առկա մշտական մրցակցությանը՝ 19-րդ դարի երկրորդ կեսից Շուշիի մտավոր-մշակութային կյանքի վերելքը գերազանցապես պայմանավորված էր հայկական միջավայրի կրթական և տպագրական աշխույժ գործունեությամբ:[6] Շուշին հայտնի էր իր բազմաթիվ կրթօջախներով, որոնց թվում էին թեմական դպրոցը (բացվել է 1838 թվականի հուլիսի 2-ին (նոր տոմարով՝ հուլիսի 14-ին) և տասնամյակներ շարունակ եղել է ոչ միայն կրթական, այլև ազգային-քաղաքական զարթոնքի կենտրոն, ուր ուսանել կամ դասավանդել են Լեոն, Մուրացանը, Նիկոլ Դումանը, Արամ Մանուկյանը և այլք)[7], Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցը (բացվել է 1864-ին և առաջիններից էր տարածաշրջանում, որ ապահովում էր կանանց կրթությունը) և հանրահայտ Ռեալական ուսումնարանը (բացվել է 1881-ին և համարվում էր Կովկասի լավագույն կրթական հաստատություններից մեկը)[8]: Այստեղ գործում էին տասնյակ տպարաններ, որոնք հրատարակում էին թերթեր և ամսագրեր, որոնց թվում էր Երվանդ Լալայանի խմբագրած «Ազգագրական հանդեսը»:[9] Քաղաքի ճարտարապետական դեմքը ձևավորվում էր շքեղ առանձնատներով և հոգևոր կառույցներով, որոնց գագաթնակետը 1868-1887 թվականներին կառուցված Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց տաճարն էր:[10]

Շուշիի կրթամշակութային այս հարուստ համակարգը հիմնահատակ կործանվեց 1920 թ. մարտյան աղետի հետևանքով՝ հանգեցնելով քաղաքի՝ որպես տարածաշրջանային մտավոր կենտրոնի վերջնական անկմանը:

Աշխարհաքաղաքական իրավիճակը Ռուսական կայսրության փլուզումից հետո

1917 թվականի Ռուսական հեղափոխությունը և դրան հաջորդած Կայսրության փլուզումը ստեղծե-

ցին իշխանության վակուում, որն Անդրկովկասում հանգեցրեց ազգային պետությունների ձևավորման և տարածքային սուր վեճերի:[11] 1917 թվականի մարտին Ղարաբաղում ստեղծվեց ժամանակավոր գործադիր կոմիտե, իսկ արդեն 1918 թվականին կայացած արցախահայության առաջին համագումարը երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր:[12] Ընտրվեց ժողովրդական կառավարություն՝ Եղիշե Իշխանյանի գլխավորությամբ, որը պաշտոնական Երևանի հետ սերտ համագործակցությամբ փորձում էր պաշտպանել Արցախի ինքնորոշման իրավունքը:[13]

Միևնույն ժամանակ, նորաստեղծ Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետությունը, վայելելով Օսմանյան Թուրքիայի ռազմական աջակցությունը, հավակնություններ դրսևորեց Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ: Թուրքական բանակը, Նուրի փաշայի և Խալիլ փաշայի գլխավորությամբ, 1918 թվականի սեպտեմբերին ներխուժեց տարածաշրջան՝ նպատակ ունենալով զինաթափել հայությանը և ապահովել Ադրբեջանի գերիշխանությունը:[14] Սեպտեմբերի 22-ին թուրքական շուրջ չորսհազարանոց զորախումբը, ճեղքելով Ասկերանի դիրքերը, մտավ Շուշի: Ջեմիլ Ջևադ բեյի հրամանատարությամբ գործող թուրքական ստորաբաժանումները ձերբակալեցին շուրջ 60 նշանավոր հայ գործիչների՝ երկրամասից պահանջելով լիակատար հնազանդություն:[15]

Բրիտանական ներկայությունը և գեներալ Թոմսոնի վիճահարույց քաղաքականությունը

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից և Մուդրոսի զինադադարից հետո տարածաշրջանում հաստատվեց բրիտանական վերահսկողություն, որը սկզբնապես ընկալվեց որպես Արցախի հարցի արդարացի հանգուցալուծման երաշխիք: Սակայն Լոնդոնի որդեգրած կողմնակալ դիրքորոշումը և ադրբեջանամետ քայլերը շուտով փոշիացրին հայկական կողմի բոլոր դրական սպասելիքները:[16] Բրիտանական հրամանատարությունը՝ գեներալ Ուիլյամ Թոմսոնի գլխավորությամբ, առաջնորդվում էր ոչ թե ազգերի ինքնորոշման սկզբունքով, այլ սեփական ռազմավարական և տնտեսական շահերով, որոնց թվում առաջնային էին Բաքվի նավթի անխափան մատակարարումը և Անդրկովկասը որպես պատվար օգտագործելը բոլշևիկյան Ռուսաստանի դեմ:[17]

1918 թվականի նոյեմբերին գեներալ Թոմսոնը կասեցրեց զորավար Անդրանիկի առաջխաղացումը դեպի Շուշի, երբ վերջինս արդեն կոտրել էր մուսուլմանական դիմադրությունը և պատրաստ էր ազատագրել քաղաքը: Թոմսոնը հայտարարեց, որ բոլոր տարածքային վեճերը պետք է լուծվեն Փարիզի խաղաղության վեհաժողովում, և մինչ այդ պետք է պահպանվի ստատուս քվոն:[18] Սակայն գործնականում բրիտանացիներն ակտիվորեն աջակցեցին Ադրբեջանի կառավարությանը՝ 1919 թվականի հունվարին հաստատելով Խոսրով բեկ Սուլթանովի նշանակումը Ղարաբաղի և Զանգեզուրի նահանգապետ: Սա ցնցող որոշում էր, քանի որ Սուլթանովը հայտնի էր որպես մոլի հայատյաց և պանթուրքիստ, ով սերտորեն համագործակցել էր օսմանյան բանակի հետ: Չնայած Հայաստանի կառավարության և Արցախի Ազգային խորհրդի կտրուկ բողոքներին, բրիտանացիները պնդեցին, որ Սուլթանովը «անհրաժեշտ է կարգուկանոն հաստատելու համար»:[19]

Խոսրով բեկ Սուլթանովի վարչակարգը և 1919 թ. կոտորածները

Սուլթանովի նշանակումով Արցախի նկատմամբ ճնշումը դարձավ համակարգված: Նա անմիջապես ձեռնամուխ եղավ հայ բնակչության զինաթափմանը և ադրբեջանական կանոնավոր զորամասերի տեղակայմանը Շուշիում ու հարակից շրջաններում: Բրիտանական հրամանատարությունը՝ գեներալ Շաթլուորթի գլխավորությամբ, ով փոխարինել էր Թոմսոնին, սկսեց բացահայտորեն ճնշում գործադրել

Շուշիի Ռեալական ուսումնարանը

արցախահայության վրա՝ պահանջելով ճանաչել Ադրբեջանի գերիշխանությունը:

1919 թվականի հունիսի սկզբին լարվածությունը վերածվեց բացահայտ բախման: Հունիսի 4-5-ին Սուլթանովի հրահրմամբ ադրբեջանական զորքերը և մուսուլմանական զինված խմբերը հարձակվեցին Շուշիի հայկական թաղամասի վրա, սակայն հայերին հաջողվեց կազմակերպել դիմադրություն: Չկարողանալով հաղթել քաղաքում՝ Սուլթանովի եղբոր՝ Սուլթան բեկի գլխավորած հրոսակախմբերը շրջափակեցին և կոտորեցին Շուշիի մոտակայքում գտնվող հայկական գյուղերը: Հատկապես սարսափելի էր Խայբալիքենդի ջարդը, որի ժամանակ սպանվեց 600-700 մարդ, այդ թվում՝ կանայք և երեխաներ, իսկ գյուղը հիմնահատակ այրվեց: Բրիտանական հետաքննությունը հաստատեց, որ Սուլթանովը անձամբ է հրահրել այդ սպանդը, սակայն նա մնաց իր պաշտոնում՝ շարունակելով վայելել բրիտանական «հովանավորությունը»:[20]

1919 թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնագիրը

Ստեղծված ծանրագույն իրավիճակում, երբ բրիտանական աջակցությունը բացակայում էր, իսկ թուրք-ադրբեջանական ճնշումը մեծանում, արցախահայությունը ստիպված էր գնալ մարտավարական զիջումների: 1919 թվականի օգոստոսի 22-ին Շոշ գյուղում հրավիրված արցախահայության 7-րդ համագումարը Ադրբեջանի կառավարության հետ ստորագրեց ժամանակավոր համաձայնագիր:[21]

Այդ փաստաթուղթը, որը բաղկացած էր 26 կետից, սահմանում էր, որ Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես համարվում է Ադրբեջանի սահմաններում մինչև Փարիզի վեհաժողովի վերջնական որոշումը: Համաձայնագրով Ադրբեջանի զորքերը չպետք է մտնեին Ղարաբաղ, իսկ երկրամասի ներքին կառավարումը մնում էր Հայոց ազգային խորհրդի ձեռքում: Գիտական տեսանկյունից այս համաձայնագիրը վկայում է այն մասին, որ Ադրբեջանը փաստացի ճանաչել է Ղարաբաղի սուբյեկտայնությունը և այն չի համարել իր «անբաժանելի մասը», այլապես կարիք չէր լինի կնքել պայմանագիր սեփական տարածքի բնակչության հետ: Սակայն Սուլթանովի համար սա ընդամենը ժամանակ շահելու միջոց էր ուժերը վերախմբավորելու և վերջնական հարվածին նախապատրաստվելու համար:[22]

Ռազմական կուտակումները և 1920 թ. սկզբի սրացումը

1919 թվականի վերջին և 1920 թվականի սկզբին Սուլթանովը բացահայտորեն խախտեց օգոստոսյան համաձայնագիրը: Շուշին վերածվեց զինվորական ճամբարի: Այնտեղ գեներալ Ալի աղա Շիխլինսկու հրամանատարությամբ տեղակայվեց 7.000 հոգանոց զորամաս: Բացի այդ, քաղաքում էր գտնվում թուրք սպաների մի ստվար խումբ՝ Նուրի փաշայի գլխավո-

ությամբ, ովքեր իրականացնում էին մուսուլմանական ինքնապաշտպանական խմբերի վարժեցումը և զինումը: Ընդհանուր առմամբ, Ղարաբաղի սահմաններին կուտակվել էին շուրջ 10.000 կանոնավոր զինվոր և քրդական մեկ դիվիզիա:[23]

1920 թվականի փետրվարին իրավիճակը դարձավ անկառավարելի: Սուլթանովը վերջնագիր ներկայացրեց հայերին՝ պահանջելով լիակատար հպատակություն և Ադրբեջանի կազմում վերջնական ներառում: Մարտի սկզբին հայերին արգելվեց առանց հատուկ թույլտվության լքել քաղաքը, իսկ հայկական տներում սկսեցին հարկադրաբար տեղավորել ադրբեջանցի զինվորների: Սա ռազմավարական քայլ էր՝ ներսից խաթարելու հայկական թաղամասի պաշտպանությունը և խուճապ տարածելու բնակչության շրջանում:[24]

Շուշիի 1920 թ. մարտյան ողբերգության նախերգանքը

Ստեղծված ծայրահեղ իրավիճակը քննարկելու նպատակով 1920 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 5-ը Շոշ գյուղում հրավիրվեց արցախահայության ութերորդ համագումարը: Համագումարը պաշտոնապես մերժեց Սուլթանովի վերջնագիրը՝ արձանագրելով, որ 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագիրը, Ադրբեջանի կողմից պարբերաբար խախտվելու հետևանքով, կորցրել է իր ուժը: Մուսավաթական կառավարությունից պահանջվեց դադարեցնել կոտորածները, միաժամանակ ձևավորվեց Ղարաբաղի պաշտպանության կենտրոնական մարմինը՝ իր տեղական ճյուղավորումներով:

Ադրբեջանական ուժերի համակարգված հարձակումը սկսվեց 1920 թվականի մարտի 22-ի երեկոյան: Շուշիի ջարդերի կազմակերպիչները որդեգրել էին 1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ երիտթուրք առաջնորդների կիրառած գործելաոճն ու նախօրոք մշակված ծրագիրը: Հայությանը դիմադրողականությունից զրկելու նպատակով, Խոսրով բեկ Սուլթանովի հրամանով, մարտի 22-ին ձերբակալվեցին քաղաքի շուրջ 400 նշանավոր հայեր, որոնք նետվեցին թուրքական թաղամասի բանտը:

Նախքան բուն հարձակումը, Սուլթանովը հայկական թաղամասի չբնակեցված տներում գաղտնի տեղավորել էր թուրք սպաների և զինվորների: Մարտի 22-ի լույս 23-ի գիշերը, թանձր մառախուղի պայմաններում, նրանք ներսից հրդեհեցին այդ շինությունները՝ բնակչության և ինքնապաշտպանական ուժերի շրջանում առաջացնելով զանգվածային խուճապ: Սա հնարավորություն տվեց ադրբեջանական կանոնավոր ուժերին անցնելու հայկական քաղաքամասի համակարգված ոչնչացմանը:[25]

Շուշիի հայկական թաղամասի կործանումը և զանգվածային սպանդը

1920 թ. մարտի 22-ի գիշերը լույս 23-ին սկսվեց Շուշի հայ բնակչության եղեռնը: Ադրբեջանական կանոնավոր զորքերը, միանալով տեղի մուսուլմանական ամբոխին, սկսեցին համակարգված կերպով հրդեհել հայկական տները, եկեղեցիներն ու դպրոցները: Ինչպես վկայում են արխիվային նյութերը, թանձր մառախուղի քողի տակ ադրբեջանցի սպաները հրդեհեցին հենց այն շինությունները, որտեղ նախօրոք տեղա-

վորվել էին, ինչը լիակատար քաոս և անպաշտպանվածության զգացողություն առաջացրեց հայ բնակչության շրջանում:[26]

Ականատեսների վկայությունները, մասնավորապես ադրբեջանցի զինվոր Իսմայիլ Ալիմարդանբեկովի՝ Բաքվում գտնվող եղբորն ուղղված նամակը, փաստում են իրականացված վայրագությունների սարսափազդու մասշտաբները: Հայ տղամարդկանց կոտորում էին զանգվածաբար, իսկ քաղաքի նշանավոր դեմքերի նկատմամբ կիրառվում էին դաժան խոշտանգումներ. Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանին գլխատեցին, իսկ քաղաքի ոստիկանապետ Ավետիս Տեր-Ղուկասյանին կենդանի այրեցին: Բազմաթիվ կանայք և աղջիկներ ենթարկվեցին բռնությունների, իսկ հայկական հարուստ թաղամասը ենթարկվեց համատարած թալանի:[27]

Քաղաքը մի քանի օր շարունակ վերածվել էր հսկայական խարույկի: Հրդեհի և կոտորածների հետևանքով Շուշիի հայկական թաղամասի շուրջ 1.700 տներից կանգուն մնաց ընդամենը 25-ը:[28] Սա ոչ միայն էթնիկ զտում էր, այլև մշակութային ու տնտեսական ցեղասպանություն, որի նպատակը տարածաշրջանի հնագույն հայկական կենտրոնի վերջնական հայաթափումն էր:

Զոհերի թվաքանակի և ժողովրդագրական փոփոխությունների վերլուծություն

Զոհերի թվի վերաբերյալ պատմագիտական գնահատականները տատանվում են՝ արտացոլելով այդ ժամանակաշրջանի քաոսային վիճակը և տվյալների հավաքագրման դժվարությունները: Ռիչարդ Հովհաննիսյանը, հիմնվելով հայկական կառավարության պաշտոնական տվյալների վրա, նշում է առնվազն 500 զոհ քաղաքում, սակայն սա համարվում է միայն սկզբնական և խիստ թերագնահատված թիվ:[29]

Ավելի լայնածավալ հետազոտությունները ներկայացնում են շատ ավելի մռայլ պատկեր: Գերմանացի պատմաբան Յորգ Բաբերովսկին փաստում է 8.000 սպանված հայերի մասին:[30] Խորհրդային գրող և պատմաբան Մարիետա Շահինյանը, ով այցելել էր Շուշի աղետից տարիներ անց, նշում է, որ զոհերի թիվը տատանվում էր 3.000-ից մինչև 12.000:[31] Որոշ աղբյուրներ, ներառյալ միջազգային զեկույցները, հայտնում են մինչև 20.000 զոհի մասին, եթե հաշվի առնենք նաև հարակից գյուղերի բնակչությանը, որոնք նույնպես ենթարկվեցին սպանդի:

Փախստականների թիվը նույնպես ահռելի էր: Մոտ 5.000-6.000 մարդու հաջողվեց Քարինտակի կիրճով փախչել դեպի Վարանդա:[32] Շուշին, որը մինչ այդ հայաշատ քաղաք էր, դարձավ գրեթե ամբողջությամբ ադրբեջանաբնակ: 1926 թվականի մարդահամարի տվյալներով քաղաքի բնակչությունը կազմում էր ընդամենը 5.104 մարդ՝ նախկին 40.000-ի փոխարեն:[33] Սա դասական ցեղասպանական գործողություն էր՝ միտված փոխելու տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը:

«Մեռած քաղաքը». Շուշիի մշակութային ժառանգության ոչնչացումը

Շուշիի հայկական թաղամասի ավերումը ոչ միայն ֆիզիկական սպանդ էր, այլև մշակութային ցեղասպանություն: Ադրբեջանական զորքերը թիրախավորված ոչնչացնում էին հայկական ինքնության ցանկացած հետք: Այրվեցին տասնյակ եկեղեցիներ, գրադարաններ և թատրոնի շենքը:

1930 թվականին Շուշի այցելած Օսիպ Մանդելշտամն իր «Կառապանը» բանաստեղծության մեջ, բանաստեղծը և նրա կինը՝ Նադեժդա Մանդելշտամը, իրենց հուշերում նկարագրում են ցնցող մի պատկեր:[34] Նադեժդան գրում է, որ հայկական թաղամասը վերածվել էր մոխրակույտի, որտեղ բոլոր ջրհորները լցված էին դիակներով, և օդում դեռ զգացվում էր հրդեհի հոտը: Նա քաղաքը բնութագրում է որպես «սոսկալի աղետի» վայր, որտեղ կյանքն այլևս չէր վերադառնում:[35] Շուշիի ավերակները մնացին որպես լուռ վկաներ մինչև 1950-ականների վերջը, երբ Ադրբեջանի իշխանությունները վերջնականապես քանդեցին դրանք՝ փորձելով ջնջել հայկական ներկայության պատմական հիշողությունը:[36]

Բոլշևիկների դերը և Կավբյուրոյի 1921 թ. որոշումը

Շուշիի ողբերգությունը տեղի ունեցավ Անդրկովկասի խորհրդայնացման շեմին: 1920 թ. ապրիլին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո բոլշևիկյան ղեկավարությունը որդեգրեց մանևրելու մարտավարություն՝ հմտորեն օգտագործելով հայ-ադրբեջանական էթնոքաղաքական հակասությունները սեփական իշխանությունն ամրապնդելու նպատակով: Խորհրդային Ռուսաստանը, ելնելով տարածաշրջանում իր ռազմավարական շահերից, հայկական և ադրբեջանական կողմերին հերթագայող խոստումներ տալու միջոցով փորձում էր երկու հանրապետություններին էլ պահել իր ազդեցության ուղեծրում՝ Արցախի կարգավիճակի հարցը դարձնելով քաղաքական սակարկությունների առարկա:[37] Հայաստանի խորհրդայնացման օրերին՝ 1920 թվականի նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը հայտարարեց, որ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը հայտարարվում են Հայաստանի Խորհրդային Հանրապետության մաս: Սակայն սա ընդամենը քարոզչական հնարք էր:[38]

Իրականում, Շուշիի հայաթափումը բոլշևիկների համար հեշտացրեց տարածաշրջանը Ադրբեջանին հանձնելու գործընթացը: 1921 թվականի հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի նիստում, Իոսիֆ Ստալինի ճնշմամբ, որոշվեց Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի ԽՍՀ կազմում:[39] Այս որոշման մեջ առանցքային էր այն հանգամանքը, որ Շուշին՝ որպես երկրամասի տնտեսական և վարչական կենտրոն, արդեն իսկ զրկվել էր իր հայկական դիմագծից: Շուշիի 1920 թ. մարտյան կոտորածը կանխամտածված գործողություն էր, որը նպատակ ուներ ստեղծելու այն ռազմական և ժողովրդագրական նախադրյալները, որոնց վրա հետագայում խարսխվեց Արցախի բռնակցման բոլշևիկյան-մուսավաթական քաղաքական կառույցը: Քաղաքի հայաթափումը փաստացի զրկեց երկրամասը իր բնականոն կենսագործունեության կենտրոնից՝ դյուրացնելով դրա հետագա բռնի ներառումը Խորհրդային Ադրբեջանի կազմում:

Միջազգային արձագանքը և անպատժելիության հետևանքները

Շուշիի 1920 թ. ողբերգությունը և Խոսրով բեկ Սուլթանովի վարչակարգի վայրագությունները լայն արձագանք ստացան միջազգային հարթակներում, սակայն այդ արձագանքը հիմնականում սահմանափակվեց դիվանագիտական հայտարարություններով ու բողոքագրերով: Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը հուշագրերի և պաշտոնական նամակների շարք հղեց Փարիզի խաղաղության խորհրդաժողովի անդամ տերություններին՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և ԱՄՆ-ի կառավարություններին՝ մանրամասն ներկայացնելով Արցախի հայության բնաջնջման կանխամտածված քաղաքականությունը: Հատկանշական է նաև սփյուռքի արձագանքը. մասնավորապես՝ Հնդկաստանի հայ համայնքը պաշտոնական դիմումներ հղեց բրիտանական իշխանություններին՝ պահանջելով գործուն քայլեր ձեռնարկել սպանդը դադարեցնելու ուղղությամբ, սակայն աշխարհաքաղաքական շահերը գերակայեցին մարդասիրական ու իրավական պարտավորություններին:[40]

Շուշիի կոտորածը դարձավ 1915 թվականի Հայոց Ցեղասպանության անպատժելիության անմիջական հետևանքը: Պատմագիտական վերլուծությունները փաստում են, որ Շուշիի 1920 թ. ողբերգությունն ուղղակիորեն պայմանավորված էր Հայոց ցեղասպանության կազմակերպիչների նկատմամբ միջազգային պատժիչ մեխանիզմների բացակայությամբ: Երիտթուրքական ոճրագործների անպատժելիությունը ոչ միայն հոգեբանական և քաղաքական հիմք ստեղծեց Խ. Սուլթանովի վարչակարգի վայրագությունների համար, այլև կանխորոշեց տարածաշրջանում էթնիկ զտումների հետագա շղթան: Այս «անպատժելիության մթնոլորտը» դարձավ այն բացասական նախադեպը, որը տասնամյակներ շարունակ սնեց հակամարտության գենետիկ հիշողությունը և հնարավոր դարձրեց հայ բնակչության պարբերական տեղահանությունները:[41]

Պատմական դասերը և արդիականությունը

Շուշիի 1920 թվականի ողբերգությունը խորը հետք է թողել հայ ժողովրդի հավաքական հիշողության մեջ: Պատմական այս իրողությունը վկայում է մի քանի առանցքային հանգամանքների մասին: Նախ՝ այն փաստում է, որ սեփական անվտանգային համակարգի բացակայության պայմաններում միջազգային «դաշնակիցների» երաշխիքների վրա հույս դնելը կարող է հանգեցնել աղետալի հետևանքների: Երկրորդ՝ Շուշիի մարտյան եղեռնը ևս մեկ անգամ հավաստում է, որ տարածքային հավակնությունների իրացման նպատակով ժողովրդագրական պատկերի բռնի փոփոխման կանխամտածված մարտավարությունը վճռորոշ գործոն է, և հակառակորդը մշտապես ձգտե-

լու է նմանատիպ գործողությունների միջոցով փոխել ուժերի հարաբերակցությունը:

Այսօրվա տեսանկյունից Շուշիի 1920 թվականի կոտորածը դիտարկվում է որպես Արցախյան հակամարտության սկզբնաղբյուրներից մեկը: Այն ցույց է տալիս, որ Ադրբեջանի հավակնությունները Արցախի նկատմամբ միշտ ուղեկցվել են հայկական ներկայության լիակատար վերացման նպատակադրմամբ: Քաղաքի կործանումը և հետագա խորհրդային քաղաքականությունը, որը միտված էր հայկական հետքերի ջնջմանը, վկայում են այն մասին, որ սա ոչ թե պատահական բախում էր, այլ հետևողական պետական քաղաքականություն:

Որպես ամփոփում, հարկ է արձանագրել, որ 1920 թվականի մարտի 22-26-ի իրադարձությունները Շուշիում մարդկության դեմ ուղղված հանցագործություն են, որոնք պետք է արժանանան միջազգային գիտական և քաղաքական պատշաճ գնահատականի: Շուշիի «Փոքրիկ Փարիզի» մոխրացումը մնում է հայոց պատմության ամենացավոտ վերքերից մեկը, որը հիշեցնում է ազգային պետականության և անվտանգության անփոխարինելի դերի մասին: ■

Հղումներ

1 **Բալայան Վ.**, 1920 թ. մարտի 23-ի Շուշիի հայոց ջարդերը որպես 1915 թ. Հայոց Ցեղասպանության անպատժելիության հետևանք, «Բանբեր հայագիտության» (Review of Armenian Studies), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2016, թիվ 2, էջ 97, **Chantre B.**, À travers l'Arménie russe, Paris, Librairie Hachette, 1893, p. 603, **Մկրտչյան Շ., Դավթյան Շ.**, Շուշի. Ողբերգական ճակատագրի քաղաք, Երևան, «Ամարաս» հրատ., 1999, էջ 37:

2 **Հարությունյան Հ.Մ.**, Շուշին 1918-1920 թվականներին՝ ականատեսների վկայությամբ //// Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ («Կաճառ» գիտական տարեգիրք, Գիրք 4), Ստեփանակերտ, 2010, էջ 101:

3 **Հարությունյան Հ. Մ.**, Շուշիի հայության բնաջնջումը և քաղաքի կործանումը (պատմական դասեր), «Բանբեր հայագիտության» (Review of Armenian Studies), 2020, թիվ 2 (20), էջ 152-171:

4 **Պողոսյան Վ. Վ.**, Ողբերգական Շուշին (Շուշիի 1920 թ. մարտյան եղեռնի 90-ամյակի առթիվ) // Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ («Կաճառ» գիտական տարեգիրք, Գիրք 4), Ստեփանակերտ, 2010, էջ 188:

5 **Բալայան Վ.**, նշվ. աշխ., էջ 102:

6 **Հովհաննիսյան Ռ. Գ.**, Հայաստանի Հանրապետություն, հատոր I (1918-1919 թթ.), Երևան, «Տիգրան Մեծ», 2005, էջ 164-168:

7 **Լեո**, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 34-40:

8 **Մկրտչյան Շ. Մ.**, Շուշիի պատմական հուշարձանները, Երևան, «Հայաստան», 1980, էջ 45-52:

9 **Մելիք-Փաշայան Կ. Վ.**, Երվանդ Լալայան (Կյանքն ու գործունեությունը) // «Ազգագրական հանդես», հատոր 1 (վերահրատարակություն), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 7-12:

10 **Մկրտչյան Շ. Մ.**, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, «Հայաստան», 1988, էջ 183-185:

11 **Հայոց պատմություն**, հատոր IV, գիրք 1 (Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ.), Երևան, «Զանգակ», 2010, էջ 11-18:

12 **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 164-167:

13 **Իշխանեան Ե.**, *Լեռնային Ղարաբաղ (1917-1920)*, Երեւան, «Հայաստան», 1999, էջ 152-165, **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 169:

14 **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 164-170:

15 **Հարությունյան Հ.Մ.**, *Շուշին 1918-1920 թվականներին՝ ականատեսների վկայությամբ*// Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ («Կաճառ» գիտական տարեգիրք, Գիրք 4), Ստեփանակերտ, 2010, էջ 101, **Իշխանյան Ե.**, նշվ. աշխ., էջ 155-160:

16 **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 164-172:

17 **Հակոբյան Ա. Մ.**, *Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.*, Երևան, 2005, էջ 214-220:

18 **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 86-90:

19 **Հարությունյան Մ.**, *Շուշիում 1920 թ. մարտյան հայասպանության պատճառները և արդի մարտահրավերները (պատմական, քաղաքական, իրավական ու ռազմական տեսանկյուններ)* // «Ադրբեջանի ցեղասպանական վարքը. Պատմություն և արդիականություն» միջազգային առցանց գիտաժողով՝ նվիրված Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին, Երևան, Էդիթ պրինտ հրատ., 2021, էջ 138-139:

20 **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ. 178-185:

21 **Բալայան Վ.**, *Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում* (Երևան: Զանգակ հրատարակչություն, 2017), 427:

22 Նույն տեղում:

23 Նույն տեղում, էջ 152:

24 **Հարությունյան Մ.**, *Շուշիում 1920 թ. մարտյան հայասպանության պատճառները և արդի մարտահրավերները* // «Ադրբեջանի ցեղասպանական վարքը. Պատմություն և արդիականություն» գիտաժողովի նյութեր, Երևան, 2020, էջ 138-142:

25 **Բալայան Վ.**, Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, «Զանգակ», 2017, 440-441:

26 **Հարությունյան Հ.Մ.**, Շուշին 1918-1920 թվականներիին՝ ականատեսների վկայությամբ//Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ («Կաճառ» գիտական տարեգիրք, Գիրք 4), Ստեփանակերտ, 2010, էջ 101:

27 **Պողոսյան Վ. Վ.**, Ողբերգական Շուշին (Շուշիի 1920 թ. մարտյան եղեռնի 90-ամյակի առթիվ) // Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ («Կաճառ» գիտական տարեգիրք, Գիրք 4), Ստեփանակերտ, 2010, էջ 190:

28 **Բալայան**, Շուշի. Տեղն ու դերը..., էջ 440-441:

29 **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ. 158-160:

30 **Բաբերովսկի Յ.**, *Թշնամին ամենուր է. Ստալինիզմը Կովկասում*, Մյունխեն, 2003, էջ 170-172 (գերմաներեն):

31 **Շահինյան Մ.**, *Լեռնային Ղարաբաղ*, Երևան, «Հայաստան», 1970, էջ 75-77:

32 Armenians Killed", *The New York Times*, September 4, 1920 (Հասանելի է թերթի թվային արխիվում):

33 **Բալայան**, Շուշի. Տեղն ու դերը..., էջ 440-441:

34 **Мандельштам О. Э.**, *Полное собрание стихотворений*, Сост. Г. И. Полякова, А. Г. Мец, СПб, «Академический проект», 1995, с. 195.

35 **Мандельштам Н. Я.**, *Воспоминания*, Книга первая, М., «Согласие», 1999, с. 248-249.

36 **Բալայան**, Շուշի. Տեղն ու դերը..., էջ 442-443:

37 **Հակոբյան Ա.**, *Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.*, Երևան, «Գիտություն», 2005, էջ 320-325:

38 Նշված աշխ., էջ 340-342:

39 **Բալայան Վ**, *Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում*, էջ 161-163:

40 **Ահարոնյան Ա.**, *Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (Քաղաքական օրագիր)*, Երևան, «Մամուլ», 1993, էջ 85-88:

41 **Dadrian, V. N.**, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Providence: Berghahn Books, 1995, p. 355, **Բալայան Վ**, *Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում*, էջ 158- 159:

«Ամբոխային տրամաբանության» մոլորությունը և պայքարի անխուսափելիությունը
(Քրիստափոր Միքայելյանի մահվան 122-րդ տարելիցի առիթով)

Արամ Շահնազարյան
«Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր

Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադիրներից, կուսակցության գաղափարական հայր Քրիստափոր Միքայելյանի մտավոր ժառանգությունը հայ քաղաքական մտքի մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ոչ միայն իր ժամանակի հեղափոխական պայքարի գաղափարական հիմնավորումը տալու, այլև պատմական գործընթացների ներքին տրամաբանությունը բացահայտելու առումով: Նրա «Ամբոխային տրամաբանության» և «Հարատև կռվի» տեսությունները ձևավորվել են հայ ժողովրդի գոյաբանական սպառնալիքի և ազգային-ազատագրական պայքարի վերելքի պայմաններում, սակայն դրանց արժեքը չի սահմանափակվում միայն այդ պատմական միջավայրով և ժամանակաշրջանով: Դրանք ներկայացնում են մի ամբողջական և գաղափարականորեն կուռ աշխարհայացք, որը միավորում է պատմության փիլիսոփայությունը, քաղաքական իրատեսությունը և ազգային ինքնապաշտպանության գաղափարը: Այս տեսությունները, երբ դիտարկվում են ոչ թե հատվածաբար, այլ ամբողջության մեջ, ցույց են տալիս, որ Քրիստափորը ձգտում էր ձևակերպել մի համակարգ, որի միջոցով հնարավոր է հասկանալ ոչ միայն անցյալի ողբերգությունները, այլև իմաստավորել ներկան և ուղղորդել ապագան:

Միքայելյանն իր վերլուծությունը սկսում է նրանից, ինչ նա անվանում է «ամբոխային տրամաբանություն»: Նրա դիտարկմամբ՝ «ամբոխը… տրամադիր է կարծելու, թե ամեն մի երևույթ, որին հետևում է մի ուրիշը, պատճառն է այդ հետագա երևույթի»: Առաջին հայացքից պարզ թվացող այս ձևակերպումն իրականում բացահայտում է քաղաքական մտածողության ամենախորքային աղավաղումներից մեկը: Մարդկային գիտակցությունը հաճախ ձգտում է պարզեցնել իրականությունը՝ բարդ երևույթները հանգեցնելով հեշտ ընկալելի կապերի: Սակայն այս պարզեցումը վերածվում է վտանգավոր մոլորության, երբ այն օգտագործվում է պատմական իրադարձությունները բացատրելու համար: Քրիստափորը ցույց է տալիս, որ նման մտածողությունը ոչ միայն սխալ է, այլև նպատակաուղղված կերպով շահարկվում է՝ հասարակությանը մոլորեցնելու և իրականությունն աղավաղելու համար:

Երբ հանրայնացվում է այն միտքը, թե «հայ հեղափոխություններն են հայկական սոսկալի կոտորածների պատճառը», մենք գործ ունենք ոչ թե փաստերի վերլուծության, այլ կեղծ տրամաբանության հետ: Միքայելյանը բացահայտում է այս պնդման ներքին սնանկությունը՝ ցույց տալով, որ այն անտեսում է իրա-

կան, խորքային պատճառները: Նրա համար պատմական ողբերգությունները չեն կարող բացատրվել մեկ կամ մի քանի արտաքին դրվագներով, քանի որ դրանք արդյունք են երկարատև գործընթացների, որոնք ձևավորվել են քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործոնների համադրման շնորհիվ: «Սուլթանական կառավարությունը հայերի ջնջման ձգտելու համար ուներ ավելի խորին շարժառիթներ, քան հեղափոխական ձեռնարկներն են»: Այս միտքը ոչ միայն պատմական ճշմարտության արձանագրում է, այլև մեթոդաբանական ուղեցույց՝ փաստելու համար, որ նման հարցերին պետք է մոտենալ խորքային, համակարգային պատճառների լույսի ներքո, այլ ոչ թե մակերեսային առիթների կամ պատրվակների վրա հիմնվելով: Այս տեսակետը հստակ կերպով հակադրվում է «ամբոխային տրամաբանության» պարզեցված սխեմաներին, որոնք հաճախ ծառայել են հասարակությանը մոլորեցնելու և իրականությունն աղավաղելու նպատակին:

Այս համատեքստում Քրիստափորը կատարում է կարևոր տարբերակում՝ արտաքին երևույթների և ներքին պատճառների միջև: Նրա համար պատմությունը չի գործում պատահականության սկզբունքով, այլ ունի իր ներքին օրինաչափությունները: Այդ պատճառով էլ նա մերժում է «առիթ» հասկացության գերագնահատումը և այն ներկայացնում է որպես երկրորդական գործոն: Նրա ձևակերպած չորս դրույթները, որոնք կարելի է դիտարկել որպես

Քրիստափոր Միքայելյան

պատմական մտածողության հիմունքներ, արտահայտվում են այս կերպ՝ առաջին. «Երբ կան հիմնական պատճառներ՝ որևէ երևույթի առաջ գալու համար, առանց ակներև «առիթի» էլ երևույթը զարգանում է»: Երկրորդ. «Երբ չկան հիմնական պատճառներ, նույնիսկ խոշոր դեպքերն էլ «առիթի» նշանակություն չեն ստանում»: Երրորդ. «Երբ կան հիմնական պատճառներ, «առիթ» կամ «պատրվակ» երբեք չեն պակասի»: Չորրորդ. «Երբ կան հիմնական պատճառներ, դրանց դեմ կռվող բոլոր միջոցները ոչ միայն վնասակար չեն կարող լինել, այլ միանգամայն անհրաժեշտ հակակշիռ պիտի համարվեն»: Այս դրույթները ցույց են տալիս, որ պատմական գործընթացներն ունեն ինքնուրույն դինամիկա, որը կախված չէ առանձին իրադարձություններից, և ընդգծում են, որ իրական պատճառներն ու հետևանքները հաճախ տարբերվում են այն պարզեցված կապերից, որոնք տարածված են ամբոխային մտածողության մեջ:

Նույն տրամաբանությամբ նա նշում է, որ «Երբ չկան հիմնական պատճառներ, նույնիսկ խոշոր դեպքերն էլ «առիթի» նշանակություն չեն ստանում»: Այսինքն՝ արտաքին ցնցումները չեն կարող ստեղծել այն, ինչի համար հիմք չկա: Սակայն առավել կարևոր է նրա երրորդ դրույթը. «Երբ կան հիմնական պատճառներ, «առիթ» կամ «պատրվակ» երբեք չեն պակասի»: Այս միտքն ուղղակիորեն հակադրվում է այն մտածողությանը, որը կոչ է անում զսպվածության՝ «առիթ չտալու» համար: Միքայելյանը ցույց է տալիս, որ նման մոտեցումը հիմնված է իրականության սխալ ըմբռնման վրա: Եթե ճնշող ուժն ունի նպատակ և դրդապատճառներ, ապա նա միշտ կգտնի պատրվակ իր գործողություններն արդարացնելու համար: Հետևաբար, պայքարից հրաժարվելը չի կանխում վտանգը, այլ ընդամենը վերացնում է դիմադրությունը:

Այս տեսությունը Քրիստափորի համար դառնում է հիմնավորում՝ հեղափոխական պայքարի անհրաժեշտությունը փաստելու համար: Նա չի ներկայացնում պայքարը որպես ցանկալի կամ նախընտրելի տարբերակ, այլ որպես անխուսափելի հետևանք: Հայ ժողովուրդը, նրա ձևակերպմամբ, կանգնած էր «կամ անպայման բնաջնջում… կամ կյանք» երկընտրանքի առջև: Այս պատկերացումը վերացնում է միջանկյալ լուծումների պատրանքը և ցույց է տալիս, որ պայքարը բխում է գոյության պահանջից: Նա մերժում է այն գաղափարը, թե կարելի է հասնել ազատության առանց դիմադրության՝ դա համարելով պատմական փորձով չհաստատված մոտեցում:

Նրա համար պայքարն ունի ոչ միայն քաղաքական, այլ նաև բարոյական հիմք: «Որևէ ազգ պարտավոր չէ անպատճառ հաշտվել ամենադաժան ստրկության հետ»: Այս միտքը հաստատում է, որ ազատության ձգտումը բնական է և օրինական: Ազգը, որը հրաժարվում է պայքարից, ոչ միայն կորցնում է իր իրավունքները, այլև վտանգում է իր գոյությունը: Այսպիսով, պայքարը դառնում է ինքնապաշտպանության ձև, որն արդարացված է ոչ միայն գործնական, այլև բարոյական առումով:

Սակայն Միքայելյանի մտածողությունը չի սահմանափակվում պայքարի անհրաժեշտության հաստատմամբ: Նա փորձում է նաև սահմանել դրա բնույթը և ռազմավարությունը: Այստեղ է, որ ձևակերպվում է «Հարատև կռվի» տեսությունը: «Հարատև կռիվ, հաճախ և երկար ժամանակ գուցե անհաջող, չնայած երբեմն նույնիսկ իր լայն ծավալի. ահա թե ուր է մեր փրկության բանալին: Պահպանենք, շարունակենք կռիվը, որպեսզի լայնանա, ընդարձակվի և ընդարձակվելով հարատևի. ահա դեպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը: Չշեղվենք այդ ճանապարհից, որ պատճառների և հետևանքների կապակցությամբ ունի պատմության մեջ հաստատված օրենքի ուժ: Չշեղվենք այդ միակ ճանապարհից, որ սփռված է հուսատու ապագայի գրավիչ ծաղիկներով»: Այս միտքը կտրուկ հակադրվում է արագ հաղթանակների սպասման տրամաբանությանը: Քրիստափորի համար պայքարը գործընթաց է, որը պահանջում է ժամանակ, համառություն և կազմակերպվածություն:

Նա նաև կարևորում է այն, որ պայքարը չի կարող լինել անսխալ: Հետադարձ գնահատականները, ըստ նրա, հաճախ անարդար են, որովհետև դրանք անտեսում են այն պայմանները, որոնցում կայացվել են որոշումները: «Հեշտ է… դեպքերը տեղի ունենալուց հետո «քննադատի» դերի մեջ մտնել»: Այս դիտարկումը կարևոր է, որովհետև այն պաշտպանում է շարժումն անիրատեսական սպասումներից և ընդունում է, որ սխալներն անխուսափելի են ցանկացած կենդանի գործընթացում:

Քրիստափոր Միքայելյանի այս ամբողջ համակարգը հիմնված է պատմական ռեալիզմի վրա: Նա չի կառուցում իր տեսություններն իդեալական պատկերացումների վրա, այլ իրականության, որքան էլ այն դաժան լինի: Նա չի փորձում մխիթարել կամ խաբել հասարակությանը, այլ ստիպում է նրան տեսնել իր վիճակը և համապատասխան քայլեր ձեռնարկել: Այս մոտեցումն է, որ նրա գաղափարները դարձնում է արդիական նաև այսօր:

Գալով մեր օրեր՝ Արցախի կորստից հետո, հայկական հանրության և քաղաքական դաշտում ձևավորվել է մի դիսկուրս, որը զգալիորեն հիշեցնում է այն «ամբոխային տրամաբանությունը», որի դեմ պայքարում էր Քրիստափորը: Տարածվում է այն միտքը, թե մեր բոլոր խնդիրների պատճառն Արցախն է, թե ազգային պայքարը մեզ բերել է աղետի, և թե խաղաղության հասնելու համար պահանջատիրական պայքարից հրաժարվելն անհրաժեշտ և պարտադիր պայման է: Այս մոտեցումը կառուցված է նույն սխալ տրամաբանության վրա՝ արտաքին երևույթը ներկայացնելով որպես պատճառ, անտեսելով խորքային գործոնները:

Եթե կիրառենք Միքայելյանի մեթոդաբանությունը, ապա պարզ կդառնա, որ Արցախի հարցը չէր կարող լինել մեր խնդիրների հիմնական պատճառը: Այն ինքնին արդյունք էր պատմական և աշխարհաքաղաքական հանգամանքների ազդեցությամբ ձևավորված պայմանների: Այս պայմանները շարունակում են գործել նաև այսօր, և դրանց անտեսումը չի կարող բերել իրական լուծումների: Եթե գոյություն ունեն խորքային պատճառներ՝ կապված ուժային հարաբերակցության, աշխարհաքաղաքական շահերի և տարածաշրջանային հակասությունների հետ, ապա դրանցից հրաժարվելը չի վերացնում վտանգը:

Նույն կերպ, «առիթ» հասկացության շուրջ նրա վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ, որ նույնիսկ եթե հայ ժողովուրդը հրաժարվի իր ազգային պահանջներից, դա չի կանխի նոր սպառնալիքները: «Երբ կան հիմնական պատճառներ, «առիթ» կամ «պատրվակ» երբեք չեն պակասի»: Այս միտքը հատկապես արդիական է այսօր, երբ հասարակությանը փորձում են համոզել, որ զիջումները կարող են ապահովել խաղաղություն: Սակայն Միքայելյանի տրամաբանությամբ՝ նման մոտեցումը հիմնված է իրականության սխալ ըմբռնման վրա:

Այս իրավիճակում Քրիստափորի «Հարատև կռվի» գաղափարը ստանում է նոր նշանակություն: Այն չի սահմանափակվում զինված պայքարով, այլ ներառում է բոլոր այն միջոցները, որոնց միջոցով կարելի է պաշտպանել ազգային շահերը: Դա կարող է լինել դիվանագիտական գործունեություն, միջազգային հարթակներում պայքար, մշակութային ինքնության պահպանում, տնտեսական ամրապնդում: Սակայն այս ամենի հիմքում պետք է լինի նույն սկզբունքը՝ չհրաժարվել պայքարից և չհաշտվել պարտության հետ:

Հայկական հանրությունը և քաղաքական դաշտը պետք է հասկանան վերջապես, որ Հայաստանի պետականության և ինքնիշխանության պահպանումը հնարավոր չէ առանց քրիստափորյան մտածողության: Ազգը, որը հրաժարվում է իր իրավունքներից և ազգային պահանջներից, կորցնում է նաև իր ապագան: Խաղաղությունը, որը կառուցվում է զիջումների և սեփական իրավունքներից հրաժարվելու վրա, չի կարող լինել կայուն, քանի որ այն չի վերացնում հակասությունների խորքային պատճառները: Միքայելյանի տեսությունները հստակ ցույց են տալիս, որ իրական անվտանգությունը և պետության ուժը հնարավոր է ապահովել միայն այն դեպքում, երբ կա հաստատակամ կամք և պատրաստակամություն՝ պաշտպանելու ազգային շահերը, պահպանելու պետականությունը և ապահովելու ժողովրդի անվտանգությունն ու զարգացումը:

Այսպիսով, Քրիստափոր Միքայելյանի գաղափարները ներկայացնում են ոչ միայն պատմական վերլուծություն, այլև քաղաքական ուղեցույց: Դրանք մեզ սովորեցնում են տարբերել իրական պատճառները մակերեսային երևույթներից, չտրվել ամբոխային մտածողությանը և հասկանալ պայքարի անհրաժեշտությունը: Նրա «Ամբոխային տրամաբանության» և «Հարատև կռվի» տեսությունները մնում են արդիական նաև այսօր՝ որպես գործիքներ, որոնց միջոցով կարելի է գնահատել մեր իրականությունը և ընտրել ճիշտ ուղին:

Այդ ուղին, ինչպես ցույց է տալիս նրա ամբողջ մտածողությունը, չի կարող լինել հանձնվողականության և հարմարվողականության ճանապարհը: Այն պահանջում է գիտակցված, կազմակերպված և երկարատև պայքար՝ ուղղված ազգային շահերի պաշտպանությանը: Միայն այդ կերպ հնարավոր կլինի ապահովել Հայաստանի պետականության ամրապնդումը, հայ ժողովրդի ազատ և անկախ գոյությունն ու ստեղծել այն պայմանները, որոնցում հնարավոր կլինի իրական զարգացում և անվտանգություն: Եվ որքան էլ դժվար լինի Քրիստափորի ուրվագծած ճանապարհը, այն մնում է միակ իրատեսականը, որովհետև հիմնված է ոչ թե ցանկությունների, այլ պատմության օրենքների վրա: ■

ՀՅԴ պատմության թանգարան հիմնադրամի հավաքածուն

Սուսաննա Ադամյան
Հնագիտության ազգային ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու,

Աղվան Պապյան
ՀՅԴ թանգարան հիմնադրամի գիտաշխատող

Թանգարանները յուրաքանչյուր ժողովրդի հիշողության, ազգային ինքնության և մշակութային ժառանգության պահպանման կարևորագույն օջախներից են: Դրանց հիմքում ընկած ֆոնդերն իրենցից ներկայացնում են հսկայական հավաքածուներ, որտեղ պահվում են գիտական, պատմական, գեղարվեստական, ազգագրական արժեք ունեցող նմուշներ: Թանգարանների ֆոնդերի ուսումնասիրությունն անգնահատելի է, դրանցում առկա նմուշները կարևոր փաստեր են հաղորդում պատվիրատուի, սեփականատիրոջ, պատրաստողի մասին՝ դառնալով տվյալ ժողովրդի անցյալի նյութական վկայությունը: Ցուցադրությունների և ֆոնդերի ուսումնասիրությունը նոր գիտական նյութ է տալիս պատմաբաններին, ազգագրագետներին, հնագետներին, դրամագետներին, արվեստագետներին և այլն: Մեր կողմից ուսումնասիրվել են ՀՅԴ պատմության թանգարանային հավաքածուն և ֆոնդը, որը բազմաշերտ ուսումնասիրության կարիք ունի:

Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմության թանգարան հիմնադրամը ներկայացնում է հայ ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920 թթ.) և ՀՅԴ գործունեության հարուստ ժառանգությունը: Թանգարանը սկզբնապես հիմնադրվել է Ժնևում՝ հիմնադիր տնօրեն Արտաշես Վանարյան-Հացագործյանի (1890-1930 թթ.) կողմից: 1930-ական թթ. սկզբներին այն տեղափոխվել է Փարիզ, իսկ 2006 թ. հաստատվել է Երևանում, որտեղ 2007 թ. հուլիսին բացվել է ներկայիս ցուցասրահը: Թանգարանի մշտական ցուցադրությունը ներկայացնում է Հայաստանի առաջին հանրապետության կազմավորման և ՀՅԴ գործունեության պատմությունը՝ ներառելով փաստաթղթեր, լուսանկարներ, կնիքներ, անձնական իրեր, զենքեր և այլ նմուշներ, որոնք այդ ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները ներկայացնելու առումով բացառիկ են:

Աշխարհի տարբեր երկրներից տարբեր ժամանակներում թանգարանին նվիրատվություններ են արել քաղաքական և հասարակական գործիչներ, անհատներ, ովքեր ինչ-որ կապ են ունեցել Հայաստանի առաջին հանրապետության, ազգային-ազատագրական շարժման և ՀՅԴ պատմության հետ՝ այն համոզմունքով, որ թանգարանը ՀՀ պատմության մի մասի կրողն է: Ընդհանրապես նվիրատվությունները նպաստում են հավաքածուների հարստացմանը, մշակութային արժեքների պահպանությանը և փոխանցմանը, հետազոտական նոր ուղղությունների բացմանը: Նվիրատվությունների մեջ կան ինչպես արվեստի գործեր, այնպես էլ պատմամշակութային, հատուկ նշանակության իրեր, արխիվային փաստաթղթեր, հնագիտական կամ գիտական արժեք ունեցող առարկաներ և այլն:

ՀՅԴ թանգարան հիմնադրամի մշտական ցուցադրությունում ներկայացված է ավելի քան երկու հարյուր նմուշ, ֆոնդերում պահվող նմուշների թիվն անցնում է երեք հազարը: Հարուստ հավաքածուի մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար իրերը դասակարգել ենք, քանի որ դրանցից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրության նյութ է:

Զենքեր Թանգարանային հավաքածուի մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում զենքերը՝ որպես պատմական, տեխնոլոգիական արժեք ունեցող նմուշներ: Զենքը ոչ միայն պատերազմելու գործիք է, այլև տվյալ ժամանակաշրջանի քաղաքական, գեղարվեստական, տեխնիկական մտածողության արտացոլում: Այն հնարավորություն է տալիս բացահայտելու ռազմական պատմության, զինարվեստի և մարտավարության, զինագործության ավանդույթները: Մանավանդ հայ վարպետների կողմից ստեղծված ինքնաշեն զենքերը վկայում են բարձր տեխնիկական հմտությունների մասին: Զենքերն ունեն ինչպես կիրառական, այնպես էլ գեղարվեստական նշանակություն: Դրանց վրա արված փորագրությունները, ոսկեզօծ նախշերը ներկայացնում են ժամանակի գեղարվեստական ոճերը՝ միավորելով արհեստագործությունն ու արվեստը:

Թանգարանի հիշյալ հավաքածուն ներառում է հիմնականում 19-րդ դարում Ռուսաստանում և Կովկասում տարածված սառը զենքերը՝ թուր, դաշույն, հրազենային՝ հրացան, ատրճանակ, որոնց թիվն այնքան էլ մեծ չէ: Ցուցադրությունում ներկայացված են հայդուկապետ Անդրանիկի դաշույնը, հասարակական, քաղաքական գործիչ, ՀՅԴ հիմնադիրներից Քր. Միքայելյանի (1859-1905 թթ.) ինքնաշեն նռնակները, ՀՀ խորհրդարանի պատգամավոր, քաղաքական գործիչ Զաքար Յոլյանի (Աշխատունի, 1882-1970 թթ.) դաշույնը, բանակի սպա, 1921 թ. փետրվարյան ապստամբության մասնակից Գարեգին Սարգիսբեկյանի զենքի բռնակը՝ կուսակցության խորհրդանիշով: Զենքերից մեկը, որպես հանդերձանքի մաս, կիրառվել է հանդիսությունների ժամանակ և առանձնանում է իր կառուցվածքով: Թրի վրա կան գլխագիր ՍՊ տառեր, ինչը հավանաբար «սպարապետ» բառի հապավումն է: Հաշվի առնելով, որ Հայաստանի առաջին հանրապետությունում սպարապետի պաշտոնը զբաղեցրել է հայոց ազգային բանակի կազմակերպման գործում մեծ դերակատարում ունեցած Թովմաս Նազարբեկյանը (1855-1931 թթ.), կարելի է ենթադրել, որ տվյալ թուրը պատկանել է նրան:

Կնիքներ Մոտ հինգ տասնյակ կնիք պարունակող հավաքածուն անմիջական կապ ունի ՀՀ պետական, քաղաքական, կուսակցական, դիվանագիտական, հասարակական, քաղաքական ասպարեզների և գործիչների անձնական կյանքի հետ: Կնիքը գործածվել է որպես ստորագրություն կամ հաստատման միջոց, որն ապացուցում է փաստաթղթի իսկությունը: Դրանք սովորաբար տարբեր ձև են և ունեն ուշագրավ պատկերագրություն:

Թանգարանի ֆոնդերում պահվող պետական կնիքները կլոր են՝ ՀՀ զինանշանով: Կնիքների այս ձևն

ամենատարածվածն է. նախատեսված է եղել պաշտոնական փաստաթղթերի հաստատման համար: Կուսակցական կնիքները հիմնականում ուղղանկյուն են, դրանց վրա պարտադիր կա ՀՅԴ խորհրդանշանը: Ուղղանկյուն կամ քառակուսի կնիքներն օգտագործվել են վարչական, աշխատանքային, գրանցման փաստաթղթերի համար: Թանգարանի ֆոնդում կան նաև կեղծ կնիքներ՝ պատրաստված 1903-1904 թթ., որի գործածման նպատակը կուսակցության անունից գործելը կամ նոր կուսակցություն ստեղծելն էր:[1]

Այստեղ են պահվում ՀՀ ներքին գործերի նախարարության, Արմեն Գարոյի (Փաստրմաճյան, 1872-1923 թթ.), Գարեգին Նժդեհի (Տեր-Հարությունյան, 1886-1955 թթ.) Լեռնահայաստանյան և այլ կնիքներ:

Նամականիշներ Թանգարանի յուրահատուկ հավաքածուներից են Հայաստանի առաջին հանրապետության, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի 1920-30-ական թթ. նամականիշները: Ընդհանրապես, առաջին նամականիշներն ի հայտ են եկել Մեծ Բրիտանիայում 1840 թ.: Արդեն 19-րդ դարի կեսերին դրանք տարածվել են եվրոպական գրեթե բոլոր երկրներում, ինչպես նաև՝ ԱՄՆ-ում: Նամականիշը ոչ միայն փոստային վճարման միջոց էր, այլև տվյալ ժողովրդի պատմությունը, մշակույթը, ազգային խորհրդանիշը:

Առաջին հանրապետության տարիներին Հայաստանը ևս ուներ նամականիշների սեփական նմուշները, որոնք տպագրվում էին արտերկրում, քանի որ Հայաստանում տպագրական սարքերի պակաս կար: 1919 թ. նկարիչ Արշակ Ֆեթվաճյանը (1866-1947 թթ.) ՀՀ կառավարության պատվերով ստեղծեց նամականիշների օրինակները, ապա ՀՀ առաջին թղթադրամը՝ 100 ռուբլին: 1920 թ. նոյեմբերին Փարիզում տպագրվեցին առաջին փոստային նամականիշները, որոնց վրա պատկերված էին օձին թրատող արծիվը (1, 3, 5, 15 ռուբլի արժողությամբ նամականիշներ), Արարատը (25, 50, 100 ռուբլի), իլիկով կինը (40, 70), բուսական, հայկական նախշեր: Տպագրությունը բազմագույն էր (կապույտ, կանաչ, կարմիր, նարնջագույն), թուղթը նախատեսված էր փոստային նամականիշների համար: Թանգարանի ֆոնդում մեծ թիվ են կազմում նաև Խորհրդային Հայաստանի 20-ական թթ. նամականիշները, որոնց մեծ մասի հեղինակն է Սարգիս Խաչատուրյանը (1886-1947 թթ.): Դրանցում

արտահայտված են Արարատը, թևատարած արծիվը, տեսարան Անի քաղաքից և այլն:

Դրամներ Դրամների հավաքածուն ներառում է տարբեր ժամանակներում հատված և շրջանառված մետաղադրամներ, որոնք ոչ միայն նյութական արժեք ունեն, այլև գիտական, պատմական, արվեստագիտական նշանակություն, քանի որ յուրաքանչյուր դրամ արտահայտում է ժամանակի քաղաքական, տնտեսական և մշակութային պատկերացումները՝ տարեթվեր, գրություններ, պատկերներ, մետաղի բաղադրությունը: Դրամների հավաքածուն թույլ է տալիս ուսումնասիրել դրամաշրջանառության զարգացումը հին քաղաքակրթություններից մինչև նորագույն ժամանակներ: Դրանք ներկայացնում են երկրի արվեստը, հավատալիքները, պետական խորհրդանիշները:

Թանգարանում կան բյուզանդական, պարսկական, օսմանյան, ռուսական տասնյակ մետաղադրամներ, Հայաստանի առաջին հանրապետության թղթադրամներ և այլն, որոնք առանձին ուսումնասիրության թեմա են: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Կիլիկյան հայոց թագավորության արքա Լևոն Մեծագործի արծաթե դրամը: Լևոն Բ-ի արծաթե դրամի դիմերեսին թագավորի դիմապատկերն է, աջ ձեռքում՝ գավազան, ձախում՝ գունդ, եզրին գրված է «ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ»: Կիլիկյան Հայաստանի դրամները կարևոր են եղել պետականության կայացման և զորեղացման համար՝ արտահայտելով հայկական իշխանության տարածումը, ինքնիշխանությունը: Սովորաբար Կիլիկյան արծաթե դրամներն ունեն մինչև 3 գրամ քաշ և 22 մմ տրամագիծ: Դրանք հատվել են հիմնականում մայրաքաղաք Սիսում: Հավաքածուի կարևոր մասն է համարվում նաև Ալեքսանդր Մակեդոնացու արծաթե տետրադրախմը՝ հատված Ք.Ա. 4-րդ դարում, որի դարձերեսին հունական գլխավոր աստված Զևսի պատկերն է, դիմերեսին՝ Ալ. Մակեդոնացու:[2] Դրամը պետական, քաղաքական գործիչ Արմեն Գարոն գտել է Զեյթունից, տեղադրել հուշատուփի մեջ, հետագայում այն փոխանցվել է թանգարանին:

Ձեռագործ իրեր Ձեռագործ իրերը նյութական մշակույթի բաղկացուցիչ մասն են կազմում, որոնք արտահայտում են տվյալ ժողովրդի կենցաղը, գեղարվեստական մտածողությունն ու արհեստագործական ավանդույթները, պատրաստման եղանակը, խորհրդանիշները և այլն: Թանգարանի ցուցադրությունում և ֆոնդում պահպանվել են տասնյակ ասեղնագործ թաշկինակներ, պատկերանկարներ, դրոշներ, գուլպաներ, քսակներ և այլն, որոնք ունեն ազգային նախշեր, գունային ներդաշնակություն, խորհրդանշաններ: Բացի այդ, ձեռագործ իրերն ունեն կիրառական, զարդարվեստային, ծիսական նշանակություն: Դրանք կրում են ստեղծողի ստորագրությունը՝ նախշի ձևով կամ պարզապես արձանագրությամբ:

Ստվար խումբ են կազմում ձեռագործ և ուլունքագործ քսակները, որոնք տարածված էին Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածներում և արտահայտում էին կնոջ հասարակական կարևոր դիրքը: Քսակները տարածված էին կենցաղում, որպես դրամի և մանր իրերի պահոց, ինչպես նաև որպես հարսանեկան, ծիսական նվեր: Դրանք հաճախ որպես օժիտ էին պատրաստվում[3] կամ հարսանիքին նվիրում էին հարսին բարիք, հաջողություն, բարի բախտ և բարեկեցություն մաղթելու նպատակով: Թանգարանում պահվող քսակները բազմազան են. դրանք կրել են գոտուց կախված, հագուստի ներսում կամ ձեռքից կախ, երբեմն «դրամի քսակը կամ արծաթէ բարակ շղթայով ժամացոյցը վզից կ՛անցնէին»:[4] Վան-Վասպուրականի տարազում գոտուց ամրացրել են դրամի կամ ծխախոտի քսակներ:[5] Նույնը հանդիպում ենք Շիրակ-Կարինի տարազում:[6] Քսակները պատրաստվում էին տարբեր նյութերից՝ բուրդ, կաշի, ուլունքներ, մետաղյա դետալներ և այլն: Առանձնահատուկ ուշադրության են արժանի արձանագիր քսակները, որոնց թիվը թանգարանում հինգն է: Դրանց հիշատակագրերը հնարավորություն են տալիս իմանալ, թե երբ է պատրաստվել քսակը, ում է նվիրվել և ով է նվիրատուն, օրինակ՝ «ՏԻԿԻՆ ՍԱԹԵՆԻԿԻՆ ԴԱՒԻԹԻՑ. 1894» կամ «Ս-ԻՑ ՊԵՐՃԻՆ. 1907»: Քսակներից մեկի հիշատակագիրը ռուսերեն է:

Անձնական իրեր Թանգարանում ցուցադրվում է ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչների՝ ՀՀ վարչապետների, կառավարության անդամների, զինվորական, դիվանագիտական գործիչների անձնական իրերը՝ ձեռնափայտ, հագուստ, ակնոց, սպասք, գրենական պիտույքներ, ծխախոտատուփ, տան գույք, շախմատ, զարդեր՝ ժամացույց, մատանի, լուսանկարներ, հուշատետր-օրագրեր, նամակներ, քարտեզներ և այլն:

Հուշատետր-օրագրերը, նամակները ներկայացնում են հեղինակների անձնական կարծիքը, մտահոգությունը, բերկրանքն ու վերաբերմունքը ինչ-որ երևույթի նկատմամբ, բացի այդ օրագրերում ներկայացված են պատմական իրադարձություններ, որոնք ուսումնասիրումը ևս կարևոր է: Դրանց շարքում պահպանվել են Սեբաստացի Մուրադի (Խրիմյան), Սողոմոն Թեհլիրյանի նամակները, Աշոտ Երկաթի, Թորոսի օրագրերը, հասարակական գործիչ, ՀՀ խորհրդարանի պատգամավոր Մալխասի (Արտաշես

Հովսեփյան), Էրզրումի ցեղասպանության ականատեսների հուշերը՝ գրի առնված 20-րդ դարի 20-ական թթ.: Այստեղ է պահվում նաև ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ, ռազմական գործիչ, բժիշկ Դավթյանի անձնական օրագիրը և այլն:

Լուսանկարներ Ֆոնդերում մեծ թիվ են կազմում ՀՀ և ՀՅԴ պատմության հետ առնչվող անձանց և իրադարձությունների, ընտանեկան բազմաթիվ լուսանկարներ, որոնցով պարբերաբար հարստանում է թանգարանը: Դրանցից յուրաքանչյուրն ունի պատմություն, քանի որ ներկայացնում է մեր պատմության նշանավոր գործիչների կյանքն ու գործունեությունը:

Այսպիսով, ՀՅԴ թանգարանը քաղաքական, ազգային-ազատագրական և ընդհանրապես նոր շրջանի հայկական պատմության ուսումնասիրության կարևորագույն հաստատություններից է: Այն պահպանում և ներկայացնում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայորդիների գործունեությունը, հայոց ազգային-ազատագրական պայքարի փուլերը, ՀՅԴ կուսակցության գործունեությունը, քաղաքական ակտիվությունը և այլն: Թանգարանը ձևավորվել է կուսակցության պատմական և անձնական արխիվների, փաստաթղթերի, նամակագրության հիմքի վրա, որը ներկայացնում է դաշնակցական շարժման գաղափարական, քաղաքական և ռազմական գործունեության ամբողջական պատկերը: Գիտական առումով թանգարանը կարևոր կենտրոն է, որի արխիվի և ֆոնդերի մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն կտա բացահայտելու նոր էջեր հայ ազատագրական մտքի և պայքարի պատմությունից:

Ամփոփում

Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմության թանգարանը ներկայացնում է հայ ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920 թթ.) և ՀՅԴ գործունեության հարուստ ժառանգությունը: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում թանգարանի դրամների հավաքածուն՝ շուրջ 60 միավոր, որոնք տարբեր անձանց կողմից ժամանակի ընթացքում փոխանցվել են թանգարանին: Դրանք ներառում են բյուզանդական, սելջուկյան, ռուսական դրամներ, որոնք պահանջում են խորքային մասնագիտական հետազոտություն: Բացի այդ, մեր կողմից ուսումնասիրվել են նաև թանգարանի արձանագիր նմուշները, որոնց շնորհիվ հնարավոր է բացահայտել արժեքավոր տեղեկություններ տվյալ իրերի մասին:

Թանգարանը մշակութային կենտրոն է, որի առաքելությունն է ներկայացնել 1918-1920 թթ. Հայաստանի անկախության համար պայքար մղած հայորդիների, նրանց սխրանքների պատմությունը: Այն ոչ միայն անցյալի պատմության և հիշողության վայր է, այլև ներկայի և ապագայի համար կարևոր ուղեցույց՝ պետականության արժեքների և ինքնության պահպանման գործում:

Ծանոթագրություններ

1 Կնիքներից մեկի ծրարի վրայի գրությունից տեղեկանում ենք, որ Խլու Հովհաննես անունով մեկը շահագործում էր կեղծ կնիքներ, որը վտանգավոր էր կուսակցության գործունեության համար:

2 Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1985, էջ 29, 351 էջ:

3 Դավթյան, Հայկական ասեղնագործություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 35:

4 Հ. Փափազեան, Հայկական տարազ, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2002, էջ 59:

5 Դավթյան Ս., էջ 14:

6 Դավթյան Ս., էջ 23:

Հաւատավորը՝ Վահան Նաւասարդեան
(Ծննդեան 140-ամեակի եւ մահուան 70-րդ տարելիցի առիթով)

Համաստեղ

Մահը ինչպէ՞ս կրցաւ տեղ գտնել Վահանի իսկապէս լեցուն հոգիին մէջ: Լեցուն՝ աշխատանքով, խանդավառութիւնով, սիրով, կիրքով, լեցուն մանաւանդ մեծ հաւատքով: Այդ բոլորը լեցուցած էին անոր կեանքի բոլոր ժամանակները: Ան վարար գետի մը հոսանքն էր իր երիտասարդ օրերուն, գետ մը՝ իր յառաջացած տարիքին ու իր կեանքի վերջին շրջանին: Գետ մը՝ միշտ հոսանքի մէջ, քարերուն զարնուող ու փրփուր տուող, և կարծես միշտ կ՚իմանայիր անոր մէջ գետին այդ վազքը անհանդարտ, երբ նոյնիսկ լուռ էր:

Պսակադիր քահանան էր պատասխանատու բոլոր հետևանքներուն:

Ողբացեալ Վահանն ու Հերսելիան իրենց ծխատէր քահանաներէն ոչ մի նման փաստաթուղթ չունէին, ես զանոնք չէի ճանչնար, ուստի պէտք է մերժէի՝ պատասխանատուութիւնից զերծ մնալու համար:

Հետագայում, Ս. Հռիփսիմէ վանքին մէջ զանոնք պսակած է Մեծի Տանն Կիլիկիոյ հոգելոյս Կաթողիկոս Գարեգին Ա-ը, երբ Վահանը Էջմիածնի Գէորգեան ճեմարանում ուսուցիչ էր, իսկ Գարեգին Կաթողիկոսը տեսուչ էր ճեմարանին՝ ծայրագոյն վարդապետ եղած միջոցին: Հանգուցեալ Վահանին իմ խորին գոհունակութիւնս յայտնեցի, որ իմ մերժումով իր պսակադիրն եղաւ ինձնից արժանաւորը՝ իմ թանկագին ուսուցիչը:

«Որչափ խաւար է գիշերը, նոյնքան փայլուն են աստղերը»,– կ՚ըսէ ռուսական ասացուածքը: Հայութեան խաւարչտին ու մութ երկնակամարին վրայ ողբացեալ Վահան Նաւասարդեանի աստղը փայլեց իր բովանդակ լոյսով՝ լոյս եւ յոյս տարածելով իր չորս կողմը եւ ծիրը թողնելով հայոց երկնքին վրայ՝ մի նոր համաստեղութիւն կազմեց՝ Նաւասարդեան Համաստեղութիւն...

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

***

Իր երիտասարդութեան շրջանին ըմբոստ, անկաշկանդ, ազատութեան ձգտող, աւելի լայն հորիզոններու թռիչք հասցնող նոր սերունդի մը ինքնուրոյն մէկ ներկայացուցիչն էր Վահանը եւ, անտարակոյս, հին սերունդին մտահոգութիւնը՝ յիշել ինչ որ հին սերունդինն էր, հեռանալ պապենական տունէն, աւանդութիւններէն ու նախապաշարումներէն:

Վահանը քանի յառաջացաւ, ոչ միայն հիմնովին ըմբոնեց հին սերունդին իմաստութիւնը, այլեւ դարձաւ աւելի պահպանողական ու աւելի ըմբոնեց մեր պապերուն արժէքները: Ազատութեան համար անկաշկանդ թռիչք առնող Վահանը դարձաւ հլու հպատակը, անկաշառ պահապանը, անխոնջ մշակն ու ծառան մեր

պապերուն հաւատքին: Այդ արժէքները Վահանին մէջ դարձան ոչ միայն իմացականութիւն, այլև հաւատք՝ առանց այլևայլի և առանց պատճառաբանութեան: Ան ոգեւորուեցաւ մեր պատմութիւնով և իր ոգին դարձուց անառիկ բերդ: Հայ հողը դարձաւ անոր համար ներշնչարան, դարձաւ ոգի եւ մարմին՝ Յիսուսի բաժնած նկանակին պէս: Հողը անոր համար մասունք էր ու դիւցազներգութիւն: Ափ մը հայկական հողի մէջ ան կրնար լսել դոփիւններն ու վրնջիւնները դիւցազնամարտի ձիերուն ու տեսնել հսկայ հասակը Հայկին:

Ան սրբակրօն էր, ինչպէս քուրմ մը տաճարին մէջ, քուրմ մը՝ մոլեգին ու անողոք: Այդ հաւատքի տաճարն էր, որ կը պաշտպանէր պատարագով, աղօթքով ու կիրքով:

Վահանը գուցէ մէկ ծունկ աղօթք ըրած չէր հայ եկեղեցիին մէջ և սակայն առանց տատամսելու ընդունակ էր նետուիլ կռիւին մէջ՝ փրկելու համար Հայ եկեղեցին. մեր տունը սրբազան, ուր կ՚ապրին ոգիները նախնիքներուն:

– Նկատեցի՞ր,– խօսեցաւ Վահանը, երբ տարիներ առաջ Երուսաղէմի մէջ հայկական վանքի կալուածներէն կ՚անցնէինք:

– Ի՞նչը, Վահա՛ն:

– Չնկատեցի՞ր, որ միշտ սեղանին վրայ ծռած կուրծքս, ուսերս շտկուեցան հրաշքով: Ես կը զգամ

այդ հրաշքը. կուրծքս վեր ելաւ հայրենիք ունեցող զինուորականի մը պէս, որովհետեւ հայ վանքի կալուածներուն մէջէն կ'անցնինք:

– Հա՛յր Սուրբ,– խօսեցաւ Վահանը Հայր Թաշճեանին,– եթէ կռուողի պէտք ունենանք մեր վանքին իրաւունքները պաշտպանելու համար, նոյնիսկ ամենափոքր, անիմաստ իրաւունք մը, զիս կանչէ:

Վահանին համար եթէ կար համամարդկային, նոյնիսկ տիեզերական հարց մը, ան ալ հայ ժողովուրդին հարցն էր, և չկար աշխարհի մէջ այնքան մեծ և ազնիւ ժողովուրդ, որքան հայ ժողովուրդն էր: Զգացական, պիտի ըսեն ոմանք, եւ սակայն Վահանը, հետևած ընկերաբանական գիտութիւններուն, անխոնջ ընթերցող մը, իր իմաստութիւնը բիւրեղացուցած էր Հայրենիք ու Հայաստան գաղափարին հետ: Ան չէր քաշուէր նոյնպէս ծայրայեղօրեն ըսելու. «Այն բանը, որ չի ծառայեր հայ ժողովուրդին, անիմաստ է եւ փուճ»:

Վահանին համար ճշմարիտ է այն, որուն ինք կը հաւատար, որովհետև իր հաւատքը և իր իմաստութիւնը նոյնացած էին հայ ժողովուրդին հետ: Ան որպէս անհատ չէր, որ կը մտածէր: Անոր մէջ տարրերու շարժումը կար, սերմ նետուած արտի մը շարժումին պէս: Ամէն բանով գերիվեր կը զգար, որովհետև իր հոգիին մէջ կ'ապրէր իր ցեղին մեծութիւնը: Մեծ կը զգար իր նախնիքներով: Վահանը եկած էր դեր մը կատարելու: Ցեղին տարրը այնքան արթուն էր անոր մէջ, հոսանք մը, որ զինք կը մղէր արշաւի, ու միշտ ալ արշաւ մը եղաւ անոր կեանքը իր մտածումով ու գործունէութեամբ:

Եթէ Հին Կտակարանի շրջանին մէջ ըլլար ան, վար պիտի գար լեռնէն, խիստ մարգարէի մը պէս տապալելու համար կուռքերը: Ինքզինք զրկող խիստ անապատական մը, որ կարծես Ս. Մեսրոպի հրաշքը իր աչքերով տեսած էր. այդքան միսթիք էր անոր հաւատքը: Ուժեղ էր անոր սէրը, ուժեղ էր նաև անոր ատելութիւնը: Եթէ կար թերութիւն մը անոր մէջ, այն ալ բարեխառնութեան պակասն էր. կամ խիստ ցուրտ էր ու սառնամանիք և կամ շատ արևոտ ու տաք. ես վստահ եմ, որ թշնամիներն անգամ պիտի ներեն Վահանին, որովհետև այնքա՛ն մեծ սրբազնութիւն դրած էր իր հաւատքին մէջ: Այդ էր պատճառը, որ անոր կիրքին ու պայքարներուն մէջ անկեղծութիւն կար:

Անտարակոյս, ճիշդ էր Վահանը: Ճշմարտութիւնը ինքը հաւատքն էր, առանց ինչու-ի եւ առանց պատճառաբանութեան: Ճշմարտութիւնը իր ցեղն է, իր ժողովուրդը: «Սխալ թէ շիտակ՝ այդ իմ Հայրենիքն է»,– այդ կրնար Վահանը ըսած ըլլալ:

Չէ՞ որ հայ ժողովուրդը ապրեցաւ նոյն զգացումով, նոյն հաւատքով: Այլապէս, եթե չունենար զգացական այդ ուժը, ուրիշ որևէ ուժով չէր կրնար պահել իր գոյութիւնը:

Մեր նախնիքը, մեր լեզուն, մեր պատմութիւնը, Ս. Մեսրոպը, Հայկը, Վարդանը, Արարատը, մեր ազատագրական շարժման հերոսները, բոլորը, բոլորը, գերադրական մարմին առած ոգիներ էին Վահանին համար: Ու կ'ապրէր, կը ներշնչուէր այդ բոլորով:

Ըսե՞լ, որ Վահանին մէջ միշտ ալ ուժեղ բանաստեղծը կար և կաշկանդուած բանաստեղծը, որ ճիգ կ'ընէր իր ազատութիւնը գտնել: Հակառակ անոր, որ Վահանը ամբողջովին կ'ապրէր իր խմբագրական, իր քաղաքական-կուսակցական աշխատանքներով, իր պայքարներով, չէր զգար, որ իր մէջ բանաստեղծը կար կաշկանդուած եւ այդ բանաստեղծը յաճախ իր գոյութիւնը կը զգացնէր անոր ոգին մէջ, երբ կը խորհրդածէր, երբ դիմագիծ մը ուզէր տալ:

Վահան Նաւասարդեան տիկինին հետ

Վահանի ոգին գծերը կու գային Խորենացիէն եւ Նարեկէն: Անոր մէջ երբեմն ալ զգալի էր բանաստեղծն ու իր ոգը, երբ նոյնիսկ թուանշաններուն հետ էր, երբ Նեղուցներու մասին կը գրէր եւ կամ կու տար Դաշնակցութեան գաղափարաբանութիւնը:

Ինչպէս անհատներ, նոյնպէս ազգերն ալ ունին իրենց թերութիւնները: Մեր վիպագիրը, մեր բանաստեղծը, մեր տեսաբանը, խմբագիրը և նոյնիսկ գիտնականը *ռոմանթիկ* ապրումներով մօտեցեր են հայ ժողովուրդին ու յաճախ ներբողներ են հիւսեր: Շրջանը կամ սերունդը հասած չէ հայ գրագէտին, հայ խմբագրին համար, մօտենալու հայ ժողովուրդի թերութիւններուն: Վահանը շատ հարազատ մէկ ներկայացուցիչն էր երանելի սերունդի մը, որ հետզհետէ կը հեռանայ իր *ռոմանթիկ* մեծ նուիրումներով, աստղերուն նայող եւ *միսթիք*՝ իր հաւատքին մէջ: ■

Տպագրվել է «Յուսաբեր»-ի՝ Վահան Նաւասարդեանի (1886-1956) հիշատակին նվիրված բացառիկ համարում՝ 1957 թ. հունիսի 24:

Յանձնառու հայ քաղաքացին

(Սիլվա Կապուտիկեանի մահուան 20-րդ տարելիցի առիթով)

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Երեւան, Մաշտոցի պողոտայ, 1973 թ. Աշուն

Նոր հրատարակուած էր, եղբօրս՝ Պետիկ Հերկելեանի առաջին գրքոյկը՝ «Պատուհանէն Դուրս»ը, որմէ տրցակ մը տարած էի հետս Երեւան, բաժնելու համար ազգականներու, ընկերներու եւ որոշ գրողներու: Որովհետեւ Պետիկը նամակ մըն ալ գրած էր Յովհաննէս Շիրազին, որոշեցի առաջինը այցելել անոր: Այն ատեն Շիրազը կ'ապրէր Լենինի (այժմ՝ Մաշտոցի) անուան պողոտայի վրայ: Բարձրացայ երկրորդ յարկ եւ առաջին հայեացքէն յուսախաբ եղայ: Սահմանափակ ու հնամաշ կահոյք, մեծ սեղան մը՝ որուն վրայ ամէն ինչ կարելի էր տեսնել...: Բառին բուն իմաստով թափթփած բնակարան մը, որուն մէկ անկիւնը իրարու վրայ դիզուած թուղթեր (ձեռագիրներ) կային: Յղի կին մը ներս մտաւ, սկսաւ գետինը ցրուած իրերը հաւաքել, քիթին տակէն դժգոհանքի խօսքեր մռմռալով...: Շիրազը անգիտանալով կնոջ ներկայութեանը նամակը ընդունեց ու ոտքի վրայ ըսաւ.

- Դուն ո՞վ ես, ինչո՞ւ եկար, կ'ուզե՞ս նստիլ:

Թէեւ հեռաձայնած էի, բացատրած՝ այցելութեան նպատակն ու ո՞վ ըլլալս, սակայն ան հարցերն ու հրաւէրը կ'արտասանէր այնպիսի առոգանութեամբ, կարծես թէ ըսել կ'ուզէր «ընդունեցի բերածդ, հիմա կրնաս երթալ...»: Մինչ ես շուարած էի ու կը մտածէի դուրս ելլել, յանկարծ երիտասարդ մը ներս մտաւ: Շիրազի մոայլ դէմքը պայծառացաւ ու ծանօթացուց.

- Տղաս է, աւագը՝ Արան...

Արայիկը կացութիւնը փրկեց: Առաջ անցաւ, գրկեց հօրը նստեցուց բազկաթոռին ու ինձ առաջարկեց.

- Լաւ կը լինի որ հիմի գնանք եւ աւելի յարմար մի օր գանք...:

Իջանք փողոց, նախ բացատրեց.

*- Հայրս ոչ թէ հարբեցող է, այլ մի քիչ խմելուց «Խանգարւում» է, որի հիմնական պատճառը **չգնահատուած ու հալածուած լինելու զգացողութիւնն** է:*

Ապա զրուցելով բարձրացանք օփերային կից գտնուող «*Կազիրոք*» սրճարանը, ուր մէկ անկիւնը տեղաւորուելէ ետք, առանց կարծիքս առնելու պաղպաղակ եւ սուրճ պատուիրեց: Բացատրելէ ետք թէ հօր՝ Շիրազի երկրորդ կնոջ գլխաւոր պարտականութիւնը երեխաներ ծնիլ և մեծացնելն է, տուաւ առաջին հարցը.

- «Նագուլ»ին ճանաչո՞ւմ ես:

- Ի հարկէ, ազգականս է, այստեղ է սովորել, չէ՞...:

Պարզուեցաւ որ Տ. Յարութիւն Նագուլեանի մտերիմներէն է: Մեր զրոյցը թէեւ առաւելաբար ծանօթացման բնոյթ ունէր, սակայն հետաքրքրուեցաւ նաեւ Պետիկի գրքոյկով: Ըսի.

- Եղբայրս ղրկած է զանոնք բաժնելու համար, յատկապէս գրողներու, կ'ուզենայի օրինակ մը ալ տալ մօրդ՝ Կապուտիկեանին:

Ան առաւ գրքոյկը ու խոստացաւ յանձնել զայն մօրը:

Ժամանակ մը ետք, պատահաբար հանդիպեցանք «Դրամատիկական Թատրոնի» դիմաց: Կապուտիկեանի հեռախօսի թիւը գրել տուաւ ինծի ու ըսաւ.

- Մայրս ուզում է հանդիպել քո հետ...

Նոյն օրն իսկ հեռաձայնեցի...:

Երեւան, Տէրեան փողոց, 1973 թ., Ձմեռ

Գացի: Կապուտիկեանը ընդունեց զիս հին ծանօթի նման, եւ ինչպէս Արայիկը՝ ինք եւս առաջին հերթին հարցուց Յարութիւն Նագուլեանի եւ իր տիկնոջ՝ Էմմայի մասին: Հոս ամէն ինչ հակապատկերն էր Շիրազի բնակարանին: Կապուտիկեանը թէյը բերաւ ու սեղանին շարեց քանի մը տեսակ հատապտուղով «մուրապաներ» ու հարցուց.

- Արայիկը ասեց որ Պետիկ Հերկելեանը եղբայրդ է, սակայն չիմացայ թէ քանի՞ տարեկան է եւ կամ ինչ կրթութիւն ունի:

- Փոքր եղբայրս է, նոր է աւարտել Այնճարի երկրորդական վարժարանը:

- Ինչու եմ հարցնում, բանաստեղծութիւններ կան, որոնք սկսնակի թոթովանքներ են, իսկ ուրիշներ՝ հասուն բանաստեղծի տպաւորութիւն են թողնում:

- Այո, բայց նկատի առէք որ բանաստեղծութիւնների մեծ մասը նա գրել է 14-15 տարեկան հասակում:

- Իսկ ես կարծում էի որ նա քո մեծ եղբայրը պիտի որ լինէր.... զգում ես որ նա գրելու շնորհ ունի ու խառնուածքով «Արթիսթ» է:

Այնուհետեւ մեր խօսակցութիւնը աւելի «հարցաքննութեան» բնոյթ ստացաւ քան՝ «բարեկամական զրոյցի»: Ամէն ինչ կ'ուզեր իմանալ: Երբ նկատեց թէ իմ պատասխանները քիչ մը զուսպ են ու ոչ ամբողջական, ըսաւ.

- Իմ հայրս էլ Վանում եղել է դաշնակցական ազգային գործիչ, կարող ես վստահել ինձ:

Յետագային երբ իր մասին հարցուցի Վազգէն Մանուկեանին, ըսաւ.

- Տիկին Սիլվայի հետ ծանօթացել եմ ուսանողական տարիներին Մոսկուայում Համօ Ակիմիչի (Համազասպ Հովակիմի Յարութիւնեան) տանը, նրա միջոցով: Մենք մինչեւ հիմա համագործակցում ենք...: Այո, կարող ես վստահել նրան:

Նախ պէտք է նշեմ, որ Խորհրդային տարիներուն Հայաստանի մէջ «Պարոն» կամ «Տիկին» արտայայտութիւնները գոյութիւն չունէին, բոլորը «ընկեր» էին իրարու, բայց մենք Կապուտիկեանին կը դիմէինք «Տիկին Սիլվա»յով, առ ի յարգանս իրեն: Իսկ Համազասպ Յարութիւնեանը այն անձնաւորութիւնն էր, որ մեծ հեղինակութիւն ունէր խորհրդային քաղաքական բարձրագոյն շրջանակներէ ներս, եւ միաժամանակ Մոսկուայի մէջ կը հովանաւորէր Վազգէն Մանուկեանի ղեկավարած ուսանողական շարժումը:

Երեւան, Տէրեան փողոց, 1974 թ., Գարուն

Այս անգամ Լյութվիկ Խաչատրեանի միջոցով լուր ստացայ, որ Տիկ. Սիլվան Լիբանան մեկնելէս առաջ կ'ուզէ զիս տեսնել: Գացի, հետս առի նաեւ «Բագին» ամսագրի հերթական մէկ համարը: Մինչեւ որ ես իրեն բացատրեմ թէ կարդալէ ետք, ինչպէս պիտի փոխանցէ ուրիշի մը, խօսքս կտրեց ու ըսաւ.

Մովսէս ջան՝ ես «Մշակութային Կապերի Կոմիտէում» հնարաւորութիւն ունեմ «Բագին» ընթերցելու, լաւ կը լինի մի այլ մտաւորականի տաս որ տարածուի...:

Այդ օրերուն, նոր հրատարակուած էր իր «Քարաւանները դեռ քայլում են» խնդրայարոյց հատորը, որ ոչ միայն լայն տարածում գտած էր, ըլլայ հայրենիքի թէ Սփիւռքի մտաւորական շրջանակներէ ներս, այլ նաեւ «աղմուկ» ստեղծած: Օրինակ մը երկարեց ինծի ու ըսաւ.

- Քանի որ Պէյրութ ես գնում, խնդրում եմ այս մէկը տանես եւ յանձնես «Ձերոնց»:

Թէեւ անուն չտուաւ, ես տարի եւ «Ազդակ Շաբաթօրեակ»ի խմբագիր Սարգիս Ջէյթլեանի թելադրութեամբ, յանձնեցի «Բագին»ի խմբագրութեան:

Զրոյցի ընթացքին պարզուեցաւ, որ ան բաւականին տեղեկութիւններ ստացած էր Վազգէնէն (Մանուկեան) եւ Լյութվիկէն (Խաչատրեան) իմ մասին, որմէ ետք մեր հանդիպումները առաւելաբար տեղի կ'ունենային «Թարգմանչաց Տօներու» ընթացքին, միշտ ջերմ ու բարեկամական մթնոլորտի մէջ:

Ծաղկաձոր, Մերկելեանի ինսթիտուտի «պանսիոնաթ», 1979 թ., Աշուն

«Թարգմանչաց Տօներու» միջացառումները տեղի կ'ունենային ամէն տարի աշնան՝ կազմակերպութեամբ Վազգէն Մանուկեանի եւ ընկերներուն, որոնց նպատակը նախ՝ համախմբել հայրենի մտաւորականութեան վերնախաւը, եւ ապա քննարկել ազգային գաղափարական հարցեր, պաշտպանելու եւ պահպանելու համար հայ ազգային ոգեղէն արժէքները Խորհրդային պայմաններու տակ: Այդ տարի խօսքը հայրենասիրութեան գործնական արտայայտութիւններու մասին էր: Զրոյցները տեղի կ'ունենային կերուխումի սեղաններու շուրջ, միշտ երկու սեղանապետներու՝ Սերօ Խանզադեանի եւ Սիլվա Կապուտիկեանի ղեկավարութեամբ: Իրարայաջորդ երեք օրերու ընթացքին, քննարկուեցաւ Խորհրդային պայմաններու տակ «գործող» «*Հայրենասիրութեան*» թեման: Ճարտարապետներ՝ Արթուր Թարխանեան, Արմէն Ջարեան, Ճիմ Թորոսեան եւ ուրիշներ կը պնդէին թէ հնարաւորին չափ շատ եւ մեծ կառոյցներ հարկաւոր է իրագործել, այն իմաստով որ Հայաստանի անկախացումէն ետք այդ կառոյցները պիտի մնային հայութեան: Օրինակ կը բերէին այն շինութիւնները, որոնք Հայաստանի ուժերով միայն կարիլի չէր իրագործել: Ինչպէս. «Հրազդան» Ֆուտպոլի դաշտը, ստորգետնեայ գնացքը (Մեթրոն), «Արփա Սեւան» փապուղին եւ կամ Ծիծեռնակաբերդի Մարզահամալիրը, որուն իրագործումը նոր սկսած էր:

Ձախէն աջ՝ Ուիլյամ Սարոյեան, Վարդգէս Պետրոսեան և Սիլվա Կապուտիկեան

Երկրորդ օրը, խօսք առին գիտնականներ Սերկէյ Մերկելեանը, Անտոն Իոսիֆեանը, Գր. Գուրզադեանը եւ որիշներ: Այդ տարիներուն յիշեալ երեք ականաւոր գիտնականներուն զուգահեռ ունէինք նաեւ՝ համամիութենական արժէք ներկայացնող այլ գիտնականներ, որոնք մասնագիտացած էին Ռուսաստանի մէջ, սակայն իրենց անձնական ջանքերով գիտահետազօտական կեդրոնները կառուցած էին Հայաստանի մէջ, որոնք թէեւ կը ծառայէին Խորհրդային Միութեան ընդհանրապէս, սակայն թէ Հայաստանը կը շէնցնէին, եւ թէ ինչ որ չափով ռուսերուն կախեալ կը պահէին մեզմէ:

Երրորդ օրը՝ երեկոյեան, նախքան ընթրիքը, որու ընթացքին տեղի պիտի ունենար «Հայ Մշակոյթին»

«Թարգմանչաց տօների» շարժման անդամները Վազգէն Վեհափառի հետ

Միլվա Կապուտիկեանը Մովսես Ծիրանիի հետ «Նոազ Արք» ցուցասրահում, Պէյրութ

նուիրուած զրոյցը, հանգստատան նախասրահի մէկ անկիւնը նստած էի Սերկէյ Մերկելեանի, Գր. Գուրզադեանի, Արմէն Զարեանի եւ Ար. Թարխանեանի հետ, որոնք հետաքրքրուած էին լիբանանահայութեամբ եւ առհասարակ Սփիւռքով: Յանկարծ դիմացէն մօտեցաւ Կապուտիկեանը: Բնազդաբար բոլորս ողջունեցինք զինք սիրալիր, որմէ ետք ան տեղ գրաւեց մեր մէջ ու խօսքը ուղղելով գիտնականներուն ըսաւ.

- *Դուք գիտութիւն էք զարգացնում եւ երկիր էք կառուցում, ճիշդ էք անում, դա էլ հարենասիրութիւն է եւ կարեւոր, սակայն եթէ մենք չկարողանանք* Յանձնառու քաղաքացի *ձեւաւորել, եւ այն էլ* Հայ ազգային քաղաքացի, *ապա Հայաստանը կը մնայ իբրեւ Ռուսաստանի մի նահանգը... առանց հայու: Իսկ Հայ ազգային քաղաքացի կերտելու միակ միջոցը մնում է Հայ մշակոյթի խթանումն ու տարածումը, ընդ որում, առաջին հերթին, գրականութեան զարգացումն ու լեզուի մաքրագործումը....:*

Գուրզադեանը պատասխանեց.

- *Ես ձեզ հասկանում եմ, առանց մշակոյթի Ազգ գոյութիւն չի կարող ունենալ: Բայց* ***դուք ձեր գործը պիտի անէք, մենք՝ մերը****, որոնք զիրար չեն խաչաձեւում, այլ պարզապէս ամբողջացնում են:*

Այդ գիշեր Տիկ. Սիլվայի հետ խօսք առին նաեւ՝ Ռաֆայէլ Իշխանեանը, Սերօ Խանզադեանը եւ ուրիշներ...: Ի դէպ, այս ոչ պաշտօնական բնոյթի զրոյցները այնքան ալ հեզասահ չէին ընթանար: Ռուսական կրթութիւն ստացած մտաւորականներէն ոմանք կարգ մը ազգային արտայայտութիւններ ծայրահեղ եւ ոչ գործնական կը համարէին: Այդ օր տիկ. Սիլվայի ելոյթը այնքան թելադրական էր ու ազգային գետնի վրայ՝ շահեկան, որ առաջարկուեցաւ սոյն թեմայով հանդէս գալ նաեւ՝ պաշտօնական ամպիոններէն: Հոս հարկաւոր է նշել, որ Կապուտիկեանը եւ ներկաներէն շատեր, թէեւ կ'ուզէին անջատուիլ Խորհրդային Միութենէն ու անկախանալ, սակայն միաժամանակ Ռուսաստանը կը համարէին դաշնակից ու, ըստ իրենց, յարաբերութիւնները պէտք է մնային բարեկամական:

Յետագային, 1981-ի Մայիսին տեղի ունեցած Հայաստանի գրողներու միութեան ութերորդ համագումարի ընթացքին, Կապուտիկեանը, ի նպաստ Հայոց լեզուի եւ հայապահպանութեան, բացառիկ ճառ մը արտասանեց, որ ոչ միայն ցնցիչ տպաւորութիւն ձգած էր ներկաներուն վրայ, այլեւ իր խիստ խնդրայարոյց բնոյթին հետեւանքով քննադատուեցաւ ու չհրատարակուեցաւ Հայրենիքի մէջ: Սակայն կարճ ժամանակ մը ետք հասաւ Լիբանան ու Սարգիս Ջէյթլեանի թելադրանքով հրատարակուեցաւ անստորագիր, ու տարածուեցաւ Սփիւռքի այլ գաղութներէ ներս եւս:

Պէյրութ, 1996 թ., «Նոազ Արք» ցուցասրահ, Աշուն

Կապուտիկեանը երկրորդ անգամ ըլլալով կ'այցելէր Լիբանան: Թէեւ հրաւիրողը անհատ մըն էր, գրող, հրապարակախօս եւ խմբագիր՝ Սամ Ռագուպեանը, սակայն գրկաբաց ընդունուեցաւ ու մեծարուեցաւ համազգային տարողութեամբ: Շատեր նոյնի՛սկ «*Ամենայն Հայոց Բանասրեղծուհի*» տիտղոսը շնորհեցին իրեն, որ այն ատէն քիչ մը շատ թուեցաւ ինծի:

Այդ օրերուն, «Նոազ Արք» ցուցասրահի բացումը երեւոյթ էր Լիբանանի մէջ, որովհետեւ ցուցադրութեան դրուած էին, քանէ աւելի ռուս եւ հայ «Անհեթեթ Գերիրապաշտ» (Absurd Surrealist) գեղանկարիչներու արուեստի գործերը, որոնք նորութիւն էին առհասարակ արուեստի պատմութեան մէջ: Իսկ ես, այդ շրջանին բազմազբաղ էի բառին բուն իմաստով: Իր հետ կայացած հանդիպումներէն միայն մէկուն կրցած էի ներկայ գտնուիլ, եւ այն ալ առանց զինք կարենալ տեսած ըլլալու: Երբ իր մեկնելու օրերը մօտեցած էին, եւ ես կը մտածէի ինչպէս հանդիպիմ անոր հետ, յանկարծ տք. Նագուլեանը հեռաձայնեց, ու տեղեկացուց որ յաջորդ օրը Կապուտիկեանին քովս պիտի բերէ...: Եկան: Տիկ. Սիլվան ուշի ուշով ցուցահանդէսը դիտելէ եւ իմ բացատրութիւնները լսելէ ետք, ըսաւ.

- *Այս ցուցահանդէսից մի քանիսին միայն գիտեմ (Վրոյրը, Հենրիկ Էլիբեկեանն ու Վաղարշակ Արամեանը), միւսների գործերը նոր եմ տեսնում: Յարութ ջան, զարմանում եմ: Ուրեմն, Պէյրո՞ւթ պէտք է գանք Մովսէսի մօտ, որպէս զի հայրենի ժամանակակից արուեստին ծանօթանանք: Այդ ինչպէս է եղել Մովսէս ջան:*

Հայ մտաւորականներն ու գիտնականները «Թարգմանչաց տօների» ժամանակ

- Իրականութեան մէջ, այս ձեռնարկի նախաձեռնողը եղել է Իգիթեանը, իրենց նիւթաբարոյական օժանդակութեամբ մեզ օգնել են նաեւ երկու արուեստասէր ընկերներ. Ռուբէն Աւագեանն ու Մեր Սահակեանը:

- Մ՛յ քեզ բան, Հայաստանում այդպիսի արուեստասէր մեկենասներ կան, եւ մենք լուր չունենք:

Նագուլեանը իր իւրայատուկ հումորով պատասխանեց.

- Սիլվա ջան, Հայաստանում դեռ ինչեր կան, որոնցից դու «խապար» չես: Մոսկէսի մօտ գալով, թէ՛ Հայաստանի ժամանակակից արուեստին ծանօթացար, եւ թէ՛ նոր մեկենասներ գտար...:

- Դու գիտես, որ անկախ ամէն ինչից, ես Մոսկէսին ուզում էի տեսնել... ու առանձին զրուցել հետը:

- Ոչինչ, Շաբաթ օր մեզ մօտ կը հաւաքուենք եւ այնտեղ կը խօսէք:

Շաբաթ օր, Նագուլեաններու բնակարանն էինք: Յարութի կողակիցը՝ Էմման եւ իր հարեւանը Սեդա Կանաչեանը զբաղուած էին սեղանը պատրաստելով: Բացի ինձմէ եւ տիկնոջիցս՝ Էլոյէն, ներկայ էին նաեւ՝ Սամ Ռագուպեանը, Ռաֆֆի Սիսլեանը, Պարոյր Աղպաշեանն ու Ժիրայր Դանիէլեանը, բոլորն ալ իրենց տիկիններով: Սեղանի շուրջ մեր զրոյցը կ՚ընթանար ջերմ ու բարեկամական մթնոլորտի մէջ: Ընթացքին Կապուտիկեանը դառնալով ինձի ըսաւ.

-Վաղը մեկնում եմ Այնճար, գալո՞ւ ես...

- Ի հարկէ, Այնճարում եթէ ես չլինեմ քո կողքին, ո՞վ է լինելու...

- Շատ լաւ, յիշիր մի հարց կայ քո հետ, այնտեղ կը խօսենք:

Դարձեալ Նագուլեանը սրամտեց.

- Երեւի քո եւ Մոսկէսի միջեւ, ինչ որ բան կայ, որ մենք չգիտենք: Տես, այնճարցիք տարբեր հայեր են, յանկարծ նոյն ճառերը չարտասանես: Նրանք չեն ների քեզ...:

Մեր մէջ, Իբրեւ Սիլվայի եւ Արայիկի հին մտերիմներէն մէկը՝ Յարութիւն Նագուլեանը միակն էր, որուն կը թոյլատրուէր Կապուտիկեանի հետ նման կատակներ ընել...: Ան յաջորդ օրը Այնճար մեկնեցաւ Երուանդ Փամպուքեանի ուղեկցութեամբ: Թէ այնճարցիները գոհ մնացած էին իր արտասանած ճառէն եւ թէ ինք անոնցմէ: Հակառակ անոր, որ իսկապէս կ՚ուզէի մեկնիլ Այնճար, սակայն հարկադրաբար մնացի Պէյրութ, ու չգիտցայ թէ ինչի՞ մասին պիտի խօսէր հետս:

Յարգելի եւ միաժամանակ սիրելի տիկ. Սիլվա՝

այս յուշագրութիւնը ստորագրելէ առաջ, որոշ ճշդումներ կատարելու համար, գրող՝ հրապարակախօս ու հմուտ խմբագիր Լուսիա Մեհրապեանի հետ, այցելեցի Տուն թանգարանդ, ուր ծանօթացայ երկու վաստակաշատ մտաւորական տիկիններու: Թանգարանի տնօրէնուհի՝ Արմենուհի Դէմիրճեանին ու գիտաշխատող՝ Սեյրանուհի Գեղամեանին: Հոն շատ բան իմացայ քո մասին, սակայն յատուկ հետաքրքրական էր ինծի համար հօրդ պարագան, ուր ցաւալի էր իմանալ անոր կանխահաս մահն ու անոր ձեռագիրներու հրդեհումի պատմութիւնը... քու սեփական ձեռքերովդ: Միւս կողմէ սակայն «Էջեր Փակ Կզրոցից» գիրքին մէջ, հպարտութեամբ կը մէջբերէիր այն կարծիքներն ու տպաւորութիւնները, որոնք պատմած էին քեզի հօրդ ընկերներն ու ծանօթները,Վանի մէջ կատարած իր ազգային յեղափոխական գործունէութեան մասին: Այնուամենայնիւ, անոնց մէջ չհանդիպեցայ Արամ Մանուկեանի վկայութեան,(որուն տեղեկացել էի «Դրօշակի» գլխաւոր խմբագիր՝ Արտաշես Շահպազեանի միջոցով), ուրկէ կը պարզուի, որ հայրդ ու հօրեղբայրդ եղած էն դաշնակցական արժանաւոր ազգային գործիչներ: Աւելի հասկնալի կը դառնայ մեզի համար, թէ ինչո՞ւ դուն մինչեւ վերջ հաւատարիմ մնացիր քու մարդկային ու ազգային սկզբունքներուդ... կենսական համարելով ձեւաւորել *«Հայ ազգային յանձնառու քաղաքացի»*, որուն պակասէն կը տառապի այսօր Հայ ազգը, ըլլայ հայրենիքի թէ Սփիւռքի ողջ տարածքին...: ■

Միշտ հաւատարիմ մնալ

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Միշտ հաւատարիմ մնալ... առանց չակերտներու, քանի որ մեր երդումին չէ, որ կ'ակնարկեմ առաջին հերթին:

Այս յօդուածը գրելուս դրդապատճառը չեն ՀՅԴ 135-ամեակին առթիւ այլազան տեղեր մեր վերջերս ապրած այն յուզիչ պահերը՝ նորընծաներու երդման արարողութիւնները, որոնց ընթացքին անոնք, կրկնելով իրենց կուսակցական կնքահօր կարդացած տողերը մեր կանոնագրէն՝ հանդիսաւորապէս կ'երդնուն «պատուոյս եւ հայրենիքիս վրայ միշտ հաւատարիմ մնալ...»: Այո, **միշտ** հաւատարիմ մնալ: Կրկնապէս կը շեշտեմ «միշտ» բառը, քանի որ ի՞նչ հաւատարմութիւն, եթէ մնայուն չըլլայ ան:

Յօդուածիս դրդապատճառը «Մանանա»-ն է՝ Գրիգոր Զօհրապի գրութիւնը իր իսկ խմբագրած «Մասիս»-ի մէջ, 27 մարտ 1893-ի առաջին էջին վրայ, զոր վերստին կամ գուցէ առաջին անգամ կարդալու բախտաւորութիւնն ու հաճոյքը ունեցայ բարեկամի մը նախաձեռնութեան շնորհիւ: Ի՞նչ կ'ըսէր ականաւոր գրողը.

– [...] բարոյական մեծ ու շատ անխախտ նկարագրի տէր մարդ պէտք է ըլլալ՝ անյողդողդ մնալու համար այն չուկէտին [մեկնակէտին] վրայ որ, ամեն ազդեցութենէ անկախ, որոշուած էր եւ որ ահա՛ անզգալաբար, մեղմիւ կը կորսուի, աչքէ անհետ կ'ըլլայ բոլորովին:

Զօհրապի ուշագրաւ յօդուածը կը վերաբերէր թերթերուն, անոնց խմբագիրներուն կամ աշխատակիցներուն, որոնք շահադիտական նպատակներով կը փոխեն իրենց սկզբնապէս պաշտպանած մտքերը՝ աւելի մեծ թիւով ընթերցողներու հաճոյանալու եւ աւելի թերթ ծախել կարենալու համար: Զուտ շուկայական մօտեցում, որ խոտոր կը համեմատի ընկերային վսեմ նպատակ մը հետապնդող մամուլին:

Զօհրապի այս խօսքերը, սակայն, մենք կրնանք տեսնել աւելի ընդհանրական շրջածիրի մը մէջ:

Հաւատարմութիւնը բարոյական յանձնառութիւն մըն է: Կարելի չէ զայն պարտադրել: Այն հիմնուած կ'ըլլայ հաւատամքի մը, համոզումի մը, կամ նոյնիսկ տեսակէտի մը վրայ: Անհատական գետնի վրայ ան կը դրսեւորուի ընտանեկան շրջանակին մէջ, արեան կապովն իսկ՝ ծնողքին ու զաւակին միջեւ, զաւակներուն միջեւ, ապա անոնց եւ իրենց ընկերներուն միջեւ, այլեւ այր ու կնոջ միջեւ: Ի զուր չէ, որ ամուսնութիւնը հանդիսաւոր ծիսակատարութեամբ տեղի կ'ունենայ: Խոստում մըն է, որ նորապսակները կու տան իրարու՝ հաւատարիմ մնալու ամբողջ կեանք մը, տէր ըլլալու իրարու ամեն տեսակի դժուարութիւններու կամ փորձութիւններու դէմ-յանդիման: Շատեր կը ձախողին, ճի՛շտ է, չըլլալով այդ «անխախտ նկարագրի տէր մարդը», տեղի տալով ինչ-ինչ պատճառներով՝ այլի մը առկայութեան, հիւանդութեան թէ ուրիշ ազդակներու:

Այդ հաւատարմութիւնը կը պահանջուի նաեւ գործի ասպարէզի մէջ, թէկուզ առանց ծափ ու ծնծղայի, քշոցի ու կերոնի, զանոնք փոխարինելով յաճախ գրաւոր համաձայնագրերով՝ գործի գաղտնիքները այլոց չփոխանցելու յանձնառութեամբ եւ այլն:

Նոյնն է պարագան անհատի մը ու որեւէ կազմակերպութեան միջեւ պահուելիք հաւատարմութեան, որովհետեւ որեւէ գործ չ'իրականանար եթէ այդ հաւատարմութիւնը գոյութիւն չունենայ: Կազմակերպութիւնը հաշիւ պիտի ընէ անհատին ներդրումին վրայ, առանց որուն կարելի չ'ըլլար ծրագիր կազմել, ժամանակացոյց դնել, աշխատանք յառաջ տանիլ:

Բայց հաւատարմութիւնը երկկողմանի իրադրութիւն մըն է: Եթէ անհատը յանձնառութիւններ ունի կազմակերպութեան հանդէպ, փոխադարձաբար այս վերջինն ալ ունի անհատին հանդէպ, այդ ըլլայ ասպարէզային թէ ընկերային գետնի վրայ: Կազմակերպութիւններն ալ կրնան թերանալ ու պատճառ հանդիսանալ, որ իրենց պաշտօնեաները կամ անդամները իրենցմէ հեռանան:

Այս բոլորը հասկնալի են, բացատրելի:

Ինչ որ ամբողջովին կը տարբերի միւսներէն, այդ ալ գաղափարական հաւատարմութեան հարցն է, եւ կասկած չկայ, թէ յատկապէս այդ գետնի վրայ եղած ըլլալու է Զօհրապի ընդվզումը այն օրերու կարգ մը լուրջ թերթերէն եւ ոչ թէ առեւտրական նպատակներով հրատարակուող թերթուկներէն: Մեկնակէտը չմոռնալո՛ւ հրամայականն է, որ կը նշէ ան արդարօրէն: Կարելի չէ օր մը հանրապետական ըլլալ, օր մը թագաւորական, օր մը դրամատիրութիւնը պաշտպանել, օր մը ընկերվարութիւնը, եւ այդպէս իրարու հակադրուող սկզբունքներ մատուցել հանրութեան:

Գաղափարական հաւատարմութիւնը բարձրագոյն մակարդակն է հաւատարմութեան: Բարձրագոյն հասարակական յանձնառութիւնը: Եւ ի զուր չէ, որ Երդումը այսպէս ալ կը բանաձեւուի.

– Կ'երդնում պատուոյս ու հայրենիքիս վրայ՝ միշտ հաւատարիմ մնալ Հայ յեղափոխական դաշնակցութեան Ծրագրին, Կանոնագրին ու որոշումներուն եւ բոլոր ուժերովս – իսկ եթէ հարկ ըլլայ՝ նաեւ կեանքիս գնով – ծառայել Հայաստանի եւ հայութեան ազատագրութեան դատին:

Ունենանք այդ մեծ ու շատ անխախտ նկարագիրը՝ տէր ըլլալու մեր այս երդումին: ■

Վահան Նավասարդյան

ՊԱՅՔԱՐԻ ՈԳԻՆ



Քաղաքական պայքարը, ասացինք արդեն, որ ունի միանգամայն ուրույն հոգեբանություն, ղեկավարվում է իր ինքնահատուկ տրամաբանությամբ և ենթարկվում է իր միանգամայն ուրույն օրենքներին:

Քաղաքական պայքարը տատանումներ չի սիրում, խամրում է այնտեղ, ուր կասկածն է բույն դրել, նա չի բեղմնավորվում ու չի փարթամանում այն մարդկանց ջանքերով, որոնք ամեն եկեղեցի կարող են ոտք դնել, առանց որևէ մեկի ուխտավորը դառնալու:

Քաղաքական համոզմունքը վերջին հաշվով հավատքի խնդիր է, որ կարող է պայքարողին լծել ստեղծագործ աշխատանքի ու նրան զոհողության մղել, եթե հավատքը զորավոր է, և մեղկության գիրկը նետել նրան, եթե հավատքի հիմքում «որոնումի» ու կասկածի որդն է բույն դրել:

Եվ այդ պատճառով՝ քաղաքական գործչից պահանջվում է մոլեռանդություն, որ հատուկ է բոլոր ճշմարիտ հավատացյալներին:

Ով այս մոլեռանդությունը չունի, ով զուրկ է խանդավառող կրքից, որի հոգին հրավառված չէ իր գաղափարի կրակով, ով պատրաստ չէ անվերապահ զոհողության, նա մի ավելորդ քար է քաղաքական կուսակցության պայքարի ճանապարհին ընկած, որ պետք է առնել և առանց տատանումի ու խղճահարության մի կողմ շպրտել:

«Հավատքը լեռներ կարող է շրջել»,– ասում է ժողովուրդը, և Գործնական Իմաստունը գիտի, անշուշտ, թե ինչու է ասում:

Ահա թե ինչու քաղաքական պայքարը չի կարող տարվել սպիտակ ձեռնոցներով ու սպիտակ դրոշի տակ:

Փափկանկատություններն ու թուլությունները հատկապես այս ասպարեզում մեծագույն սխալներից մեկը պիտի համարել: Երբեք չպիտի մոռանալ, որ հոգեշահ հորդորների ու քրիստոնեական ներողամտության տեղը մատուռն է, բայց ոչ երբեք՝ քաղաքական պայքարի մրցադաշտը:

Ճիշտ եմ կամ ես, կամ իմ հակառակորդը:

Անկարելի է, որ միաժամանակ ճիշտ լինենք երկուսս միասին՝ և նա, ով իմ դեմ է պայքարում, և ես, որ անկարող եմ իմ հակառակորդի հարվածներին տոկալ:

Ուստի, քանի որ այս է մեր մոլորակի գաղտնիքը, ապա պետք է սրբել նորից ու հիմքից, ավլել, ըստ Տուրգենևի խոսքի, ոչ թե վերևից՝ թեթև սահող ցաքանով, այլ վարից՝ հիմքից քերող արորով:

Այսպես պիտի վարվի նաև Դաշնակցությունը՝ ներսից ու դրսից դարան մտած իր հակառակորդների հետ:

Աղետներ առաջին անգամը չէ, որ տեսնում է հայ ժողովուրդը ու առաջին անգամը չէ, որ աղետվում է նաև Դաշնակցությունը: Այս սարսափներից մեզ փրկել են նրանք, որոնք կամք են ունեցել հանրության զոհասեղանին դնելու իրենց ողջ ունեցվածքը, իրենց բովանդակ կյանքը, իրենց ողջ էությունը: Նրանց անունը լեգեոն է. այդ ինքը՝ հայ աշխատավոր ու բազմաչարչար ժողովուրդն է, որ դժոխային պայմաններում և իր անձնուրաց կուսակցության ղեկավարությամբ, այսօր տանում է անհավասար կռիվ՝ իր լուսավոր ապագայի անխորտակելի հույսով ու այն անմար հավատով, որ ժամանակավոր պիտի լինի նաև այսօրվա սարսափը, և մենք մոտ ապագայում նորից պիտի խմբվենք մեր հայրենիքում՝ գործելու և պայքարելու համար ազատ ու հարազատ միջավայրում, հանուն մեր ժողովրդի ու երկրի լիակատար ազատության:

Ահա Հ.Յ. Դաշնակցության անելիքը:

Կահիրե 22 փետրվարի, 1924

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԵԼԻՔ ՈՒՆԻ, ԹԵ ՉՈՒՆԻ, ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ,

Պայքարի ոգին, գլ.4-րդ էջ 166-167, Երևան 2016



1879 թ. մարտի 19-ին ծնվել է Հայաստանի հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանը

ԴՐՕՇԱԿ